[illegible]
5 I·5

ՕՐԱԳՐՈՒՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

1859.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻԳՆԱՅՐ.

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 1.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Հայերի կռիւը Մարգուեհան մէջ, Ս. Նազարեանցի . . . . . 1—14.
Ընթար, Գ. Յ. Պախալեանի . . . . . 15—41.
Նկատողութիւնք ազգային Թէատրոնարեւի վերայ, Ս. Նազարեանցի . . . 42—59.
Մի զարմանալի պատմութիւն, Գ. Յ. Պախալեանի . . . . . 60—65.
Յիշատակարան Կ. Էմմ. օրագրական Թերթերից . . . . . 66—79.
Մահացուցակ Աբրահամ Պօղոսեանցի փաստաբանի . . . . . 80—81.

ՄՈՍԿՎԱ,

Imprimerie d'Ernest Barfknecht.

1858.



ՅՈՒՆՎԱՐ 1859 ԹՈՒԱԿԱՆԻ

ՄԵՐ ՈՒՆԵՐԱՑ ՍՐՏՈՎ ՍԻՐԱԾ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

ՀՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

ՋԵՐՄ ԱՂՕԹՔՈՎ ՈՒ ՄԱՂԹԱՆՔՈՎ

ԸՍ ԸՄՆԱՆԱՒԵՐՋՐԻՆՂ

ՆՈՑԱ ԻՄԱՑԱԿԱՆ ՈՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՑԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Ժամայուզի սլաքը աւարտելով իւր ընթացքը, խորհրդաւոր ձայնով հնչեցնուամ մեր ականջին ժամանակի զանգակը, թէ ահա հին տարին բաժանվեցաւ մեզանից և լուանուամ մեր հաւատը մի նոր կենդանութեան առաւօտ։ Եւ այդպիսի լսումեմ ահա բարեկամների շտապով անց ու դարձը, նոցա սիրախառն և դիմախառն մաղթանքը միմեանց համար, նոցա հոգեցաց խօսքերը և սրտի ուրախ ուրախ զեղմունքը։ Հետևակայլն հրաւարակողը այս բոլորիս մեռաւորական թևերի վերայ սլանալով դէպ ի իւր ծանօթ ու անծանօթ հեռաւոր բարեկամքը, կամենուամ հաւատացանել նոցա իւր բարեացակամութեան պատրաստ,

յայտնելով նոցա իւր սրտի ուրախակցութիւնը, և եղբայրաբար մտածելով նոցա հետ մի քանի խորհրդաւոր մտածութիւններ, որ այս հանդիսաւոր ժամուս ընդարձակումն նորա սիրտը:

Ժամանակը թևաւորված թռչում է, և մեր կեանքի օրերը նորա հետ միասին, ամենայն ժամ մի քայլափոխ մօտեցնելով մեզ գերեզմանի դրանը: Նկէք ասա, մեր աղնիւ սիրելիք, մի քանի րոպէ ուշ հաստատունք այս տեղ և իրրև բանական էակներ, իրրև մտածող քրիստոնեայք, իրրև անդամք մի ազգային հասարակութեան, առաջարկենք մեզ այս հարցուածը. ուսո՞ւ է մեր գալուստը և ո՞ւր է մեր երթը: Ոչ՛նչ բան Աստուծոյ ընտրեցած աշխարհումը անխորհուրդ չէ, ամենայն բան ունի մի նպատակ և ծառայում է մի վախճանի, որ կարդել է մեր ամենիմաստ Արարիչը: Նա մարդս, արարչագործութեան պսակը, և մարդս որ իրրև քրիստոնեայ լինում է երկու աշխարհի քաղաքացի, և մարդս որ անդամ է մի ազգային հասարակութեան, ունի իւր խորհուրդը, և մի այնքան խորին ու բազմամանեայ խորհուրդ, ինչքան որ մեծ ու փառաւոր էր նորա կոչումը: Վասնեմ, մեր սիրելի Հայ եղբարքը մի փոքր ծոյլ են մտածութեան մէջ և անցուցանում են իւրեանց օրերը ըստ մեծի մասին մի քաղցր մտաւորական քնի, մի մտաւախտային դրութեան մէջ, բայց թո՛ղ ղգաստանան դոքա և սրտի ականջով լսեն մեզանից, որ մարդուս միակ առաքինութիւնը, միակ արժանաւորութիւնը որով նա որոշվում է անբան արարածներից և լինում պատկեր Աստուծոյ, բանականութիւնն է, և բանականութիւնը մտածութիւն է, և մտածութեամբ միայն լինում մարդս մարդ. այն էակը որ ունի անմահ հոգի, մի յաւիտենական կոչումն որպէս քաղաքացի այս և միւս աշխարհի: Նա վեց հազար տարի է, որ աշխարհս կայ. այնքան դարեր ու ազգեր եկել ու գնացել են, շատ կամ փոքր գործ կատարելով մարդկութեան հրապարակի մէջ, ամեն մինը լցուցանելով այն պաշտօնը, որ իմաստուն աշխարհատնտեսը կարգել էր նոցա համար, ամեն մինը ծառայելով մի գաղափարի և իրագործելով այդ գաղափարը իւր մասնաւոր, քաղաքական և իմացական կեանքի մէջ: Հելլենացիք աւանդել են բոլոր գալոց ազգերին մի մշանջենաւոր, յիշատակի արժանի խրատ. նոքա ապացուցել են թէ մարդս կա-

լող է լինել մարդ և քաջ պատերազմող, նա կարող է խաղաղաւէտ ձարտարութիւնը զուգաւորել պատերազմի վաստակների հետ, սրտի քնքշութիւնը հոգու ամրութեան հետ և չափաւորել միապետութիւնը հասարակապետութեամբ: Այո՛ շատ աշխարհներ ձեռք բերեցին ձարտարութիւնք, բայց ձարտարութիւնը կենդանի էր միայն Հելլենացւոց մէջ. նոցա ձարտարապետքը սովոր էին ձեւակերպել այն տեղ, ուր կործանուէին աշխարհի տիրապետողքը: Հռոմայեցիք ցոյց են տուել անընդհատ շարակարգ կռիւներ, պատերազմներ և յաղթութիւններ, մի այրական համբերատարութիւն բազմի բոլոր փոփոխութիւնների մէջ, մի հետ պնդեցէք, խնամատուն խստութեամբ յառաջացուցած մօտակցութիւն տիրապետած աշխարհների մէջ, և մի տիեզերական իշխանութիւն որ, թէև պատերազմելով նոքին փոթորիկների և արտաքին թշնամիների հետ, այնու ամենայնիւ մի պինդ և ամուր բնաւորութեամբ հաստատ ճնայ աւելի երկար, քան թէ որ և իցէ միւսը: Այն քաղաքը Տիբեր դեռ վերայ ունէր բոլոր զօրեցկութիւնքը և բոլոր սարսափելի ոգեղութիւնքը միապետութեան, ազնուապետութեան և ժողովրդապետութեան. Ալեքիոս Պուբլիկօլա և Վեցեմիլիր Ապպիոսը, Կատոնը և Վերրէսը, Ցերոնը և Մարկոս Ընտոնինոսը կանդնած են այն տեղ միմեանց հանդէպ. շատ անգամ չիմաստաբար կատաղած է խառնիճաղանճը, երբեմն խոհեմաբար գործ է կատարել ժողովուրդը: Հռոմայեցոց սկզբնական վայրենաբարոյութիւնը չեզոքացաւ դէպ ի զօրութիւն, զօրութիւնը դէպ ի նրբութիւն, նրբութիւնը դէպ ի զեղուութիւն, զեղուութիւնը դէպ ի թուլութիւն և թուլութիւնը տապար նոյանց դէպ ի կործանութիւն: Այոց ազգը այն հնութեան գաղտնութեամբ, երբ նա ունէր փոքր ի շատէ քաղաքական կեանք, թագաւորութիւն և քաղաքական անտեսութիւն, ունեցել է արդարև քաջ տղամարդիկ, անձնադիր հայրենասէր անձինք, բայց միաբանութիւն, համաձայն և համաշունչ գործակատարութիւն շատ փոքր, կամ երբէք ոչ. ազգի նախապարական անունը, որոնց թիւը Այոց պատմութենից տեսանվում մինչև 240, անխորհրդաբար աշխատել են միշտ և միշտ սահմանափակել ու նեղացնել թագաւորի իշխանութիւնը, և այդպէս թուլացնել բոլոր թագաւորութեան զօրութիւնը. շատերը իւրեանց

անձնական օգուտը բաժանելով ազգի օգտից, անկիա պատուա-
սիրութեան պատճառով, այս մասնիչ ու դարանագործ են և-
դել միմեանց, և այդպես վնասել են և ինքեանց և հայրենիքին:
Ուրայոյ Մէհրուժաններ ու Վասակներ, քաջ և հոյակապ
հայրենասէր Վարդաններ ու Ամբատներ կանդնած են այս տեղ
միմեանց հանդէպ: Ո՛չ ոք կարող չէ ուրանալ Հայկի քա-
ջութիւնը և արիական գործերը պատերազմի մէջ. բայց ցաւելի
է ասել, որ այդ առաքինական յատկութիւնքը աւելի օգտել
են օտարներին, քան թէ ինքեանց. մանաւանդ նրանց քաջութիւն
առանց միաբանութեան, առանց կամքերի, սրտերի և ձեռքերի
միութեան, առանց մի ընդհանուր գաղափարի, որ պիտոյ է լի-
նէր հայրենիքի պահպանութիւնը, ոչինչ կարողացել չէ, և
կարող ևս չէր յառաջացնել: Այս է ահա պատճառը, որ
Հայոց ազգը այդպէս եղած է մի քաջ ազգ, բայց համարեա
թէ նոյնպէս միշտ թոյլ, օտար իշխանութեան ստրուկ և հնա-
զանդ ազգ. և աշխարհի կարգը միշտ այնպէս է, որ մի մարդ
կամ ժողովուրդ չկարողանալով իւր բանականութեամբ կառա-
վարել ինքը իւր անձը, պիտոյ է հարկաւորապէս հնազանդի
օտարին: Ով չէ կարող լինել իւր առաջնորդը, նա կարօտ է
օտարի առաջնորդութեանը: Ունինք մոռանում այս տեղ և մեր
Հայկի աշխարհագրական դրութիւնը, նոցա կացութիւնը եր-
կու խիստ այրող կրակի մէջ, մի կողմից Պարսից հալածասէր և
քրիստոսասեաց ազգի, և միւս կողմից Յունաստիկոս դաւանան
Կիւզանդացւոց մէջ. այսպիսի դրութեան մէջ կարող էր միայն
միաբանութեան և ազգասիրութեան հոգին փրկել հայրենիքը.
Հայք իրրև քրիստոնեայք պիտոյ է միշտ հաւատարիմ դաշնա-
ւոր մնային Յունաց հետ, վիհանձնութեամբ ամենով Յու-
նաց կրօնական նեղսրտութեանը, և տեղիք չտալով մի քանի
դաւանասրտական տարբերութիւններին, որ կային Յունաց ու
Հայոց մէջ. բայց ի քրիստոնէական եղբայրասիրութենից որ պիտի
ներող լինել դէպ ի տեղատիքը, պատրաստական էին Հայք իւր-
եանց ազգի պահպանութեան համար, իւրեանց բնական դաշ-
նակից ու թիկունք համարել Կիւզանդիոնը. բայց Հայոց պօ-
լոմիկան (քաղաքագիտութիւնը) այդպէս չէ եղել. ինքեանք
իւրեանց դիտով տեսը ու թոյլ լինելով, կրակատաշտ Հալա-
ծասէր Պարսիկը դրացի լինելով նոցա և հրամայող նոցա վի-

լոյ, Հայք արդարև երբորդ Յակոբոսի օրհրամբ, որին ասուած էին Պարսիկները Նջդեդկրդ, անվերհնդ քաջութեամբ իմացել են թափել իւրեանց արիւնը, յանձն առնուլ նահատակութիւն ու մարտիրոսութիւն իւրեանց հաւատոյ համար, բայց չէն իմացել պահպանել իւրեանց կեանքը իւրեանց հայրենիքի պահպանութեան համար. կրօնը ազգի համար էր և ոչ թէ ազգը կրօնի համար. պահպանվելով ազգը, կը պահպանվէր ու կը պաշտպանվէր և կրօնը: Նոյն ինքն քրիստոնէութիւնը երկար տարի մնաց աշխարհի վերայ որպէս մի հալածուած հերձուած, մինչև որ Կոստանդիանոս մեծի ձեռքով բազմելով թագաւորական աթոռի վերայ կարողացաւ զօրութիւն ստանալ և ներգործել մարդկութեան վերայ. Թող քրիստոնէութիւնը քարոզէր մարդկութեանը երկնային ճշմարտութիւններ, ընդհանուր եղբայրսիրութիւն և հաւասարութիւն ազամորդիների մէջ, բայց այդ ուսումը մնալով մի առանձին, հալածուած ընկերութեան սեփականութիւն, մնալու էր մարդկութեան համար միշտ անօգուտ և անպատուղ: Հայք քրիստոնեայք են հաւատով. այդ շատ փոքր բան է, մի ազգային անուն, մի ազգային պատիւ ունենալու աշխարհի երեսին, ազգերի մէջ. հաւատը առանց իշխանական գաւազանի թևաբերութեան, խաչը առանց սրի ետևը է, և չէ՛ կարող ազգաշինութեան պատճառ լինել: Նէթէ սուտ է մեր առածը, Թող ցոյց տան մեզ աշխարհի երեսին մի լուսաւորեալ, քաղաքացեալ, հզօր և հրամայող ազգ, որ միայն կրօնի զօրութեամբ, առանց քաղաքական կեանքի և մեծութեան, հասած լինէր որ և իցէ ազգաշինութեան, բարեկարգութեան և ազգային արարքի մարդկութեան ազգերի մէջ: Կարթագոս Պարսիկը իւր ազգով մահմեդականութեամբ, բայց որովհետև ունի որ և իցէ, մեծ կամ փոքր, Թոյլ Թէ զօրաւոր քաղաքական կեանք և Թագաւորութիւն, ունի աշխարհի վերայ աւելի պատիւ քան Թէ Հայը, Թող դորա քրիստոնէութիւնը լինէր առաւել ուղղափառը, առաւել պատուականը, ինչպէս մի քանի տղէտ անձնապաշտներ ու մնապարծներ կամէին միտեանց հաւատացնել, առանց կարողանալու մի բան յառաջացնել դորանով: Նոյն իսկ Տաճիկը իւր Մուհամմեդեան մահմեդականութեամբ, որ մի աւելի արժանաւոր բան չէ քան Թէ Հրէաները ասիական Պարսկաստանի մէջ, յաւելացնելով դորա

վերայ որ և իցէ քաղաքական կեանք, իշխանական գաւազան, ազգային անուն ու պատիւ, նոյնպէս աւերն պարծանք ունի աշխարհի վերայ եղած ազգերի կարգումը, քան թէ Հայք: Եւ ի՛նչպէս են մտածում մեր սիրելի Հայերը. Թագաւորութիւն, քաղաքական կեանք, ազգային պատիւ ու փառք ասած բաները չեն միայն մնոտի, արատաբեր աշխարհական փայլողութիւն, որից և կարելի է հրաժարվիլ անվնաս. ո՛չ, այդպէս չէ. Թագաւորութիւն ասած բանը է մի ազգի խելք ու բանականութիւնը տեսանելի և զգալի կացուցած նորա քաղաքական կարգերի մէջ, նորա օրէնքների, կառավարութեան և դաստիարակութեան ընդհանուր մէջ: Եւ Թագաւորութիւնն է, որ իբրև մարմնացած հոգի և զօրութիւն, գործ է կատարում ազգի թէ նիւթական և թէ իմացական բաղդատութեան համար. Թագաւորութիւնն է որ ամենայն բան ազգի մէջ կարգի ու սահմանի տակ է պահում, և յանուցիչ զօրութիւնքը ազգի միաւորելով և բոլորելով մի ամբողջութեան մէջ, ուղղեցուցանում դէպ ի մի հասարակաց նպատակ. ամենայն մարդ իբրև մի օղ Թագաւորութեան շղթայակապի մէջ, իբրև անդամ մի ազգային հասարակութեան ունի իւր որոշեալ պաշտօնը, և այդ պաշտօնի մէջ ծառայում է իւր յատուկ, և ընդհանուրի օգտին, երկուքը միշտ անբաժան միալով միմեանցից. հպատակը, որ ծառայութեր Թագաւորութեան օգտին, պիտոյ է և հնարք ունենայ պահպանելու իւր կեանքը, ապրելու ֆիզիքապէս. նորա աշխատութիւնքը դէպ ի հասարակաց բարին պիտոյ է և նշանաւոր կացուցանվին պատուով ու մեծարանքով: Մի այդպիսի բարոյական կարգից, որին ասումենք այլ բառով Թագաւորութիւն, զրկ է Հայոց կեանքը. այս բանը յայտնի է ամենեցուն և ուրանալ կարող չէ ոչ ոք: Եւ այդ բարոյական կարգի չլինելութիւնը Հայոց մէջ թէ ի՛նչ հետևանքներ ունի, հերիք էր միայն ասել այս տեղ, որ ոչինչ ազգի մէջ ուսմունք և գիտութիւնք ծաղկած չեն, ուր չէ եղել նոցա վերայ մի կարող իշխանական գաւազանի հովանաւորութիւն, ուր չէ եղել մի ազատ քաղաքական կեանք: Այս բանս ամենևին հաստատվում Հայոց պատմութեան հին դարերի փորձով և բոլոր հայկական դպրութեան և մատենագրութեան օրինակով:

Խայց, Հայոց ազգը այնքան զարերի ու տառապանքների միջով անցանելով և հասանելով այս օրին, իրրև մի ժողովուրդ, որ բաղկացնում է դոնեայ չորս միլիոն հոգի, որոնցից մօտ 500,000 հասանում են Ռուսաստանին, իսկ միւսերը և առաւել մեծ մասը Տաճկաստանին (Եւրոպայի ու Ասիայի մէջ) են պատկանում, թո՞ղ այն ցանուցիր Հայոց հասարակութիւնը Պարսկաստանի մէջ, Ընդլիական հրամանի տակ Հնդկաստանում, Եգիպտոսի վերայ, Աֆրիկայում, այո՛ մի ժողովուրդ, որ Աբրահամից մինչև Քրիստոսի ծնուդեան ծառայուած է — Հայոց ազգը, որին ժամանակը բաղդի այնքան հարուածների տակից խնայելով հասուցել է մեր ժամանակին, կորած չէ, եթէ ինքը իւր անմոռութեամբ չկամի կորուսանել իւր անձը: Հայոց ազգը կորած չէ: Նա ունի աշխարհի հրապարակի մէջ կատարելու մի օր մի մեծ և գեղեցիկ խորհուրդ: Եթէ քննենք Հայաստանի աշխարհագրական դրութիւնը, ապա երևում է նա արդարև մի խորին ուշադրութեան արժանի աշխարհ մարդկութեան վաղաժամանակեայ անցքերի մասին: Այնքան ազգերի գրոյցները, մանաւանդ թէ սուրբ գրքի վկայութիւնը մատնացոյց են առնում, որ այս տեղից դուրս են եկել ազգերը, եւրոպականքը յատկապէս, որ հաստատեն իւրեանց համար այժմեան բնակատեղիքը: Այն զրոյցը, թէ այն սուրբ սարը, մեծամեծ Մասիսը եղել է այն տեղը, ուստի համաշխարհական ջրհեղեղից յետոյ մարդկութեան ազգերը որոնել են իւրեանց համար հայրենիք, ունի արդարև իւր խորին պատմական արմատը: Այլև Հայաստանը աւելի յետոյ, արդէն ստոյգ պատմական ժամանակում, եղել է միաւորութեան տեղի, անդքի ձանապարհ մեծամեծ տիեզերական թագաւորութիւնների համար: Խեթ-Նեբրովթը, Նինոսը, Շամիրամը, Աեզոսթրիսը այս տեղից ձանապարհ են բացել իւրեանց համար, կամ թէ փորձել են այս տեղով անցանել դէպ ի հիւսիս: Այս տեղ են կատարվել պատերազմերը Ասիայի տիեզերական իշխանութեան մասին Ասորոց և Մարաց, Մարաց և Պարսից մէջ:

Դարիւսը և Քսերքսէսը այս աշխարհի վերայով կատարել են իւրեանց պատերազմական ձանապարհորդութիւնը դէպ ի արևմուտք, և սորա հակառակ, Աղեքսանդր Մակեդոնացին անցաւ այս տեղից տիրապետելու արևելքին և հիւսիսին: Այս

տեղ էր Հռոմայեցւոց ու Պարթեւացւոց ձակատամարտը։ Այս տեղ, Սկհավէնդ սարի մօտ, Արաբացիք պատերազմելով ձեռք բերեցին արեւելքի իշխանութիւնը, և դարձեալ Հայաստանի միջով ներս յարձակվեցան այն ազգերը, որ սկսող է կործանէին Խալիֆաթը։ Մինչև այս տեղ ներս մտաւ Եւրոպա (խաչակիր պէսուղքը)։ Այս դաշտերով ներս մտան Մօնղօլները և Թաթարները, Ձինգիսխանն ու Թամուրլանը։ Այս տեղ է եղած հարիւրաւոր տարիներով, երկպառակված մահմետականութեան, Սունիներին և Շիաներին կատաղութիւնը, և նոր ժամանակուան քրիստոնէութեան ու մահմետականութեան մէջ, Ռուսաստանի և Պարսկաստանի ու Տաճկաստանի մէջ։ Արդեօք միանգամ չէ՞ր սիրտակեղեք այս տեղից քրիստոնէութիւնը և լուսաւորութիւնը Ասիային։

Այս ինչ պաշտօն աշխարհի մէջ ունէր լցուցանելու այն ազգը, որին վերնակվել է այդ տիեզերական անցքերի տեսարանը որպէս հայրենիք։ Այս ազգը, մի վաղաժամանակեայ ազգ, պատմական արիւնից, այնպիսի ականաւոր բնաւորութ ձիւքով թէ մարմնաւոր և թէ բանական մասին, ինչպէս շատ փոքր ազգեր Ասիայումը, երբէք եղած չէ այնքան կարող ու բազմաթիւ, որ զրաւած ու պահպանած լինէր մի ընդարձակ թագաւորութիւն. սորա հակառակ, շատ փոքր ազգեր կան, որ հազարաւոր տարիներով տիրապետած լինէին համբերել այնքան տխուր պատահարների, այնքան արիւնաշաղախ և ահարկու հարատահարութիւնների և տարիութեան, ինչպէս Հայերը, և այդ բոլորը քան մեծի մասին այնպիսի ազգերի կողմից, որ թէ բանական և թէ մարմնաւոր կերպով շատ ցած էին Հայերից։

Նայց Հայոց ազգը այս բոլորում երեւումէ կանգնած իւր բազուկ գլուխակեաւ վերայ, մի այնպիսի դրութեան մէջ, որ պիտոյ է փոխվի դէպ ի լաւը։ Տարութեան կայանքը հանած են Հայերի վերայից իւրեանց հայրենիքումը. նոքա կարող են այժմ շունչ առնուլ և արդէն կարելի է նկատել, թէ մի հոգեղէն շարժողութիւն կատարվում ամենայն տեղ Հայերի մէջ. նոցա մէջ գործել է մի անուրանալի ձգտողութիւն սերտանելու իւրեանց Եւրոպայի բանական կրթութիւնը։

Ամենայն նշաններից երեւումէ, որպէս թէ աշխարհատնտես նախանձամութեան խորհուրդը, Հայերի գալոց բազդաւորու-

թիւնը անվիջապէս յայտնվում էր, երբ որ աչքի տակ էինք ձգում այժմեան որպիսութիւնը և պրոթիւնը հայկական ազգի: Ժողովրդի հայրենիքը այժմ ազատված է ստրկութեան լծից, նա կապակցած է մի եվրոպական, լուսաւորութիւն ընդունող տէրութեան հետ, ժողովրդի բոլոր իմացական ըօրութիւնքը կարող են այժմ ազատապէս աճել և զօրանալ. Եվրոպան բաց ու արձակ է Հայերի առաջև, նորա կարող են մասնակից լինել նորա կրթութեանը և լուսաւորութեանը:

Ընդարձ, ինչպէս ասվեցաւ վերևում, Հայոց ժողովրդի մի փոքրիկ մասը միայն բնակում հայրենական հողի վերայ, առաւել մեծ և երևելի մասը տարածված է բոլոր Ասիայի մէջ, Եվրոպայի մեծ բաժիններում, և Աֆրիկայի մէջ. և թէպէտ այսպէս ցիրուցան է Հայոց ժողովուրդը, այնու ամենայնիւ ունի նա մի շատ մօտ և ամուր կապակցութիւն հայրենական աշխարհի հետ. նա ունի ոչ թէ միայն իւր ազգային հարաստատ, այլև իւր առանձին, անքակտելի կրօնական կենտրոնը միութեան: Այս կենտրոնը է Էջմիածնի Պատրիարգական աթոռը, որ արժանաւոր կաթողիկոսների իշխանութեան տակ ունեցել է միշտ մի հրաշագործ ազդեցութիւն բոլորի վերայ: Եվրի քան թէ հազար տարի յառաջ, սկսել է ազգը ցան ու ցիր լինել. հայրենի աշխարհի հրամայողքը շատ անգամ փոխվել են, պատրիարգական աթոռը շատ անգամ ընկել է ստրկութեան և խորին անապատքի տակ, շատ անգամ երկար միջոցներով թէ իմացական և թէ բարոյական մասին աւերվել է. այնու ամենայնիւ երբէք պատահվել կամ թէ թուլացել չէ այն կապը, որ պահում միասին ազգի ամենահեռաւոր անդամները: Հայերը միշտ ունեցել են իւրեանց համար և ունին այժմ էս մի անդժրելի սէր դէպ ի հայրենիքը, դէպ ի իւրեանց լեզուն, իւրեանց սովորութիւնքը, դէպ ի քրիստոնէութիւնը և նորա եկեղեցական ու ազգային կերպարանագործութիւնը:

Հայոց ազգը, վերաբերութեամբ դէպ ի Ասիա, ունի մի մեծ և հոյակապ կոչումն. նորան կարելի է համարել այն խաղը, որ դրած է Ասիայի հոտյոտ նիւթերի մէջ, որ հոգիները կեանքի համարեա թէ մեռած ծիլերը միանգամայն զարթեցնէ և կենագործէ. և այդ բանի մէջ կարելի չէ ուրանալ, թէ Հայոց գրութիւնը իւր եկեղեցական կենտրոնով շատ մօտ հաղորդա-

կից լինելով միմեանց հետ ազգաբար, ցուցանումէ անչափ շատ յարմարութիւնք, և երաշխաւոր է Հայերի յառաջադիմութեան համար: Նոթէ Ռուսաստանը իւր, հասարակարհական մարդկութեան մէջ կատարելի կոչումը ուղիղ հասկացել է, ապա վհհանձնութեամբ շնորհելու է Հայերին այն բանը, որ Հայոց ազգի բարեմիտ մասը միշտ ցանկացել է կարօտով ու փափաքով, այսինքն, իմնական կրթութիւն. բայց այն կրթութիւնը, որին կարօտ են Հայք, որ և միայն կարող էր ձշմարիտ լուսաւորութիւն արմատացնել Հայերի մէջ, անհատանելի է օտար ձեռքով ու ոճով. Հայերը կարօտ են մի այնպիսի կրթութեան որ իւրեանց միջից, արմատից դէպ ի վեր և ազգային հիմքից գոյանար ու յառաջ դնար. և այս գործը պարտական է կատարել Հայոց ազգը ամենևին ինքնիշխան, իւր յատուկ ձեռքի վաստակով, առանց նիւթական օգնութիւն խնդրելու տէրութենից: Մի ազգային միաբանութիւն, գործակից ընտրելով իւրեան մի ազգասէր, սրտացաւ հոգևոր դլուխ, կարող է մեծ վաստակներ վաստակել և լուծանել այն խնդիրը, որ ժամանակը և Նախախնամութիւնը դրել է Հայոց առաջև Ռուսաստանումը: Հայոց քանքարատու մանուկները, իւրեանց ուսումն աւարտած մի օրինաւոր ազգային դպրոցի մէջ, թող յետոյ իւրեանց ուսումնական կրթութիւնը լրացնելու համար, մի հինդ վեց տարի անցուցանէին գերմանական համալսարանների մէջ, ապա իրրև վարժապետք պաշտօն ստանային զանազան հիմնարկեալ ուսումնարանների մէջ: Նախ և յառաջ հարկաւոր էր Հայերին կըրթել ու դաստիարակել իւրեանց եկեղեցական պաշտօնեայքը, տալ նոցա մի բարոյական, կրօնական և աստուածաբանական կրթութիւն, որի հետ միշտ պիտոյ է լծակից մնալ կրթութիւնը աշխարհական դիտութիւնների մէջ: Մեր յոյսը մեծ է մեր ազգի բարեմիտներից, և մեր նորընտիր Կաթողիկոսից. տարակոյս չունինք, որ Նորին վհհափառութիւնը, մեր ազգի մեծ քահանայ ՄԱՏԹԷՈՍԸ, քննելով ու ճանաչելով ազգի պիտոյքը և Հայերի կոչումը արևելեան մարդկութեան մէջ, որ է, տեւեականել իւրեան եւրոպական կրթութիւնը և լուսաւորութիւնը, և տանել ու տարածել նորան ասիական մարդկութեան մէջ, ամենայն կարելի ջանք կը կամենար գործ դնել յառաջադէմ կացուցանելու իւր ազգի օգուտը և պարծանքը:

Եթէ մեր Հայերը կամէին միայն ձանաչել իւրեանց իրաւունքը և գործ դնել նորան խնամասուն շրջանկատութեամբ, եթէ մեր սիրելի Հայերը, մեծ ու փոքր, հոգևոր ու աշխարհական, ուսումնական, արհեստաւոր ու վաճառական, բազմացնելով մի սերտ, մի հոգի և մի կամք օգնելու և բարձրացնելու ազգի դրութիւնը, այլաբար յաղթէին իւրեանց դանդաղկոտութեանը և անմտաբար անհոգութեանը, և սկսանէին միաժողով խորհուրդ կառարել իւրեանց ամենահարկաւոր հոգալի բաների համար, (զոր օրինակ, նախ և յառաջ մի ազգային դպրոց աւրս մանուկների, մի այլ ազգային դպրոց, ազջկենների կրթութեան համար. երկրորդ, մի բարեկարգ տպարան, և յետոյ մի ընկերութիւն, որ պիտոյ է հոգալ ազգային դաստիարակութեան և կրթութեան համար կարևոր եղած մատենագրութիւնը ի հարկէ բանագէտ հեղինակների ձեռքով) և իսկոյն ընտրէին իւրեանց միջից արժանաւոր գործակատարք նիւթական հնարները պատրաստելու համար, մինչև կարող էին նոքա յիշեալ դպրոցների առաջարկութիւնքը, խելացի խորհրդակցութեամբ ձևացուցած, ներկայացնել սէրութեանը, հաստատելու և կնքելու համար — մի՞թէ մի այդպիսի գործ անհնարին էր, եթէ կամեցողքը և հոգաբարձուքը պատրաստ էին. եթէ կամեցողքը ձշմարտութեամբ, հոգով ու սրտով կամէին, և հոգաբարձուքը ոչ թէ խօսքով, այլ գործով ու արդեամբք պատրաստ էին: Նա Ծխական ժողովքը կարող էր լինել, իբրև միջնաւայր բոլոր Կովկասեան Հայերի համար, ամենապատշաճ տեղը այդպիսի ձեռնարկութիւնների մասին: Յետոյ միւս Հայերը ինքեանք ուրախութեամբ մանակից կը լինէին գոցա թէ արծաթով թէ միւս բաներով, որովհետև այդ դպրոցքը լինելու էին ընդհանուր ազգային դպրոցք: Նա Ուսուցանողը, մեր բարեմիտ Ուսուցանողը և մեր բարի Թագաւորը, որի բերանից դուրս են եկել այս մեծ խորհրդաւոր խօսքերը. «Да развивается повсюду и съ новою силою стремленіе къ просвѣщенію.» (Ամէն ամենայն տեղ և նոր զօրութեամբ ամէն ու զօրանայ ձգտողութիւնը դէպ ի լուսաւորութիւն). մի՞թէ կամենալու էր փակել մեր աչքս, խնայական կրթութեան ձանապարհը. և ոչ երբէք. Ուսուցանողը կարող է ամենևին անելիքայ լինել Հայոց ազգի դէպ ի նա անդժրելի հաւատարմութեան մասին, և դորա ապացոյց-

քը միշտ և հանապազ սեռել է նա: Յաճախինելը որպէս մահ-
ուեռակնք, իւրեանց յարարելութեան մէջ դնել ի Ռուսաս-
տան, թէ շատ և թէ փոքր միշտ կասկածելի են. Ո՛չ լսցիքը,
թէպետև կարող չէին պահպանել իւրեանց ազատ դրութիւնը
պարսիկներէն երեսից, այնու ամենայնիւ տպանջումեն և անզոհ
են Ռուսաստանից, որ սա բառականացել չէ մի պաշտպանողա-
կան իշխանութեամբ, այլ ստորադրել է նորանց իւր ստոյգ
հրամանակատարութեան տակ: Բայց Հայերը ճշմարտապէս և ի-
րատոյգ շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նորանց
մի անեռանելի, անարդական ստրկութենից, և բացել է նոցա ա-
ռաջև մի նոր քաղաքական կեանքի ասպարէզ: Բայց թո՛ղ մեր
Հայերը ճանաչեն իւրեանց մեծ բարերարի շնորհը և գործ դնեն
նորան արժանապէս, ամենայն պատրաստութեամբ և յօժարու-
թեամբ ընդունելով Ռուսաստանի ձեռքից եւրոպական լուսա-
ւորութեան թանգագին պարգևը և աւանդելով իւրեանց աղ-
գին այնպիսի կերպով, ինչպէս կարող էր դա օրհնաբեր լինել
Հայերին:

Որովհետև դեռ ևս ոչ մեր ցանկացած միաբան գործակա-
ռութիւնը Հայերի կայ և ո՛չ մի ազգային դպրոց, որի հա-
մար կարելի էր կանոններ առաջարկել մեր բարեմիտ եղբայրա-
կիցներին, ուրեմն վերջացնենք մեր ճառը մի քանի ընդհանուր
մտածութիւններով:

Մի ազգ հրապարակական բերաններով ճանաչանելով իւր
հասարակութեան մէջ իւր բարոյական և իմացական որպիսու-
թիւնքը, իւր մտքին ցուցիչ և վճանդաւոր խոցերը, որ
կարող էին ժամանակով, եթէ երկար միջոց անհոգ ու անզգա-
ման մնացին, կորուստ պատրաստել նորան, ուրեմն իւր պակա-
սութիւնքը և թերութիւնքը ճանաչելով, որ արդէն ցոյց էր
տալիս թէ նա քնից վեր է կացել, մի ազգ այդպիսի միջոցում
չունի կատարելու ոչ մի այլ գործ, եթէ ոչ, աշխատել բնա-
ջինջ առնել այդ խոցերը հասարակութեան մտքի մէջ, գաս-
տիարակելով մի նոր, աւելի պատուական գալոց հասարակու-
թիւն, այսինքն մանուկ սերունդը, ուստի պիտոյ է մի ժամա-
նակ յատուկ ուսումնարան ազգի մէջ: Ուրեմն այն
առաջին ամենահարկաւոր բանը, որին այս երկրիս մեր ազգի
բարեվիճակը պարտական են ընծայել իւրեանց բոլոր ուշադրու-

թիւնը, է մի ազգային ուսումնարան. և դորա գլխաւոր նպատակը լինելու էր միշտ կերպարանել և հաստատել մանուկ սրտերի մէջ մի առողջամիտ հայրենասիրութիւն: Բայց եթէ ցանկալի է, որ մի այդպիսի ուսումնարան կարողանայ բոլոր ուսանելիք առարկաների մէջ մի ամուր հիմք դնել հայրենասիրութեան համար, ապա հայրենական լեզուն պիտոյ է լինի այն բղխեցուցիչ աղբիւրը և ձանապարհը, որով բոլոր մտնաւորելի տեղեկութիւնքը հասանուելին մանուկներին: Հայրենական լեզուի ուսումն պիտոյ է բաղկացնէ գլխաւոր հիմքը ազգային դաստիարակութեան: Յորովհետև պարտական է կատարելապէս ուսանիլ խօսել, ղրալ, հասկանալ և մտածել իւր մայրենի լեզուով: Ո՛չ մի ազգային ուսումնարանում հարկաւոր չէ սկսանել ուսուցանել Հայոց մանուկներին օտար լեզուք, մինչև նոքա չեկին ստացել մի փոքր աջողակութիւն գործ դնելու իւրեանց հայրենականը: Բայց թէ մինչև այսօր ինչպէս է եղել Հայոց մանուկների դաստիարակութիւնը, ազգային դպրոցք չլինելով ազգի մէջ, այս նկատի վերայ խօսում չենք աւելնելին, որովհետև ամենայն բանագէտ Հայ փոքր ի շատէ տեղեակ է այդ ախտալի և անվիճելի ճշմարտութեանը, այսինքն, որ Հայոց մանուկների դաստիարակութեան ձանապարհը եղել է միշտ մի անբնական ձանապարհ, և դորա հետևանքը այն, որ ո՛չ մի Հայ մանուկ մեր ազգի մէջ ոչինչ բանի վերայ կարող չէր հայերէն մտածել և հայերէն խօսել, որովհետև ամենայն ըմբռնողութիւնք ուսման մէջ հասած էին նորա հոգուն ու սրտին աւելնելին անբնական ձանապարհով, օտար լեզուով, ուրեմն և կարող չէին երբէք դառնալ մի հարազատ սեփականութիւն: Ես պիտուք թէ օտար լեզուով աւանդած գիտութիւնքը երկարատև սովորութեամբ փոքր ի շատէ արմատ բռնէին Հայոց մանուկի մէջ, մի՞թէ դորան կարելի էր ասել ազգային դաստիարակութիւն: Ես շատ լաւ գիտեմ, թէ ի՛նչ կ՚ընդդիմախօսեն մեզ մի քանի պատուելի Հայեր. Հայոց մէջ ոչ ազգային ուսումնարան կայ, ոչ ազգային գիտութիւն կայ, ուրեմն և ո՛չ ազգային դաստիարակութիւն կարող է լինել: Շատ լաւ, ընկայ. բայց մի՞թէ ինչ որ դեռ ևս չկայ, կամ չէ եղել Հայերի մէջ զանազան պատճառներով, որոնց միևն է տգիտութիւնը և չհասկացողութիւնը, չէ՞ կարելի և չէ՞ պիտոյ պատրաստել և հոգալ ազգային

միաբանութեամբ, որ գոնեայ մի օր լինի պա։ Վանի՛ բանիլ աշխարհի երեսին նոր նոր գոյանումն, հաստատվումն, կարգաւորվումն և յառաջ են գնում։ Հաստ բան չէ եղել յառաջուց շատ եւրոպական ազգերի մէջ, բայց հետ գհետէ ներս են բերվել, արմատացել են, ծառ են դարձել և այժմ ծաղկումն ու պտղաբերումն գեղեցիկ ու աղնիւ պտուղներ։ Բայց այն պատուելի պարոններըը, որ մեր ազգի մէջ մինչև այժմ մի քնապատշաճ կարգ չլինելուց եզրակացութիւն են գործում, թէ և այդ քնապատշաճ կարգը անկարելի էր կամ թէ անպիտան է, որովհետև զարտուղի ձանապարհով ևս կարելի է գործ կատարել, այսինքն բարոյապէս և իմացականապէս մոլթել ազգը և մանուկը. այդպիսիներին չգիտեմ, թէ ի՛նչ անուն տամ. գոնեայ հայրենասէր մարդերի անուան անարժան են դոքա։ Գուցէ թէ չունէին դոքա և ոչ հայրենիք, այլ մի կոտոր անձնական օգուտ, որի համար այսօր այսպէս կը խօսեն, էգուց այլապէս, միւս օրը դարձեալ այլապէս, այսինքն ինչպէս յարմար էր նոցա փոփոխական հանգամանքներին. որովհետև մի հաստատուն գաղափար ձշմարտութեան երբեք ունեցած չեն իւրեանց գլխի մէջ, կամ եթէ ունեցած են, ապա նոցա միտքն ու սիրտը միշտ պիտոյ է կռուի ու երկպառակութեան մէջ լինեին, զուրկ ամենայն հեղքին խաղաղութենից։

Ս. Նազարեանց։

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ։

ԸՆԹԱՐ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՑՔ։

Վեղեցիկ է Հ՚ամ անապատը, գեղեցիկ են Հ՚ամ անապատի մէջ կախարդական Թագամօրի ուէբակները (*)։ Ո՞վ է կացել այս հոյակապ ապարանքի մէջ... Որի՞ համար կառուցած են այս տաճարները... Ո՞վ է շինել այս երկար ու ձիգ, սիւնազարդ փողոցները... Ա՛յդ բանը գիտեն Դամասկոսի և Բուսալէմի գրվոքը։ Դա յայտնի չէ Ընթարին։ Ընթարը անապատների զարդ է, յաղթութեան սուր, բարեկամութեան ցօղ, հիւրընկալութեան հովանաւոր կիսարիս։ Նա գիտէ թէ ուր պիտոյ էր որոնել և գտանել նորանց, որ համարձակվել էին անապատուել նորան և նորա ազգատոհմը։ Նա ցոյց կը տայ ձեզ բոլոր արձակայրիւ և գլեթէ հողմից բնաջինջ արած գերեզմանները իւր թշնամիների։ Նա կը պաշտպանէ ձեզ անապատումը արաբական ձիաւորների ագահութենից և գարանագործութենից, և մանաւանդ կ՚առնէ ձեզ իւր խորոված բլնձի վերջին բուռին։ Բայց նա չգիտէ այն բանները, որ գրած են գրքերի մէջ։ Ա՛յնտեղ իջևանների գրացի ալեւորները պատմած էին նորան թէ սոքա մնացորդք էին այն քաղաքի, որ հնուց շինել էին չար ոգիները, և խրատ էին տալիս նորան չմօտենալ այդ տեղին։ բայց Ընթարը չունի երկիւղ ոչ մարդերից և ոչ ոգինեերից, և մեծամտութեամբ նայում է Թագամօրի հոյակապ ուէբաների վերայ։

(*) Թագամօր կամ Պալմիրա, Զինոբիայի հռչակաւոր մայրաքաղաքը։

Ղա կանդնած է և նայումէ. նորա նիզակը արիւնոտ, ինչպէս վըկայութիւնը, ասպ, ինչպէս կայծակի զարկողութիւնը, հաստատուած է նորա մօտ, անպողպատը գետնի մէջ: Նորա աջնիւ մատակը Խալըզա, որ Անջղի մատակների թագուհին է, կանգնած է նիզակի մօտ, և իւր սև, հրացայտ, թափանցող աչքերը անկած նորա վերայ, կարծես թէ կամի խմանալ, արդիօք ի՛նչ էր լինում իւր տիրոջ սրտի մէջ: Ղա տխուր է, որով-հետև Անթալը տխուր է: Խալըզան գուշակից, որ մարդիկ վըշտացուցել էին իւր տիրոջ սիրտը, և աստիկ զարկումէր ոտքով գետնին, բարկանալով նոցա ապերախտութեան վերայ: Անթալը հասկացաւ Խալըզայի միտքը, փաթաթվեցաւ նորա վզին և համբուրեց նորա ճակատը, որի վերայ փայլումէր մի սպիտակ աստղանիշ, երևելով հեռուից որպէս լուսինը իւր լուսատուութեան առաջին դիշերին:

Անթալը բոլորովին հրաժարվեցաւ մարդերից. նա թափել էր իւր արիւնը մարդերի համար, նուիրել էր իւր դոյքը, վատնել էր նոցա համար իւր սէր ու բարեխոհմտութիւնը, բայց նոքա դաւաճանեցին նորան. . . . Ալչաի երկար վչխլով հողմը անապատի մէջ, կը փոխաբերէ աւազուտ բլուրքը մի տեղից դէպ ի միւսը, ալչաի երկար ձգելու ևն ամպերը մերթապին ստուեր երկրի վերայ, ալչաի երկար սուլելը կը շնջուցանեն իւրեանց ծանրաբեռ կարմիր բնութիւնով, որ հոսումէ ալամորդիների երակների մէջ. այնքան երկար չիտի և նա տեսանել մարդերի երեսը: Ձարիւր ապերջանկական ասպարէզներով հետև ալիտի միայ նորա ոտքը մարդկային բնակարանից. նորա նիզակի բոլոր երկայնութեան չափ չէ համարձակվելու մտանել նորան մի մահկանացու: Անթալը երբեմն կերտա, և նա երբեք անվորհոգ ուխտ դրած չէր իւր վերայ: Ղա կանդնած է այն տեղ. անօթութիւնը կերկերում նորա աղիքները, բայց նա դիտէ յաղթել քաղցածութեան: Ընդդէմ արեգակից ծաստիկ բորբոքված օդը, այն միջոցին և, երբ չիքան ոչինչ հողմ, զոզումէ, ցնցվումէ, փայլատակումէ այնպիսի բարակ բոցով, ինչպէս սովոր է պատահել հրաշէկ երկաթի վերայով, և ասէին նորա փայլակները թանձր հրիդէն տեղերի պէս արագութեամբ ոստոստումէին օդի մէջ նորա աչքի առաջև. բայց թէև սարսափելի էր անապատի ոտքը և ջերմութիւնը, այնու ամենայնիւ չէին

կարող զրկա ստիպել նորան շարժվել տեղից: Գետինը այրվում էր նորա ոտների տակ. նա համբերությամբ տանում էր սոսկան, և անշարժ կանգնած է, սպասելով մինչև մի ջայլամին կամ թէ այծեամին անցանելու էր անապատից, որ նա մի նետի մէջ վէր թռչէր և հեծանէր ձիու վերայ, հասանէր որսին և զարկէր նորան նիզակով:

Այս մի բան շարժվում էր այն աւազուտ հողակոշտների միջողումը, որ վերջին հողմը կուտակել է մօտակայ քարաժայռի ոտքումը: Սա պէտք է լինի վէթ (ջէյրան). ասաց նա ինքն իւրեան: Արդէն Ընթարը ձիու վերայ է, և նիզակը բռնած է ձիու գլխի վերայ: Նա չսխալվեցաւ. այդ էր մի փոքրիկ, սրընթաց և գեղեցկաձեւիկ վէթ: Խաղան նոյնպէս տեսաւ վէթին և վազեց նետի պէս դէպ ի այն կողմը. նա կարօտ չէր ասձի, որ ցուցանէ նորան ընթացքի ուղղութիւնը. նորան կտուավարում ձիաւորի միտքը, և նա թռչում մտքից արագ:

Ընթարը արդէն հասել էր վէթին, լինելով նորանից մի հրացանի տապարէզ հեռի: Յանկարծ նորա գլխի վերայ թընդաց մի զարհուրելի ձայն, և օդը սկսաւ սև ստուերով: Նա դէպ ի վեր բարձրացուց գլուխը, և տեսաւ մի ահագին գիշատիչ թռչուն որ գարնանային թռուղի պէս վազատուրեց երկինքի առաւել մեծ մասը: Նորա աչքերը փայլատակումէին որպէս կայծակներ. արձակված ճանկերը, իւրեանց մեծութեամբ և զօրութեամբ, կարող էին բոլորել և առնուլ տանել այն քարաժայռը, որ կերպատրում էր Նէ-Աքսի ահագին կտուրը: Ընթարը նկատեց, որ ահագին հսկայաձև թռչունը նմանապէս հետամուտ է վէթին որ տեսանելով նոր վտանգ, սկսեց վազել և առաւել սրընթաց: Բայց Ընթարը միշտ պաշտպան էր ապրանների. նա մոռացաւ իսկոյն, թէ ինքն էլ վազում է վէթի քամակից այն դիտաւորութեամբ, որ կեանքից զրկէ նորան, և. մտածումէր միայն ազատել նորան օդաշրջիկ թշնամու կատաղութիւնից:

Թռչունը, Ընթարը և վէթը երկար միջոց ու արագ դիմումէին դէպ ի մի և նոյն կողմը, աւելի և աւելի մօտենալով միմեանց, և երբ որ նոցա մէջ եղած հեռաւորութիւնը միմեանցից չէր առաւել քան թէ քսան քայլ, այնուհետև քաջ ձիա-

ւորը պատուեց գլխի վերայ իւր նիզակը և վեր նետեց նորան։ Նա թռաւ, շառաչելն դիմելով ինչպէս մի խոնաւ հողմ Ծատմօրի սիւներին միջից, և մոմեցաւ Թեւաւոր հսկայի կուրծքը։ Թռչունը սոսկալի հառաչանք արձակեց մռնչելով, որ սարսափ բերեց նոյն իսկ Ընթարի վերայ։ Նա զղրմեցաւ. երևումն էր թէ նա պիտի վայր ընկնի և ջարդուփշուր առնէ անապատի յանդունդն զաւակը, բայց յաւէտ սոսկեց նորան ամենայն արտաքինամբ բարձրանալ դէպ ի օդը, թէպէտ արդէն մի թեւի ծայրը փոքր էր մնացել որ հասանէ դէմնին։ Նորա փետուրներին զարկողմունից ջոր և եռացած դէմնի վերայ, Ծանձր փոշեղէն մառախուղ պատեց բոլոր տարածութիւնը, և աւազը լցվեցաւ Ընթարի աչքերի մէջ։ Նա խոյն ցած իջաւ ձիուց, և մի քանի վայրկեան դադարեց խաւարի մէջ. բայց երբ որ սկսեց փոշին ցած նստել, նա զարմացաւ տեսանելով իւր ոտերի տակ նոյն իսկ վիթը, որ փոքր ինչ յառաջ փախչումէր իւր նիզակից և դիշատիչ թռչունի ճանկերից։ Նա սրտաշարժ կերպով նայումէր իւր ապատչի վերայ. նորա դէմքերի աչքերը արտայայտումէին մի քաղցր երախտագիտութիւն։ Ընթարը կամեցաւ ձեռքով շողքորթել վիթին. բայց նա շարժվեցաւ թէ չշարժվեցաւ, վիթը հսկոյն վեր թռաւ և անհետացաւ փոշեղէն անապատի մէջ։

Այսպիսի զարմանալի պատահմամբ ապշած, Ընթարը վերադարձաւ դէպ ի Ծատմօրի աւերակները, մտաւ ամայացած պալատներից մինի մէջ, և ձգվեցաւ հանգստանալու ջոր դէմնի վերայ։ Նորա թռուլը կախ էր տուած պատից. հետաքրքիր Խաղան առանձնութիւն դուրս էր քաշշում աղքատին խոտը, որ բաւած էր ապարանքի մուտքումը. Ընթարը այս անգամն թէև ճնշոց առանց կերակուրի, բայց նորա գլուխը այնպէս ծանրացել էր մտածութիւնքը այն զարմանալի, վերաբերված թռչունի և գիշերիկ, երևոյթի վիթի վերայ, որ իւր սովածութիւնը դրեթէ մոռացաւ։

Ընթարը քուն եղաւ աւերակ ապարանքի մէջ։ Նէրը որ զարթեցաւ նա, մի նոր, հիմնական տեսիլ հանդիպեցաւ նորա աչքին։ Նա տեսաւ իւր անձը հանգստացած մի փառաւոր մահճակալի վերայ, որ էր երիվեակապոյտ կերպասից ոսկի փունջերով և արծաթի վերջաւորներով, մի մեծադրձակ սենեակի մէջ, որ

զարդարած էր մեռած քերթողներով և ճոխ կապերտներով, նկարած էր կապուտակ ու ոսկեղէն երանգներով. դորա մէջ մի հիանալի և հոյակապ շատրուան, որի չորս կողմը կանգնած էին սպասաւորող ծառայք և նկուքինք փառաւոր հադուստով, և ունէին ձեռքերումը ոսկի կոնքեր և տաշտեր, պատած յակինթներով և զմրուխտներով. չինեական ամաններ վարդաջրով, թանգագին հովահարներ և սկուտեղք հազուադիւտ մրգերով: Յետոյ հատ կոյս աղջիկներ քօղարկած սպիտակ ծածկոցներով, կանգնած էին դահլճի երկու կողմերը կից թառանները և ծնծղայքը ձեռքերին. օդը լցուած էր զովութեամբ և հալուէի վեղս անուշահոտութեամբ: Նոյն որ Ռեդուինը (անապատական արաբացին) բացել աչքերը, իսկոյն երկու ստուեր մօտենալով նորա մահճին, յարգանքով ընկան ծնկի վերայ և բերեցին ջուր, հոտաւէտ սապոն և ոսկեկար երեսսրբիչ. միւս երկուքը սրսկեցին նորա վերայ անուշահոտ ջրեր:

«Թո՜ղ ձեր կեանքը կը սիրէք» աղաղակեց զարմացած Ընթարը մահճից դուրս գալով. «այս ի՜նչ խորհուրդ ունի . . . ո՞վ էք դուք . . . . . ո՞ւր եմ ես . . . . . ի՞նչ կամիք դուք ինձանից:»

Ռոլոր ծառայքը և նկուքինքը գլուխ տուեցին և ասացին. —Ո՛վ ազնիւ պարոն, դուք հիւր էք ամենազնիւ, ամենամեծ, ամենանազելի Թագմօրեան մեծ Թագուհու մօտ: Ասուած հատուսա պահէ նորա թագաւորութիւնը միշտ աշխարհի վերջը: Մեզ հրամայած է սպասաւորել և մեծարել ձեզ այնպիսի պատուով, ինչպէս նորան իսկապէս:

«Ձեր հօր անէծքը առնուք դուք» ձայն տուեց բարկութեամբ Ընթարը. «ծա՞ղր էք առնում դուք իմ վերայ . . . . Ես չգիտեմ ձեր Թագուհին, և երբէք լսած չեմ, որ Թատմօրի աւերակների մէջ բնակէր որ և իցէ մարդ: Ես անապատի որդի եմ, և Թագաւորներն մօտ հիւր գնալ չունեմ: Ինձ այս տեղ ձանձրացրէ է. տուէք ինձ իմ ձիս, նա աւելի ծանրագին է քան թէ ձեր բոլոր Թագաւորութիւնը. իմ ձիուս նմանը չկայ բոլոր անապատումը:»

—Ազնիւ պարոն, —ասացին սպասաւորքը, խոնարհեցնելով գլուխները մինչև գետին. —ձեր ձին այժմ լաւ է ուտում

վարպետից և կախաղանից, և ջուր է համում Լիբանանու սարերի ձիւնից։ Մենք ձեր ծառայքն ենք, բայց դուք կարող չէք գնալ այս տեղից առանց մեր թագուհու հրամանին. որովհետև դուք գտանվում էք մի կախարդված աշխարհի մէջ, որ ոչ մուտք ունի և ոչ ելք։

«Ո՞վ է այն ձեր թագուհին, և ո՞ր տեղ է նա» հարցրեց Ընթալը, և՛ս առաւել հիանալով այս ծանօթութեան վերայ։»

—Նորա անունը Գիվլ-Նազար է, —պատասխանեցին ծառայքը.—նա փերի է բարի ոգիների ցեղից։

«Տարէ՛ք ինձ նորա մօտ,» ասաց Ընթալը. «ես կամենում եմ նորա հետ խօսակցութիւն առնել և նայել նորա երեսին։»

—Այդ անկարելի է—ասացին ծառայքը։—Նորա դէմքի գեղեցկութիւնը այնքան փառահեղ է, որ կարող էր կուրացնել ձեզ և յաւիտեանս զրկել ձեզ տեսութենից։ Դուք կ՛արժանանաք նորա մօտ երթալու, բայց ոչ այլապէս, եթէ ոչ դուք պնդով հարկաւոր զգուշութիւնքը և յառաջուց լսացվելով բաղանիքումը։—

Թէպէտ Ընթալը շատ տաք էր բնութեամբ և անսանձ յանդգնութեան տէր, որ սեփական է անապատակեաց քաջ տղամարդկերին, այնու ամենայնիւ հնազանդեցաւ նորա պահանջողութեանը։ Նա զգուշութ իւր վերայ ներդործութիւն մի այնպիսի աներևոյթ զօրութեան, որ խլուէր նորանից իւր կամքը և լցուցանուէր նորա սիրալ հեզութենով։

Ներքինիքը տարան նորան բաղանիք որ շինած էր սպիտակ մարմարիոնից, յատակեայ սիւներով և ոսկի դռներով, ուր տասերիւ մնոտի և գեղեցիկ աղախիններ կարգված էին սպասաւորելու նորան։ Ա՛յն տեղից անցաւ նա դէպ ի մի ճոխ զարդարած սենեակ, որ պայծառ լուսաւորված էր վայելչակերտութեամբ այն գոհարներով, որով ծածկած էին պատերը և առաստաղը։ Մի փառահեղ, կարմիր վարագոյր բաժանում էր այն սենեակը երկու հաւասար բաժին. բոլոր մնանողքը այն տեղ, խոնարհեցնում էին գլուխները, և ոչ ոք չէր համարձակվում դարձուցանել քամակը։ Ասացին Ընթալին, թէ նա էս պարտական է մեծ յարգանքով գլուխ տալ վարագուրին. պատ-

ձառ՝ որ նորա քամահրանքն նատած է աներևամբեխած թագուհին Թագմերի։ Այս առանց հակառակութեան կատարեց ծէսի պատշաճը, և ապա նստեցուցին նորան բազմոցին վերայ, որ կից էր վարագուրին։

Ար մեղմ, ախորամիտ երգեցողութիւն, օգաբաշխ երգեհոնի հնչեւնների հետ խառնած, քաղցրութեամբ շարժեց Ախպուրնի ականջը, որ անհանգստութեամբ նայուածը իւր չորս կողմը, աշխատելով վերահասու լինել, թէ որ տեղից է հընչում այս ձայնը։ Յանկարծ բացուեցան դռնները, և մի երկար շարակարգով ներս մտան ծառայք, որ բերումէին գլուխների վերայ ոսկեղէն սկուտեղներ, որոնց վերայ դրած էին շատ անօթներ և ամաններ կերակուրներով, անուշեղէններով և օշարակներով։ Նոցա համեմային հոտը, աստիկ դղդուց քաղցած Ընթարի հոտոտելիքը. որպէս մի ագահ բորենի, որ յարիշտակումէ անկած դիակը պատերազմող գիշատիչների միջից, յարձակվեցաւ նա բերած կերակուրների վերայ և սկսեց սրբել բուռնով։ Ծառայքը ժպտելով, անդադար մատուցանումէին նորան ուրիշ կերակուրներ և գինիք։

Ճաշի կէսի միջոցին լսվեցաւ կարմիր վարագուրի քամահից ոգջունական կանացի ձայն. «Խաղաղութիւն ձեզ, Ընթար, որդի Ռաբիու։ Մեք ապաստանիկինք ձեզ անհամբեր սրտով։»

— Խաղաղութիւն և ձեզ, ով մեծ թագուհի. Թող առատանայ ձեր ցօղը։— պատասխանեց սրսրացին։

Ձայնը լռեց, և Ընթարը անբարբառ շարունակեց ուտել և խմել ինչպէս յառաջ։ Ար քանի րոպէից յետոյ, կրկնվեցաւ կարմիր վարագուրի քամահից մի և նոյն ոգջոյնը, որին պատասխանեց Ռեզուինը, մի նոր ոճով բացայայտելով անսպատակ սովորական քաղաքավարութիւնը, այսինքն մաղթելով թագուհու համար, որ նորա խոնարհութիւնը թափվի բոլոր անսպատակի վերայ, և նորա բարօրութիւնը միշտ հնոյ ցուրտ (*)։

(*) Այն բնդունելը, որ բնակուածն տօթասէրն և անջուր Արաբիայի անապատների մէջ, բաւերով — ցօղ, անձրև, խոնարհութիւն, հասկանումն նմինպէս բարեգործութիւն. ցուրտը նոցանում նշանակուած նմանապէս պատուական. ցածադիրք տեղը, ճացը, խոնարը, գործ են ածվում այսպիսի խորհրդով. բաղդաւոր, առատ, փառաւոր, այն պատճառով, որ ցած տեղերի վերայ բուսանումէ կանաչ խոտ, որ ամենահարկաւորն է նոցա թափառական կենդանավարութեան մէջ։

Վալձեալ սիրեց լուսինը, և զալձեալ մի փոքր ժամանակից յետոյ, նոյն ձայնը հնչեցուց առաջինն ողջոյնը: Ընթացը ասաց. «Ծով տարաճուռն ձեր հովանաւորութիւնը, թագուհի, աւելի լայնարձակ քան թէ Ծուզիկի սարերի հովանաւորութիւնը: Ես ձեր աղօթարարն եմ առաջի Աստուծոյ. խոնարհեմ ձեր Վեճուրեան պարծանքի և օգոի համար:»

— Ընդո՞ւշ լինի ձեզ, — յաւելացրեց մի և նոյն ձայնը: — Ընթաց, Ոարիոս որդի, գուք մեր հիւրն էք և յուսամ, որ մի քանի օր կամիք անցուցանել մեր մօտ: Ես պատասխան եմ ձեզ իմ ազատութիւնը և կեանքիս փրկութիւնը: Ինչպէս հրևում է, գուք ինքներդ չգիտէք, թէ ո՛րպիսի բարերարութիւն ցոյց էք տուել ինձ . . .

«Ես ձեզ բարերարութի՛ւն եմ ցոյց տուել . . . » բացատրեցին Ընթացը զարմացած: «Ընդհակ ի՛նչպէս պատահեցաւ այդ բանը . . . . . երբէք տեսած չեմ ես ձեզ աչքով: Ծով Թշնամիքը քարուքանդ առնեն իմ հօր գերեզմանը, եթէ հասկանում եմ ի՛նչ էիք ասում գուք ինձ, և թէ ի՛նչ խորհուրդ ունէր այս պատահումն ինձ այս տեղ: Ծո՛ ձեր աչքի լոյս կը սիրէք, թէ ձեր մօր անունը սիրելի է ձեզ, պատմեցէ՛ք ինձ, թէ ի՛նչպէս այս տեղ եմ ընկել ես, ո՞վ էք դուք, և ինչո՞ւ համար այսպէս պատուասիրում էք ինձ . . . . խելքս թռչում գլխիցս այս բոլոր բաներից, որ այս տեղ տեսանում ու լսում եմ ես:»

— Հանգստացէ՛ք, Ոարիոս որդի, և նստեցէ՛ք մեր մօտ տպահովութեան կտակարի վերայ, — պատասխանեց նոյն ձայնը: — Ես կը լսուցանեմ ձեր հարցասիրութիւնը: Գուք այժմ գտնվում էք Ծատմնոլի մէջ, որի աւերակները առաւօտեան զարմացուցին ձեզ իւրեանց գեղեցկութեամբ ու մեծօրինակութեամբ: Խմայած եղիք, ո՞վ քաջ տղամարդ անապատի, որ այս քաղաքը շինած է ջ՛ինիների, չար ու այլանդակ ոգիների ձեռքով, որոնց Սողոմոն թագաւորը — խաղաղութիւն նորան — հրամայեց այն կախարդական մատանու զօրութեամբ, որ բաշխել է նորան ջ՛էրրայիլ հրեշտակը: Սողոմոնը բնակաւորեց այս քաղաքը մի աստուածապաշտ, հեզ, անմեղ ժողովրդով, պատուիրելով նորան մեծարել բոլոր ճանապարհորդ պանդխտական-

նեղը այս անապատումը, և հասուցանել նոցա թևաւոր կեն-
դանիք և ջուր: Թագաւորի բնակիչքը երկար ժամանակ, անո-
րատ կատարումէին այն թագաւոր-մարդարէի պատուիրանը, և
վայելումէին հանդիստ և բարօրութիւն: Վերջումը մարդկային
ազգի սեփական հպարտութիւնը, ջնջեց նոցա յիշողութենից
այն պարտականութիւնքը, որ դրած էր նոցա վերայ նոցա քա-
ղաքաշինութեան և բարօրութեան հիմնադիրը: Բայց նոքա
մոռանային իւրեանց անձը շահասիրութեան, դիւրաբերութեան, սկսե-
ցին ուտել խոզի միս, անհոգութեամբ կատարել հաւատոյ ա-
րարողութիւնքը, և հալածումէին իւրեանց մօտից թշուառ
պանդխտականները և ուխտադնաց ձմեռապարհորդները դէպ ի
նուիրական սուրբ տեղը: Նոցա չարութեան համբաւը հռչակ-
վեցաւ աշխարհից աշխարհ, և ամենքեան փախչումէին Թագա-
մորից: Վասին պատահեցաւ, որ մի Խոչէ - ա - սալէ — «մի
անատուած մարդ,» յայտնի անարգող այն պարտականութեան-
նը, որ դրած է մահկանացուների վերայ, օրի մէջ հինգ անգամ
աղօթելու, ձմեռապարհորդելով դէպ ի Ընկիատանի դուշա-
կողքը, մտաւ նոցա քաղաքը, և նոքա մեծ պատուով ընդունե-
ցին նորան: Նոքա տուեցին նորան մի մեծահանդէս հայկերու-
թիւն, բայց երբ որ այս ատատուածուրացը մօտեցուց բերանին նո-
ցա կերակուրները և ըմպելիքը, բոլոր ջուրը քաղաքի մէջ և նորա
շրջակայքումը յեղափոխվեցաւ դառն ծովաջուր: դինին ստացաւ
արիւնի գոյն և համ: Հացը և այլ պաշարները ապրուստի, մի
լոպէի մէջ քարացան: Ալլահի բարերութենից պատուհասած
բնակիչները Թագամորի մեռանոտներին սովից: կծոտումէին զեռի-
նը, ուտումէին իւրեանց զաւակները և կանայքը, և վերջումը
ստիպուած էին թողուլ իւրեանց բնակարանքը, ապարանքները
և տաճարները, գիր ու ցան գնալ դէպ ի զանազան աշխարհներ,
ուր անհատանները ծառայեցուցին նորանց և վարժումէին նոցա
հետ ամենամեծ անդթութեան: Ընդարդացած քաղաքը փոքր
ժամանակի մէջ աւերակ դարձաւ: Ընդհակառակ Ալէ-Բեխը,
նահատակը և գեղեցիկ վերերներից մինը, հրամանի խնդրեց Սող-
մանի Ադաֆ անուն ժառանգից, բնակելու այն քաղաքի մէջ և հիմ-
նելու իւր հառնալ մի նոր թագաւորութիւն. որովհետև չ՚իններ-
լը, այսինքն միատակար ոգիքը անընդհատ արշաւանքներով ան-
պատար անհանդիստ էին առնում նորա հայրենիքը: Նորա

հպատակ հիւղ ողինելը, որ նա տեղափոխել էր Փերիսատնից, ու կախարդական աշխարհից, ուր բնակուած էր իր ցեղը, կառուցին իւրեանց իշխանուհու համար այս հոյակապ շինուածնելը, անկեցին այս այգինելը և անասանելը, և ճարտարութեան ու քնութեան բոլոր ճոխութեամբը կենդանացուցին այս անապատ ու տխուր տեղը, ուր մահկանացու մարդիկը ոչինչ չեն նկատում, բայց ի առաջին աւերակներից, այս կողմ այն կողմ ցրուած քարերից, ցցուած սիւներից և վառուն աւազի կոյտերից. և միայն նա՝ ձեզանից, ով Աբրհու որդի, կարող է քաղցրանալ այս, մարդերի աչքին անտեսանելի տեսարանով, ում ծածկախորհուրդ իշխանուհին Սաւմօրի, կը բարեհաճի շնորհ ցուցանել, թոյլ տալով նորան մօտենալ իւր ողինելի դաղտնածածուկ կենցաղավարութեան սահմաններին: Ալէ-Րեխը բնակուում էր այս տեղ մի քանի դար բարօրութեամբ և խաղաղապէս: Յայտնի Շանֆարին, բանաստեղծը և քաջ ռազմարդը անապատի, դրաւեց նորա սիրտը իւր արհեստական գործերով, բնատուր ձիրքով և դեղեցկութեամբ. սէրը միաւորեց նորանց այս տեղումը, և Ալէ-Րեխը դարձաւ մայր չքնաղ Ղէմանին: Երբ որ աղջիկը դարձաւ չափահաս, Ալէ-Րեխը գնաց Փերիսատան, թողելով նորան լիակատար իշխանուհի Սաւմօրի վերայ: Ղէմանը ապրումէր այս տեղ մինչև Օմար-Նասրէդինի ժամանակները: Նա սիրեց երևելի բանաստեղծ Ղերիդին, որ փառաւորել է իւր անունը իւր ձախողդութիւններով, իւր քաջութեամբ և ռամանաուրներով. նա սիրեց Ղերիդին, որի երդերը մինչև այսօր հնչումեն անապատումը, որ և զրկուեցաւ աթոռից իւր խարդախ եղբօր ձեռքով, և երկարաւոր միջոց թափառելով աստանդական, ուռդել է իւր արիւնով սլսարական անապատի փուխր աւազները, տառապեալ և անտուն մարդիկը, իւր պէս, իւրեանց ընկերի անիրաւութիւնից վշտացածները պաշտպանելու համար: Այս Ղերիդը, կռիւներից, սովից ու ծարաւից հալումաշ եղած, նախանձողներից ու ապերախտներից հալածուած, շատ անգամ գտանումէր այս տեղ պատսպարան և տատնումէր այն վեմ հոգեշարժութիւնքը, որոնց վերայ միշտ և հանապազ զարմանալու են մարդիկ, կարդալով նորա անմահ տաղերգութիւնքը: Ղերիդը իմ հայրս էր. նորա մահից յետոյ — նա մեռաւ Յունաց Կեսարի դատաստանութեամբ — մայրս

որոշեց հրաժարվել այս անզերծից, և, իբր ծնողն նման հեռացաւ դէպ ի փերիու հայրենիքը: Ընդ ժամանակից սկսած, կառավարեմ ես այս աւերակների և շրջակայքի մէջ բնակող հեզ ոգիները, որոնց թիւը անցանում էր շատ հազար հազարներից: Իմ կալուածներս բռնում էին մի սահմանափակ տարածութիւն նախկին Ատլմօրեան թագաւորութեան մէջ, բայց նրբա զեղեցիկ էին, շատ լաւ մշակած էին, զարդարած էին զեղեցիկ շինուածներով և պարտէզներով, թէպէտ մարդերի աչքին երևումն էին մի մերկ անապատ: Իմ նախառօր ձեռքով հիմնարկած տէրութիւնը երկար միջոց յայտնի չէր չար ջիններին, մեր ցեղի թշնամիներին, և խաղաղասէր փերիները վայելում էին մի ձշմարիտ բարեբաղդութիւն: Բայց մի քանի ժամանակից յետոյ, առաւել անձեռնի ջիններից մինը, որ խորամանկութեամբ ու անզթութեամբ զերազանց էր իւր բոլոր ցեղակիցներից, վերահասու եղաւ մեր խաղաղ բնակարանին և սկսեց անհանգիստ առնել մեզ իւր արշաւանքներով: Նա ասվում էր Ջհան-Գմբր, և իւր հասակի մեծութեամբը նման է մի սահադին սարի: Շատ նեղութիւնների համբերել ենք մինչև այժմ այս կոտորող ոգուց. թէպէտ միա պնեղով կասկին Սոգոմանի — խաղաղութիւն նորան — ջիններըը համարձակութիւն չունին միջամուխ լինելու քաղաքի մէջ, որ շինած էր հնուց նոցա ձեռքով, բայց երբէք զասնված չեմ այնպիսի մեծ վտանգի մէջ նորա էարութեան երեսից, ինչպէս այսօր: Նա պօսնում էր մերձակայ սարերի մէջ, և անզգուշութեամբ ոտքս դուրս դրեցի այն սահմանից, որ անմօտենալի էր նոցա ցեղի համար, և իսկոյն տեսայ հեռուից այս հրէշի գլուխը, որ դուրս էր գալիս հորիզոնի ափից: Նորա ուշադրութիւնը խաբելու, և շուտով տուն հասանելու համար, ես կերգաւորվեցայ որպէս թէ վեթ էի, և սկսեցի վազել դէպ ի Ատլմօրի կողմը. բայց նա կարողացաւ նշմարել ինձ, վերայ վազեց որպէս մի փոթորկային մրրիկ, և խստանեց իմ ճանապարհը: Նա ստիպուած էի փախչել դէպ ի հակառակ կողմը: Ընդ միջոցին և դուք նկատեցիք ինձ, և ձիով, նիզակը ձեր ձեռքում արշաւեցիք իմ հետևից, ինչպէս մի հասարակ այծեամի քամուքից: Նենգաւոր Ջհան-Գմբրը տեսանելով այս բանը, իսկոյն կերպարանք առաւ Ընկի ասած սահադին թռչունի, որ յատկանում էին փիլեր և ուղտեր, և նոյնպէս

վազեց իմ քամակից: Ես ազատվելով իմ երկու թշնամիներից, արդէն սպառվումէի զօրութենից և համարումէի ինձ մեռած, բայց ահա դուք ձեր աղնուամտութեամբը փոխանակ իմ, զարկեցիք իմ ոսոխս: Չեր նիզակը մխվեցաւ նորա կոկորդի ու ոսկրի մէջ. նա կամեցաւ դէպ ի ցած գլորվել, որ դուրս հանէ նիզակը մարմնից, բայց սրընթաց անկմունից, անյուսալի, նիզակի կոթովը զարկվեցաւ ժայռին, և բոլոր նիզակը ընկղմեցաւ նորա կուրծքի մէջ, խորամուխ լինելով մինչև նոյն իսկ թոքերը: Յաւի սատակութիւնը դուրս հանեց նորա բերանից մի այնպիսի հառաչանք, որ մեզ երկուսիս էլ խլացրեց: Այս բաց թռաւ, և Աբեդնեգոյ սարելի այն կողմնամը ընկաւ ազի ծովի մէջ, որի խորքումը պիտոյ է մնայ և տանջվի հազար տարի, մինչև որ նիզակի կոթը ինքն ըստ ինքեան կը փտի և ժանկը ի՛ուսէ և կը մաշէ երկաթը: Աչքերս ահա, ով Ընթալը, Ասրիոյ որդի, պարգևեցիք դուք ինձ կեանք և ազատութիւն: Ես շատ շնորհակալ եմ ձեզանից, և երդվումեմ Ալլահով և նորա բոլոր մարգարէներով — թէ պատրաստ եմ լցուցանել ամէնայն բան, ինչ որ կը խնդրէք ինձանից: —

«Թագուհի՛ . . . » բացագանչեց Ընթալը մատը կծելով զարմանքից, որ յառաջացուցել էր նորա մէջ փերիու պատմութիւնը: «Ո՛վ մեծ, ամենիւ Թագուհի . . . . . Թող ջնջէ Աստուած ձեր բոլոր թշնամիները . . . կարո՞ղ էի արդեօք մտածել, թէ վերը, որի քամակից ընկած էի ես, մի էակ էլ, ոչ թէ միայն այծեամներից, այլև նոյն իսկ մարդկերից դերազանց: Ներէք երևակայած չեմ, թէ աշխարհիս վերայ այսպիսի հրաշքներ լինին: Ուրախ եմ առ ի սրտէ, որ հանդիպեցաւ ինձ ցուցանել ձեզ այսպիսի շնորհ, բայց ձեզանից ոչ մի խնդրելու բան չունիմ. ես մի դժբաղդ մարդ եմ: Ես ուխտ եմ դրել թափառելու միայնակ անապատներում և փախչելու մարդկերի ընկերակցութենից, մինչև որ օրհասի նետը կը դլորէ ինձ մի տեղ տաք աւազի վերայ, և բորենիները քարշ քարշ կը տանեն իմ անպատիները ցանուցիր առնելով Ասրիոյ բոլոր սարերի մէջ: Եմ և մարդկերի մէջ կայ միայն արիւն ու մահ սրով: »

— Չեր դիտաւորութիւնը խելացի չէ և անարժան է ձեր քաջութեանը, — ասաց դեղեցիկ Թագուհին: — Կարձէք դէպ ի ձեր ընկերքը, որոնց դուք պատրաստեան էք առաջնորդել և

պաշտպանել: Չկայ նախատահմանված է լցուցանել աշխարհը ձեր անունի փառքով. Նախատահմանութեանը ընդդիմանալ կարելի չէ:

«Եթէ այդպէս է գրած ճակատագրի տախտակների վերայ» յաւելացրեց Ընթալը, «ապա կամիմ հնազանդել նորան. ես կը վերադառնամ դէպ ի մարդիկ. բայց, ասացէք ինձ, թէ ձեր գլուխը կը սիրէք, ով թագուհի, ի՛նչ պիտոյ էր ինձ առնել նոցա մօտ: Նոքա չափից դուրս անիրաւ ու ապերախտ են: Մանկութեանս միջոցին իմ ազգականները և հոգաբարձուքը զրկեցին ինձ իմ բոլոր դոյքից, որ իմ հօր ձեռքով յանձնած էր նոցա խղճմտանքին: Ըմ ժամանակից սկսած ուսանումէի ես նիզակաշարժութիւն և նետադրութիւն, առիւծի նման պատերազմումէի ընդդէմ նոցա անիրաւութիւններին, իսկ նոքա դոյա փոխարէնը միշտ հատուցանումէին ինձ դաւաճանութեամբ: Իմ հիւրասիրութիւնը և ազնուամտութիւնը ո՛չ թէ անդործ կացուցին նոցա չարակամութիւնը, այլ յարուցին իմ վերայ նոցա բամբասանքը և նախանձը: Բայց ի վշտերից, ծանր և անուանելի վշտերից, ես ոչինչ այլ բան կրած չեմ նոցա հատարակութեան մէջ: Իմ աղիքներս քրքրվեցան ագէտքից. սրտումս ցցուած է ատելութեան սուրը: Ի՞նչ ունիմ ես որոնելու նոցա մօտ:»

— Բայց մարդկային կեանքը, — լսվեցաւ մի ձայն կարմիր վարագուրի քամակից, — ունի նոյնպէս իւր քաղցրութիւնքը, և դուք միքը ինչ օգնութիւն առանալով ինձանից, կարող էք վայելել այդ քաղցրութիւնքը, միայն թէ կամենայիք:

«Ո՞ր կեանքը, ասա՛ մէք դուք ունի քաղցրութիւններ.» ձայն տուեց Ընթալը բարձրապէս ծիծաղելով. «մեր կեանքը քաղցրութիւննե՞ր ունի . . . Թո՛ղ նորէ Աստուած ձեր մեղքը, թագուհի, բայց դուք ծաղր էք առնում իմ վերայ: Ո՞ր կեանքումը չարչարանքների լոկ մոռացութիւնը միայն միքը ինչ նմանութիւն ունի ուրախութեան հետ. բայց այդ մոռացութիւնը պիտոյ է միշտ ոտքի վերայ պահել հետացնելով ամենայն մտածողութիւն, կամ դասարկ յիշողքներով: Եթէ ձեր մօր արգանդը կը սիրէք, խնդրեմ թոյլ տալ ինձ ստուգել ձեր խօսքերի ճշմարտութիւնը:

Յոյժ տուէք ինձ ձեր հովանաւորութիւնը. թող ևս ձա-շակեմ միևը այդ քաղցրութիւններից, որ ձեր սառի պէս կա-ղուցանում էին ձեր կեանքի հալածաժինքը: Նը տեսանենք, թէ դրքա՛ որ հովից են և ո՛րպիսի սարերի վերայ արածեցու-ցել էին իւրեանց հօտերը:»

— Ընչքիս ու գլխիս վերայ, — պատասխանեց հասեատ ողի-նելի թագուհին: «Նը ահա գիտութիւն լինի քեզ, Բարիու որդի, որ Նախասահմանութեան անփոփոխելի կամքով, իւր յեզի հետ բնակերական կապով զուգաւորված մարդու կեանքին սերմանված են երկք մեծ քաղցրութիւնք. քաղցրութիւն վըհժինդրութեան, քաղցրութիւն իշխանութեան իւր հաւա-սարակից ալարածնների վերայ . . . .

« Ա՛ա, վըհժինդրութեան քաղցրութիւնը . . . » բացա-դանչեց Ընթարը կատաղի հոդեզմայլութեամբ, կորելով Վիւլ-Նաղարի խօսքը: Ընդարձ . . . ձեր սառը ճշմարիտ է. ես զգուեմ, որ վըհժինդրութիւնը պիտոյ է լինի ամենաանճ քաղ-ցրութիւնը: Ինձ բաւական է այդ: Նթէ ես մի շնորհ ցոյց տուած ունիմ ձեզ, ով թագուհի, ապա թոյլ տուեցէք ինձ զմայլեցնել իմ սիրտը այդ քաղցրութեամբ. աւելի բան չեմ խնդրում ձեզանից:»

— Մեծ յօժարութեամբ, — պատասխանեց Վիւլ-Նաղա-րը կեղծաւոր սառնասրտութեամբ, որի մէջ պատկերանում էր բարկութիւն: — Ա՛ռ քո մտտակը և դնա՛ անապատ: Այն տեղ կը զմայլեցնես քո սիրտը այդ քաղցրութեամբ: Նրբ որ դար-ձեալ կը ցանկաս լինել մեր հիւրը, արի՛ ապա թօռամների ա-ւերակները և աշխատիր քուն մտանել այն տեղ, ուր այժմ յանկարծ դուրս կ՛ելնեմ: —

Այս խօսքերը սառ, անելևուռթացաւ եղխատարդի առա-ջև այն կախարդական ապարանքը. և նա տեսաւ իւր անձը նստած մի երիտ, սառշած քարի վերայ, որ ժամանակի կարող ձեռքովը դըրված է կիսաւեր տաճարի սիւների գլխից: Նորա առաջև կանդնած էր իւր հաւատարիմ Ռալդան և մի նոր նե-զակ, անճանօթ տանտիրնոջ պարդևը, և նմանապէս Ընթարի ապագայ քաջագործութիւնների առհաւատչեան: Ա՛հան ու թուրը դրած էին մի և նոյն տեղում, ուր թողել էր նորանց

առաւօտուն: Պրահոտ երիտասարդը վեր կալաւ ղէնքը, նստեց ձիու վերայ և թռաւ դէպ ի անապատ: Միայն կայծակնացայտ գայլախաղների շառաչիւնը և երիարաձիգ փոշեղէն սիւնը, նմանելով այն ծխին, որ դէպ ի վեր է թաւալվում թաց փշաթուփով շինած վայտակուտից, — դեռ ևս երիտը միջոց ցուցանում էին Ընթալի ձանապարհորդութեան ուղղութիւնը: Ջերմ ու ցուրտ հողմեր դարձեալ և կրկին եկան ու գնացին Շամի անապատի վերայից: դարնան աստեղաստուածը դարձեալ և կրկին թափեցին նորա վերայ ջրերի հոսանքները դիշերայնի և ցերեկայնի անձրևից: բայց Ծատմօլի աւազները միանգամ ևս չըդծագրվեցան ձիու սմբակի հետքով: Ո՛չ ոք ձիաւորներից, երբասացութեամբ չհնչեցուց նորա ձայնարկու աւերտիները... Ահա գալիս է երիտասարդը իւր գեղեցիկ և թռչուն-կարմիր ձիու վերայ հեծած, վահանը ուսի վերայ կախած, կողքին ծանր ու ուղիղ թուրը, աղեղը քամակին կապած: Բայց երիտասարդի դէմքը տխուր է, և սիրտը շարժվում էր նորա մէջ աւելի քան թէ բարակ ծայրը նորա թեքուն և ձգական նիզակի, որ շինած է մի ահագին եղեգից: Նա շրջում էր ձին դէպ ի Ծատմօլի կողմը և շուտով աներևութանում էր նորա սիւների մէջ: Կարմիր վարագոյրը կախած է ապամանդեայ ապարանքում. կարմիր վարագուրի մօտ նստած է արտում երիտասարդը. վարագուրի քամակից լսելի է մի նազելի, արծաթահնչիւն ձայն. — Խաղաղութիւն ձեզ, Ընթալ, որդի Ոսրիոս: Մեք ձեզ անհամբեր սրտով սպասում էինք:

«Խաղաղութիւն և ձեզ, ով Թադուհի» ասում է արտում որդին անապատի: «Ծող օրհնէ Ըստուած ձեր հայեցուածքը. Ծող ծաղկին ու փթթին ձեր վարդերը փուխր աւազի բոլոր բլուրների վերայ:»

— Դուք մեր հիւրն էք, — ասաց ձայնը:

«Նա ձեր ծառան եմ,» պատասխանեց Ռեդուինը, և մի քանի րոպէ լուռ ճնալուց յետոյ, յուսալ տարաւ խօսքը. «Նա իմ սիրտը զմայլեցուցի վըէժխնդրութեան քաղցրութեամբը. Ծող պարգևէ ձեզ Ըստուած առատ ջութիւն և բարօրութիւն, Թադուհի. յիրաւի, դա մի մեծ, անպատմելի վայելչութիւն է: Գտանվելով ձեր հովանաւորութեան ներքոյ, վըէժխնդիր ե-

պայ ես իմ բոլոր թշնամիներին. նոցա պիակունքը անթաղ ձգած են անապատում, և ագռաւներին ու գայլերի ջոկերը ամենայն տեղ հետևում են ինձ, որպէս իւրեանց առաջնորդին: Իմ անունը տարածում ահ և սասանութիւն, և յարուցանում զարմանք բոլոր վրանաբնակ ազգերի խլևանների մէջ. մարդիկը ինձ ասում են մեծ տղամարդ. որովհետև ոչ ով այնքան շատ մարդ կոտորած էէ, որքան ես: Ես արիւնի մէջ լողացել եմ, և իմ սրտի փափագը էր միայն վնասել մարդկութեանը: Ամեն մի անգամ, որ իմ առելի թշնամին հարուած է սուացել ինձանից, ուրախութեան որոտը թնդացել է սրտիս մէջ, և դողա ալձադանքը որպէս վազրի գոռոցքը Ալքալի սարերի մէջ, դեռ ևս երկար ժամանակ յետոյ կրկնվում էին իմ քարերէն սրտի անդունդներում: Նիզակով դէպ ի դեռին բևեռած թշնամու շրթունքի ցնցումներին մէջ տեսանում էի ես իմ անկրաւութեան ժպիտը. դա դեղերի է .... թէև մի փոքր սարսափելի: Ես նստում էի իմ ձեռքով սպանած բամբասողների մէջ, որ դրած էին արիւնածուխ աւազի վերայ, և զրոյց էի տալիս նոցա հետ, որպէս իմ սրտի սիրելիների հետ: Ո՜հ, երբէք մի զրոյց իմ շատ նազելի սիրածների ու բարեկամների, իմ քաղցր մօր և իմ պաշտելի սիրուհու հետ, չէ կարող լինել այնպէս անոյշ, զուարթ և զմայլեցուցիչ, ինչպէս այն զրոյցը, որ տալիս է մարդ իւր թշնամիների դիակների հետ .....

Վրէժխնդրութիւնը — մեծ վայելչութիւն է սրտի. ես փորձեցի այդ բանը կատարեալ չափով, և դառնում եմ, որ բաղդը չէ կարողացել ոչինչ աւելի լաւ բան հնարել, մեր տխուր կեանքը քաղցրացնելու այս աշխարհի վերայ: Ընդարձակ, արժէր ծնանիլ իւր մօր փորից, դոնեայ մի փոքր վրէժխնդիր լինելու. մարդկային սեռին ... բայց այս մի հատիկ, դրեթէ երկնային ուրախութիւնը, ափսոս որ շատ կարճատև է: Նորա զմայլեցուցիչ քաղցրութիւնը, անցանում ինչպէս առաւօտեան մառախուղը, և թողում իւրեանից յետոյ մի անախորժ դատարկութիւն: Ո՛նչ ասեմ ձեզ, թա՛դուհի ... Երբ որ ես երկրի երեսից ջնջեցի բոլոր, իմ աչքին առելի արարածքը. երբ որ ես չունէի աւելի ոչինչ առիթք վրէժխնդրութեան, ոչինչ նիւթք առելութեան, այնուհետև դգայի ես մի անասանելի ձանձրոյթ սրտիս մէջ և, պառկ ու պայծառ ու բազմամարդ անապատի

մէջ, տեսայ ինձ շրջապատած մի ուրիշ անապատից, մի անբնակ, մեռած, ցուրտ, գունատ, խաւար անապատից, ուր արեգակը օրհաս է, հողմը — երկիւղ, իսկ ցօղը — արտասուք։ Ես անդադար ղղումեմ լեզուիս վերայ մալդիվային ալիւնի աղի համը. իմ չոլս կողմն հոտոտումեմ ես մահու հոտ։ Նայեցէք իմ ձեռքերին, դոցա վերայ կաշին չորացել է որպէս թէ նախանձողի այրող շօշափումներից։ Ոսկերքը իմ մէջ երեւումեն որպէս թէ իմն չէին, այլ օտարների, անկենդան, քարացած. նոքա սառն ու ծանր են ինչպէս գաւազանողի ոսկերքը, որ բռնելին քարշելով տանումէր դէպ ի իւր վերապը։ Ալիւնս գառն է, թմրեցուցանող այն ջրի պէս, որ պատած է աղային հողի կանաչ բորբոսովը։ Նա այրումէ իմ երակները, և կոկորդումս յոտնահատումների համար է տալիս։ Ալիւնհողմութեան դիմադրութիւնը օմէնանել է իմ կուրծքի մէջ, և ես ղղումեմ, ինչպէս ժանդը կարմիր ատամներով կրծումէ իմ սիրտը, և ուտումէ նորան կամաց կամաց։ Ես կամիմ վըէժխնդիր լինել . . . . . ես ինքս վըէժխնդիր կը լինիմ ինձ, եթէ դուք չկամիք ցաւակից լինել ինձ։ Ես եկել եմ խնդրելու ձեզանից, թագուհի, որ դուք ինձ բժշկիք։ Վըէժխնդրութիւնը մեծ քաղցրութիւն է, բայց նորա պատուհասը կործանութիւնք են։»

— Դոքա են սովորական պատուհասները ձեր կեանքի բոլոր քաղցրութիւնների, — ասաց Փերին։ — Խմացիր, ով Ռաբիու որդի, այն թոյնը, որ թողել էր սրտի մէջ մի վայելած քաղցրութիւն, ոչ այլապէս կարող է արմատախիլ լինել, եթէ ոչ ընդունելով իւր մէջ մի այլ քաղցրութիւն։ Դոքա թուով երկք են բնութեան մէջ. բոլոր միւսերը արուեստական են և պահանջումեն մի առանձին ճաշակութիւն իմացական կարողութիւնների, որ մարդս հասանէր նոցա։ Առաջինը այն բնութենական քաղցրութիւններից, ինչպէս որ արդէն ասացի քեզ, է վըէժխնդրութեան քաղցրութիւնը. դու նորա ճաշակը առար. երկրորդը է քաղցրութիւնը իշխանութեան քեզ նման արարածների վերայ. երրորդը . . . . .

«Ես կամիմ փորձել այդ երկրորդ քաղցրութիւնը,» ասաց կրակոտ Խեդուինը կարելով թագուհու խօսքը։ «Ես հաւատացած եմ, որ նա կը բժշկէ իմ ցաւը . . . .»

— Դու կը վտանգես այդ բանը, — յաւելացուց ծածկախոհութիւն իշխանուհին Թագուհիի: — Յանձնուեցիր ձեզ Ալլահին:

«Թող նա հաստատ պահէ ձեր տէրութիւնը,» բացագանչեց քաջ ազատարարը:

Ալ ապագայէն անելիութեացաւ: Ընթացը դարձեալ ճանապարհ ընկաւ դէպ ի անապատը:

Մի քանի տարուց յետոյ, ու և նոյն ձիաւորը իւր մոյգ կարմիր ձիու վերայ հեծած, դարձեալ երևեցաւ Թագուհիի սահմանները: Նա երկար ժամանակ մնաց եկաւ աւերակների չորս կողմը, կարծես թէ չհամարձակվելով մտանել քանդուած ապարանքի մէջ: Նորա դէմքը երևումէր այժմ աւելի տխուր քան թէ յառաջ. նա պիտ առաւ, մտածեց երկար ժամանակ, վերջապէս թռաւ տեղէնը, և շուտով թաքնվեցաւ բարձր հոդակոյտների և քարերի մէջ: Ամէն ժամանակից սրած ունէր աչք միւս ևս չտեսաւ նորան անապատումը. միայն ապամանդեայ ապարանքի մէջ լսվեցան ձայներս. «Թագուհու մտ նորից հիւր եկաւ . . . նա միւս ևս երթալու չէ այս տեղից:»

Հիւրը նստած է կարմիր վարագուրի մտ, խորասոյզ եղած ի խաւար մտածութեան մէջ: Թագուհին հիւրասիրաբար ողջոյն է տալիս հիւրին:

— Խաղաղութիւն ձեզ, Ընթաց, Յարիւս որդի. ինչ ապատաւիներ ձեզ անհամբեր սրտով:

«Խաղաղութիւն և ձեզ, ով Թագուհի,» պատասխանեց ձիաւորը: «Ես եկել եմ ձեր մտ ուծացնելու ձեզ և շնորհակալ լինելու ձեր ողորմութեան համար: Ես փրկեցի քաջությունը իշխանութեան իւր մերձաւորների վերայ, յիրաւի ուժ ու զօրութեան է դա. և դրեթէ ահռելի է նոյն իսկ վճիռ թողութեան քաղցրութենից: Հեռանալով ձեր ապարանքից, ընտրվեցայ ես գլուխ և հրամայող անհամար սերունդների, որ իմ նիշակիս ոտքումը, կազմեցին մի զօրաւոր, քաջ և հարուստ ժողովուրդ: Ես առաջնորդումէի նորան պատերազմի դաշտումը, և ինքնիշխան կառավարումէի նորան, հրամանները ուղարկելով իմ վճռիս խաղաղութեան ժամանակին: Ժողովրդի ուծաւորը և քաջ ազատարարը խուռն բազմութեամբ, հա-

սաքվումէին վրանիս չուանների մօտ յայտանքով ու ակնածութեամբ սպասելով իմ հրամաններին։ Ձկոյ մի աւելի զմայլեցուցիչ բան, քան թէ տեսանել թէ մեզ նման արարածներից հազարաւոր հոգիներ շարժվումէին մեր խօսքով, իւրեանց կամքը ստանումէին մեր կամքի ընդհանուր աղբիւրից, և մեր խորհուրդները յառաջ տանելու համար, յօժարութեամբ զոհումէին իւրեանց կորհուրդքը, դոյքը և կեանքը։ Տիրակալը արդարև զգումէ իւր անձը և հոգով և մարմնով աւելի վեր, քան թէ մարդս. նորա ըմբռնողութիւնքը ստանումէն վսեմութիւն, կիրքերը աղնուանումէն և կորուսանումէն իւրեանց բոլոր վնասակար զօրութիւնը, ըստ որում հնշտ էր նորան լցուցանել այդ կիրքերը. և նորա ցանկութիւնները հաւասարվումէն նոյն իսկ առաքինութեան ցանկութիւններին։ Ուշևերը ամեն բանի վերայ ազդումէ նորա սրտի մէջ խաղաղութիւն, և յօժարեցնումէ նորան դէպ ի վեհանձնութիւն, առատաձեռնութիւն, այլև տարածել իւր սեփական բաղդաւորութիւնը իւր բոլոր շրջակայքի վերայ. մի խօսքով ուղղեցնումէ նորա ուշադրութիւնը դէպ ի հասարակաց բարին։ Այլ այս տեղ է և քաղցրութեան սահմանը. սորանից դուրս սկսանվումէ մի ահաւոր, մահացուցիչ գառնութիւն, որ իւր թունովը ապականումէ նորա կեանքի բոլոր թանգագին րոպէքը։ Հազիւ թէ ձեռնարկել էր մի բարի գործի, իսկոյն նկատումէ նա, թէ մի և նոյն մարդիկը, որոնց ձշմարիտ բարօրութիւնը առ ի սրտէ ցանկացած էր նա հաստատել, չգիտեն և չիսկին բարգնանալ դէպ ի նորա խորհուրդների կզօրդութիւնը և ոչ ևս հասկանալ նորա սիրտը. հրամայող իշխանը իւր աթոռի բարձրութենից բացումէ իւր ոտքերի տակ մի լայնաբերան դժոխք նենգաւորութեան, ուր ցերեկ զիշեր վառվումէին անարդ ախտեր, որ կլանումէն նորա բոլոր բարեգործութիւնքը. ուր նորա պատուական դիտաւորութիւնքը մի րոպէի մէջ այրվելով գառնումէն մի գարշելի սև ածուխ անձնական շահասիրութեան այս և այն աստեղ կարող ու աւելի հնարագէտ մարդու։ Երկար ես ձանձրալի կերպով պատերազմելուց յետոյ այն մարդերի հետ, որ ամենայն կերպով աշխատումէին խափան լինել հաստատելու նորա սեռի բարեկենդանութիւնը, զգումէ նա վստահութիւն, լցվումէ ուհաճութեամբ, սկսանումէ արհամարհել մարդիկը, և այնուհետև

լինուսի թշուառ։ Այս բանը պատահեցաւ և ինձ։ Ես շուտով վերահասու եղայ թէ նոքա, որոնց թոյլ էի տալիս մօտենալ ինձ, աշխատութիւնին միայն չենին գործիք իւրեանց ագահութեան կամ թէ հնարք կործանելու իւրեանց թշնամիները, և կասկածամտութեան առնջանքը կեղեքուիլ իմ սիրտը։ Պարզիկ անդադար դէպ ի չարը գործ դնելով իմ ներողամտութիւնը, ստիպեցին ինձ լինել խիստ և անմօտենալի։ Ես գիտէի, թէ ինչպէս ինձ խաբուիլին, ինչպէս իմ չորս կողմն որոգայթ էին լարում և հնարներ էին հնարում, որ կարողանան որսալ իմ ժպիտը, որով յետոյ անասնթարթար վաճառաշահութիւն էին առնում ժողովրդի հետ։ այս բանը զզուեցրեց իմ սիրտը մարդկից, զրկեց ինձ մինչև անդամ ծիծաղելու ուրախութենից։ և ես, ազդուելից բարմութեան, իմ կարողութեան մէջ տեսայ իմ անձը մենակ, անօգնական, անշահ իշխանութեան ծանրութենով բեռնաւորուած, և կասկածանքի, վտանգների, դաւաճանութեան գունաթափ տեսիլներից հալածուած։ Ակզբում քաղցրանուիլը իմ կամքը գտանելով հնազանդութիւն իմ կուսակիցների կողմից, բայց յետոյ և նոցա ստրկական բարքը խլեց ինձանից և այդ մխիթարութիւնը։ Եւ արդէն իմ կամքս շրջուիլը և թագաւորուիլը միայն դատարկ օդի մէջ, չհատանելով նոցա գլուխներին, որովհետև գոքա սոզուիլին չափից դուրս ցած։ Այնուհետև ձանձրոյթը և կիրքերի յագենալը ձգեցին ինձ ինքնահաճութեան անդունդի մէջ, ինքնահաճութեան, որի բռնաւորական և արուեստակեալ զբօսանքները հալումաշ արեցին իմ խելքը և իմ զգացմունքը։ և իմ սիրտը, չորացած, դուրսից այրած և ներսից դատարկ, հատուն կոլոկինտի նմանութիւն ունէր, որ բուսանուիլ սկսի ստորոտումը, ձայթեցաւ և դուրս թափեց իմ սրտիս մէջ յուսահատութեան սև ու կծու սերմերը։ Մի քանի անգամ կամեցայ ես բաց ձգել իշխանական վրաններս և իմ հպատակներս, և փախչել դէպ ի սարերը։ բայց մի անտեսանելի զօրութիւն, ընդդէմ իմ սրտիս վկայութեանը, կաշկանդուիլը ինձ իմ աստիճանի հետ։ Այս իշխանութեան քաղցրութեան մէջ, ինչպէս տեսանում ես, ծածկած է մի նուրբ, թունաւոր կրակ, որ անդադար այրում է մարդու սիրտը, պահում է մարդու զգացութիւնքը արբեցութեան մէջ, և զրկում նոցա կոկորդի մէջ մի անշէջուցանելի ծարաւ, որ ամեանց քար-

շումէ, ասանումէ մարդու շրթունքը դէպ ի դասն բաժակը իշխանութեան: Վերջապէս յաղթող հանդիսացայ ինքս իմ վերայ, թողեցի ամենայն ինչ և թռայ դէպ ի ձեզ, խնդրելու ձեզանից, ով մեծ թագուհի, որ բժշկէք իմ սիրտը: Ես չարչարուեամ անպատմելի կերպով. իշխանութեան քաղցրութիւնը յառաջացուցել է իմ մէջ մի մեռուցիչ զզուանք, որ խեղդումէ, ճնշումէ և սպանումէ ինձ. այնու ամենայնիւ կամիմ ես իշխել, կառավարել, հրամայել և տնօրինել իմ ընկերների վիճակը. ես չեմ կարող ապրել առանց իշխանութեան, և հրաժարվելով դորանից, թվումէ ինձ, թէ անխոհեմութեամբ հրաժարվումէի օդից, ջրից և արևից:»

—Դու տանջվումես այդ քաղցրութեան բնական հետեւանքից, — ասաց Փերին. — որպէս ապացոյց իմ դէպ ի քեզ շնորհակալութեան, աւ ի սրտէ կամիմ ես բժշկել քո սիրտը. բայց դիտե՞ս դու, ով Նարիու որդի, որ մի թոյն, որ քամած էր սրտի մէջ մի քաղցրութենից, հեռացվումէ միայն ձեռակերտով մի այլ թոյն: Դու պիտէն փորձել ես երկու թոյն. յանձնառո՞ւ ես փորձել երրորդը. բայց յառաջուց ասեմ քեզ, որ այս երրորդ քաղցրութիւնը լինելով մեծ, զօրաւոր քաղցրութիւն, այն առաւել զմայլեցուցիչ քան թէ բոլոր միւս քաղցրութիւնները, նայնպէս ունի հետեւանք մի ահաւոր, անտանելի դառնութիւն, և, — որ առաւել խորհրդաւոր բանն է, — թէ նա միանգամ թունաւորումէ մարդու սիրտը, այնուհետեւ ոչինչ կերպով կարելի չէ քաղցրացնել նորան:

«Ես ամենայն ինչ յանձն կ'առնում» ձայն ալեմակից Ընթարը տաքացած. «ի զուր ցանկացայ ես ձեռակերտել առաջին քաղցրութիւնը. լաւ էր ինձ իմ բոլոր կեանքումս մնալ անբաղդ, ինչպէս էի մանկութեանս մէջ, չգիտելով ոչ միևնոյն քաղցրութիւններից, որ սահմանած են մեզ բաղդից. բայց երբ որ ես թունեցի ինձ նոցանից միոմով, ապա պիտոյ է ինձ փորձել բոլոր միւսները: Ծոյլ իմ մարմինը մեր կեանքի բոլոր քաղցրութիւնների թունովը տոգորված, և առանց թագման ձգված անապատումը, լինի մահաձեղ դայլերի և անպիների. Թող նոքա սեսանեն հասը մարդուս դառը մարմնի, որ սնուցած էր այն սխտորի հացով, որ ասվումեն մեզանում նուլլը, վասն ու

ամենիւ ախտերը, և պատմեն իւրեանց ընկերներին Յմամի սարկաւագի մէջ, թէ ինչպէս էր մարդկային երջանկութեան համբ: Ո՞նչպէս է այդ երկրորդ քաղցրութեան անունը . . . . »

— Ակը, — պատասխանեց փերին:

«Ակը» աղաղակեց Ռեզուինը: «Ո՛ թէ սէրը քաղցրութիւն է . . . Ես միշտ համարել եմ նորան տանջանք . . . Ա՜հ, թագուհի. արդէն սիրու փորձը առել եմ ես . . . Տասն տարի յառաջ, հեղեղատի եզերումբ, որի մօտ մշնատեսիլ երեւոյթին մի թշնամական ցեղի վրանները, հանդիպեցի ես մի երիտասարդ գեղեցկութեամբ ազնիւ երկայն ու կապոյտ քօղով, որ աղաւոտպէս ձգած էր նորա գլխի վերայ, որի տակից ամէն մի փչելովը հողմի, դուրս էր երեւում մի երես աւելի գալար և դիզեցիկ քան թէ լրացած լուսինը, որ դիշերով երեւոյթի տակից քամակից և շուտով ծածկվում միւս տակերի յետքումբ: Նա ջուր էր հանում, և երբ կանգնուն էր նա, նորա հասակը իւր ուղղորդութեամբ տխրեցնում էդէդնները, որ բուսած էին հեղեղատի տաշտի մէջ. երբ որ նա թեքվում կամ շարժվում, նորա մարմինը թվում աւելի թեքուն քան թէ սև օձը, որ թռչոտում միջօրէի ջերմութեամբ բորբոքված աւազի վերայ: Նորա մեծ ու բոլորակ աչքերում մեղմախոյզում նոյն իսկ պարզ, կախարդական ձառագայթը հոգեզմայլութեան, որպիսի փայլատակում էրնի հոյեցուածքից, որ դարձուցանում իւր կոկ, զարդարուն վիզը նկատելու իւր սպիտակ ձագը, որ կախված էր նորա տակինքից: Նորա դէմքի լուսափայլութենից կուրացած, միայն ես անշարժ կանգնուն որպէս մի սիւն, որ անապատի մէջ ուղեցոյց էր ճանապարհորդներին. վերջապէս համարձակվեցայ մօտենալ նորան և խօսք բանալ: Նա քաղցրութեամբ պատասխան տուեց իմ հարցմունքին, անուշաբար ժպտելով ականջ դրեց իմ ուխտագրութեանս, թէ կամէի սիրել նորան մինչև ի մահ, և ժամադիր եղաւ ինձ կրկին տեսութիւն առնելու միւս օրին, նոյն տեղումբ. ապա իւր ջրակից սափորը դրեց գլխին և հեռացաւ: Միւս օրը առաւօտուն եկայ ես այն տեղ, բայց նա չերևեցաւ. այլևս չկար նա այն սահմանումբ, և նորա ցեղի վրանները դիշերով հեռացել էին հեղեղատի ափերից: Ի զուր որոնեցի ես նորան բոլոր անապատումբ. ո՛չ ոք չկարողացաւ ասել ինձ, թէ ո՛ւր էր չքացել նա: Բայց նորա

պատկերը, սկսեալ այն ժամանակից, չէր լսժանելում ինձանից. ես պահումէի նորան հոգուս մէջ, դղվումէի պատուս և ննջեցեումէի արիւնիս մէջ: Վանի անդամ որ ես գտանվումէի վըտանդի մէջ, միշտ աեսիլքի պէս երևումէր նա իմ աչքին, և թվումէր թէ պաշտպանումէ ինձ իմ աուելի կարող թշնամու կատաղութենից: Ա՛յժ հանելով մարդերից իմ նիզակովս և ոանակոս առնելով նորանց իշխանութեամբս, չդադարեցի ես որոնել նորան, մտածել նորա վերայ և լալ: Նորա հետ միայն կարող էի ես վայելել սիրու քաղցրութիւնը, եթէ սիրու մէջ կայ պակիսի և իցէ քաղցրութիւն. բայց ես յոյս չունիմ միւս անգամ տեսանելու նորան: Այդ բանը կարծեմ, որ մի ցնորք էր միայն, մի կախարդութիւն պատաս Հ՚արմայի կողմից, որ յայտնի դիւթ է բոլոր ՛էջձաղումը, որի որպէն սպանեցի ես, նիզակով մեռնամարտելով նորա հետ . . . .»

Ընթայրը տաք տաք պատմելով դեղեցիկի, անծանօթ աղջկայ մասին, ընկատեց որ կապմիր վարագուրը յետ քաշվեցաւ, և ամենքը որ ներկայ էին սենեկումը, ընկան դեանի վերայ, երևաց թագուհու առաջև: Բայց երբ որ տեսուլ յիշատակները կտրեցին նորա ձայնը, նա յանկարծ մի փոքր դեպ ի վեր բարձրացրեց դլուխը, և նորա աչքերը հանդիպեցան մի շքեղ, նորահրաշ տեսարանի, որ դղրդեց նորա սիրտը զարմայքի ու հոդեզմայլութեան կրնոտպատիկ զօրութեամբը: Ար վառուտ, ոսկուց ու դոհարից փայլող աթոռի վերայ նստած էր նոյն Ռեդումին կինը, կապոյտ քօղով վերարկած, որի մասին Ընթայրը պատմութիւն էր արած:

«Թող առնում իմ հօր անէծքը,» ձայն տուեց Ընթայրը վեր թռչելով բազմոցից. «Ալլա՜հ, Ալլա՜հ . . . . այս մի կախարդութիւն է . . .»

— ՛անդստացէ՛ք, Ասլիու որդի, — ասաց Ռեդումին կինը քաղցրիկ ձայնով: — Թագմօրի վարագուրված թագուհին է այն հաստատակ աղջիկը անոտպատի, որ ժամարիր եղաւ ձեզ հեղեղատի ափումը, և պաշտպանեց ձեր անձը վտանդներից; և անտեսանելի կերպով լցուցանում էր ձեր խորհուրդները:

Այս եմ այն վիթը որ, երբ չար ջինները խորտակվեցաւ ձեր ձեռքով, կամենում էր յայտնել ձեզ իւր երախտապիտութիւնը

շողքորթելով ձեր ոտքերը: Այժմ դուք հիւր չէք այս տեղ, այլ տանուտէր: Այս տեղ վաղուց սպասումէր ձեզ սիրու քաղցրութիւնը, որ կամեցաք դուք փորձել այդքան յուշ, այդչէն բոլոր միւս քաղցրութիւններից յետոյ: —

Գիւղ-Նազարը վեր կացաւ տեղից, մօտեցաւ նորան, և բռնելով նորա ձեռքից, նստեցուց նորան ալքայական աթոռի վերայ իւր մօտ: Այնու ամենայնիւ Ընթալը հաւատում չէր իւր բաղդին, երբ որ վարպետը գարձեալ փակվեցաւ և բաժանեց նորանց ականատես վկաներից:

Ընդան մի քանի տարիք:

Ընթալը և Գիւղ-Նազարը նստած էին պատուհանի մօտ, որ բացվումէր դէպ ի պարտէզը, և վայելումէին գեղեցիկ երեկոյի հովերը: Ընթալը բռնած էր նորան իւր գրկումը: Նորա կլակոտ հայեացքը թափանցելով փերիու վարդագոյն թշերի և փարթամ լանջքի մէջ, ազահութեամբ ծծումէին նոցա զմայլեցուցիչ գեղեցկութեան քաղցրութիւնը, այն կանաչ-կարմիր գօտու պէս, որ ծծումէ ջուրը անձրևից ձևացած ջրակի մէջ մերկ անապատի ափումը: Ախտաբորբոք դողդողուն շրթունքը, տպաւորումէին նոցա վերայ բոցավառ համբոյրներ, որոնց ջերմութիւնը թափանցումէր մինչև բաղդաւոր ամուսնու սրտի խորքը: Յանկարծ Ընթալը կատաղի կերպով ձնշեց նորան իւր լանջքի վերայ:

«Իմ նազելի՜ . . .» ասաց նա. «այժմ իսկապէս հաւատումեմ ես, թէ մարդկային կեանքի մէջ չկայ ոչ մի քաղցրութիւն, որ կարողանար հաւասարվել այն սիրու քաղցրութեան հետ, որ գտանումէր փոխարէնը իւր սիրած մարդուց: Ակը, կարելի է ասել համարձակ, լցուցանումէ մեր բոլոր գոյութիւնը մի անպատմելի մեղմութեամբ, ճշմարիտ գարնանային խնդութեամբ, չթողլով մարմնի մէջ և ոչ ամենափոքրիկ տեղ բարկութեան կամ վշտի համար: Արիւնը երակների մէջ քաղցրանումէ որպէս շաքարատունկի հիւթը, և հոգու տեսիլները ստանումեն աւելի գեղեցիկ, աւելի զմայլեցուցիչ՝ աւելի բաղմերանակ կերպարանք քան թէ այն սպիտակ մառախուղը, որ անապատի մէջ, ջերմ առաւօտու ժամանակ, երևեցնումէ մի

խաբէական պատկեր լճերի, ծառերի, բերդերի և քաղաքների դիրքերով ու միմեանցներով։ Սիրով վառված սիրտը, գոհանվոմէ իւր ծաղկի մէջ և շնչումէ կարմիր, անուշահոտ բաղդաւորութիւնը վարդի, որ սկսումէր բացվիլ արևածագի ճառագայթների տակ։ Կայց ես դիտեմ, թէ ինչպէս սիրտի վերջանան մեր կեանքի քաղցրութիւնքը, և դու ինքդ յառաջուց պատմեցիր ինձ այն վայելչութեան անվախճելի հետևանքները, որ այդպէս սաստիկ ղդումեմ ես այժմ։ Վախումեմ ես այն թռունից, որ ճնումէ սրտի խոլքումը քաղցրութեան ցնդմանից յետոյ. վախումեմ նորանոր պատցառութիւններից, որ աւելի վատ էին քան թէ սովամահ մեռանելը, և ապաչումեմ քիչ շնջոցանել իմ կեանքը այդ քաղցրութեան վերջի կաթիլով, երբ որ կը նկատես, թէ արդէն գոհունութիւնը սկսանումէ միջամուխ լինել քաղցրութեան մէջ։ Ներդում կիր, թէ այս իմ ցանկութիւնը կատարելու ես դու։»

Փերին խոկըն վաթսաթվեցաւ նորա վզին, բորբոքված սիրով զուգաւորից իւր շրթունքը նորա շրթունքի հետ, և երկար . . . երկար ու խորհրդաւոր լռութենից յետոյ, յետ քաշեց շրթունքը ցաւագին, դողդոջուն ձայնով, որ խեղդվումէր արտասուքից, և արտասանեց.—Ներդմեմեմ. . . . .

Ընդան ևս մի քանի տարիներ։

Ընթարը հանդստացած էր փառուկ ու անուշահոտ մահճումը, չքնաղատեսիլ Փերիու մօտ, և բռնած էր նորա ձեռքը իւր ձեռքի մէջ, բայց Ընթարը աաես թէ տաղտկանումէր։ Նորա շրթունքը լուռ են. աչքերը, ձեռքերը լուռ են նոյնպէս. նորա միտքը թափառումէ անապատումը։ Հատատարիմ Փերին կարեկցութեամբ, ցաւով ու սիրով նայումէ նորա վերայ. Գիվը Նազարի հայեացքների ջերմ ճառագայթները, չեն աւելի տաքացնում Ընթարի սիրտը։ Նա ցած է թողում երկու կաթիլ խոշոր արտասուք, և կամոգին փաթաթվումէ նորան։ Ընթարը, որպէս թէ քնից զարթած արիւնը զարկելով յանկարծակի, ընկնումէ սիրական դիրքը, և կարմրումէ միաք բերելով իւր սառնութիւնը դէպ ի Գիվ-Նազարը։ Նորա կրակը զօրաւոր կայծով թռաւ, անցաւ Ընթարի սիրտը։ Ակը ալեկոծից նորա բոլոր կենդանութիւնը, և վառից նորան փառահեղութեան ա-

պէղնագոյն բոցովը, յետոյ ընկղմեց նորան զմայլեցուցիչ ալբեր-
յումինան մէջ. ու անոյշ զուգահառնութիւն քնի, թաղիացման
և մահու, ու բոպէական օրինակ երեմեական հրջանկութեան, —
և Ընթալը կապած իւր կրակոտ սիրականի շրթունքի հետ,
քաղցր և անոյշ քուն եղաւ նորա լանջքի վերայ — քուն եղաւ
յաւիտեան: Փերին տալով նորան վերջին համբոյրը, նետ շըն-
չեց նորա հոգին իւր մէջ, և միաւորեց նորան իւր հոգու հետ:
Գիւղ-Նազարը կատարեց իւր վերայ դրած ուխտը: Ընթալի
հոգին յաւիտեան ապրելու է իւր սիրածի սիրալից հոգու մէջ,
առանց ձանձրանալ լինելու այն դառնութիւնը, որ հետևում
սիրու վայելչութեան քամակից, մարդուս երկրաւոր կեանքի
մէջ:

Նորա կենդանութիւնը շինած յանկարծ, բայց նորա մար-
մնի մէջ, և մահուց յետոյ, բոլոր երակները երկար միջոց դող-
դոջումին վերջին բոպէի բաղդաւորութեան ձայնարկութեամբ
րը, այնպէս, ինչպէս քրիստոնէական զանգակի վերջին հարուա-
ծը անվերջանալի կերպով երկարանում Լիբանանու խուլ սա-
րերի մէջ:

Հաւատարիմ Փերին բայց չէ թողում նորան իւր ղրկից:
Նա սիրահար սեղմում սրտին իւր սիրականի սառն դիակը,
ոդոդելով նորան ջերմաջերմ արտաշունչով: Նորա ջերմութիւնը
տաքացնում մոմոմալիոնեայ մարմինը Ընթալի, և սառն դիա-
կը դեռ ևս պղում սիրու քաղցրութիւնը իւր մահերևութի
վերայ:

Նորա անդամները կապուտակեցան, մարմինը արդէն բա-
ժանվում ոսկրներից, բայց Փերին այնու ամենայնիւ հրաժար-
վում չէր նորանից: Նա դղրդելով պահում ձեռքերի մէջ
իւր ամենասիրելի մարդու հոգեղէն նշխարները, և թեքում
դէպ ի իւր, կամենի պէս սպիտակ լանջքը: Նա երբեք չէ բաժան-
վելու այն մարմնից, որին սիրել էր այնքան կամոզին սիրով:
Բարեբաղդ մարդ . . . . .

Ահա Ընթալը յեղափոխվել է մի սպիտակ, ջոր, այլանա-
կած ոսկերոտի. սակայն Գիւղ-Նազարը ոչ մի վայրկեան յետ
չէ քաշում այն ձեռքերը, որով ղրկահառնել էր նորան մե-
ռանելու միջոցին, և սիրականի ցամաք ոսկրները շօշափվելով

նորա համբոյրներից, շատ անգամ զգածվումէին ամենաքաղցր հոգեմտերութեամբ:

Ձայց և ոսկրները փոսումեն: Ընթարի ոսկրները փտեցան, բայց աղնիւ սիրոց հնամաղտու սիրտը ճնաց անփոխոն: Ժարիւրաւոր տարիներից յետոյ, զեռ ևս կարող էիք դուք տեսանել հեզաբարոյ փերին անշարժ հանգստացած նոյն տեղում, ուր նա վերջին անգամը զմայլված էր սիրու երջանկութեամբ իւր սիրականի գրկումը: Մի ձեռքի վերայ հաստատել էր իւր չքնաղ գլուխը, սև ու արձակ մազերով հովանաւորված. միւս ձեռքի մէջ պահումէր նա մի բուռն մոխրագոյն փոշի, բոլոր ճնացորդը այն մեծ և հոյակապ Ընթարից:

Գիւղ-նազելը քաղցրութեամբ նայումէր այդ մի բուռն ցնդական փոշու վերայ. նորա աչքից մի կաթիլ արտասուք ցած ընկաւ այդ փոշու վերայ. և սիրական մտհկանացուի փոշին, խոյն պատուավելով այս իւր սրտի սիրած, երկնառաք հրեշտակի ջոլա կողմը, միաժամանակ ջերմացաւ սիրու քաղցրութեամբը:

Գ. Յ. Պոխալեան:

ՆԱՀԱՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԻՒ

ԹԷ Ի՞ՆՉ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒՆԻ ՄԻ ԱԶԳԱՑԻՆ ԹԷԱՏՐՈՆ·

—

Մի ընդհանուր անընդդիմանալի ձգտողութիւն պէտք ի նոյն և անսովոր բանը, մի յանկութիւն զգալու իւր մէջ մի կրքոտ շարժողութիւն, ինչպէս ծանօթ աբանում Ջուլցեր ձաշակաբեա զերմանացին, յառաջացուցել է թէատրոնական բեմի դոյութիւնը: Սպրդս սպառված լինելով վերին իմացական աշխատութիւններից, վատահած իւր կոչման միատեսակ, շատ անգամ վհատեցուցիչ գործերից, կամ թէ զգալի վայելչութիւններով յագեցած, սիրտ է մի պատարկութիւն զգալ իւր հոգու մէջ, որ հակառակ է նորա անընդհատ ձգտողութեանը դէպ աշխատասիրութիւն: Սոր բնութիւնը հաւատարակէս անընդունակ, որպէս չափից դուրս երկար կալ և ճնալ շնչականի որպիսութեան մէջ, նոյնպէս և իմացականութեան աւելի նուրբ աշխատութիւնքը յառաջ տանել, պահանջում է մի միջակային զբաղութիւն, որ միաւորէր երկու հակառակ ծայրերը, որ հոգու ստատիկ լարողութիւնը մեղմացնէր մի քաղցր ներդաշնակութեամբ, և թեթևացնէր փոխաբերութիւնը մի պրութիւնից դէպ ի միւսը: Այս օգուտը հասուցանում առհասարակ դերեզկադիտութիւնը կամ թէ դերեզիկ բանի զբաղողութիւնը: Ահա որովհետև մի իմաստուն օրէնսուի առաջին ուշադրութիւնը սիրտ է այն լինի, որ նա երկու ներդործութիւնների միջից ընտրէ առաւել վերինը, ապա չէ բաւականանալու նա իւր ժողովրդի հակամիտութիւնքը անվնաս կացուցանելով միայն. նա, եթէ որպէս և իցէ կարելի էր, գործ կը դնէ այդ հակամիտութիւնքը, որպէս աւելի բարձր դիտաւորութիւնների սպասաւոր անօթներ և կ'աշխատէ յեղափոխել զրոյից դէպ ի երջանկութեան աղբիւրներ,

և այդ պատճառով ընտրելու էր նա ամենից յառաջ թէատրոնական բեմը, որ գործականութեան ծարաւող հոգուն բացուում մի անվերջ ասպարէզ, ամեն մի հոդեղէն զօրութեանը տալիս է ինունդ, առանց թոյլ տալու որ մինը դոցանից սանձակոտոր լինի, այլև խնդականութեան ու սրտի դաստիարակութիւնը միաւորում մի շատ ազնիւ խօսակցութեան հետ:

Ա՛յն մարդը, որ առաջին անգամը նկատել էր, թէ մի ազգութեան առաւել ամուր սիւնը Կ ր օ ն ն է, թէ առանց դրա նոյն իսկ օրէնքը թոյլ ու անզօր էին, դուցէ ակամայ կամ անգիտութեամբ ջատագով է գուրս եկել թէատրոնական բեմին, դրա շատ ազնիւ կողմից: Սոյն այս անբաւականութիւնը, այս յոդդողդուն յատկութիւնը քաղաքական օրէնքների, որ կրօնը անհրաժարելի է կացուցանում ազգութիւնների համար, որոշում նոյնպէս թէատրոնաբեմի բարոյական ազդեցութիւնը: Օրէնքը, կամեցած էր այդ մարդը ասել, դործ ունին միայն բացասական պատասխանութիւնների հետ — կրօնը ընդարձակում իւր պահանջելիքը ճշմարիտ գործոցութեան վերայ: Օրէնքը դադարեցնում միայն այնպիսի ներգործութիւնք, որ քաղաքէ են ընկերական կապակցութեանը — կրօնը հրամայում այնպիսի գործել, որ դրան աւելի ամրացնում են: Նրա իշխանութիւն ունին միայն կամքի արտաքին յայտնութիւնների վերայ, նոցա սահմանադրված են գործել միայն — բայց սա յառաջ է տանում իւր դատաւորական իշխանութիւնը մինչև սրտի ամենածածուկ անկիւնների ներսը, և հետևում մտածութիւնների քամակից մինչև նոցա առաւել նեղքին ազդիւրը: Օրէնքը կոկ ու կակուղ են, այնքան էլ փոփոխական, ինչպէս սրտի տրամադրութիւնը և կիրքը: Կրօնը կապում խիստ և յաւիտենական կապով: Եթէ մեք կամենայինք ենթադրել մի բան, որ երբէք էութիւն չունի — եթէ մեք ընծայէինք կրօնին այս մեծ իշխանութիւնը ամեն մարդու սրտի վերայ, կը լսացուցանի՞ դա կամ թէ կարող էր լսացուցանել բոլոր մարդկային կրթութիւնը:—Կրօնը (ես այս տեղ բաժանում եմ նորա քաղաքական կողմը իւր աստուածային կողմից) կրօնը, խօսելով առհասարակ նկրդործում աւելի ժողովրդի զգայական մասնի վերայ — նա դուրկ թէ նկրդործումը այնքան անտարակոյս իւր զգալի կիրպարանքով միայն: Նորա զօրութիւնը կը չքանայ, եթէ մեք խլէինք նորանից այդ զգա-

լի կերպարանքը — և ինչով է ներդործում թէատրոնական բեմը: Կրօնը ժողովրդի առաւել մեծ բաժնի համար ոչինչ է, եթէ ընաջինջ առնենք նորա պատկերքը, նորա խորհրդաւոր նշանաոյյքը, եթէ նորա, երկինք ու դժոխք նկարագրող պատկերները ոչնչացնենք — և միթէ սոքա այլ բաներ էին քան թէ երևակայութեան պատկերներ, առակներ առանց մեկնութեան, ահագոյիչ կամ գրաւիչ պատկերներ, որ երևումէին հեռուից: Ինչ ոյժ ու ատտկութիւն պիտոյ է ստանալին կրօնը և օրէնքը, դաշնաւորութիւն հաստատելով թէատրոնական բեմի հետ, ուր ամենայն բան անկայտնի տեսանելի է, ուր ամենայն բան կենդանի ներկայութիւն է. ուր յանցանք ու առաքինութիւն, երջանկութիւն ու թշուառութիւն, յիմարութիւն ու իմաստութիւն հաղորդաւոր պատկերներով պարզ ու պայծառ անցանումեն մարդու մտից, ուր նախատեսութիւնը մեկնում իւր ծածկամիտ առակքը, իւր կնճիռները արձակում նորա աչքի առաջև, ուր մարդկային սիրտը աստի տանջանաքանի մէջ խոստովանում իւր ամենամեղմ շարժողութիւնքը, ուր վայր են ընկնում խաբեբայական դիմակները, փախչում ամենայն անգոյը (երեսի դէղ) և ճշմարտութիւնը անկաշառելի, որպէս Ոսադամանթոս դատաստան է կատարում:

Այս դատաստանական իշխանութիւնը թէատրոնական բեմի սկսանում այն տեղ, ուր վերջանում աշխարհական օրէնքներուն սահմանը: Երբ որ արդարութիւնը կուրանում արծաթով, և իրրև արատի թոշակները ղեղհանում. երբ որ կարողներուն ապիրատութիւնը արհամարհում օրէնքի թուղթութիւնը և մարդու երկիւղը կապում քաղաքական մեծատուներուն ձեռքը, այն միջոցին թէատրոնական բեմը յանձն է առնում սուր ու կշեռ, և դուրս է քարշում արատները մի ահաւոր դատաւորի աթոռի առաջև: Խորը թագաւորութիւնը երևակայութեան և պատմութեան, անցած ու գալոց օրերի, պատրաստ է հնազանդել նորա հրամաններին: Յանդուգն յանցաւորներ, որ վաղուց արդէն նեղուածքին հոգի մէջ, բանատեղծութեան ամենակարող ձայնովը այժմ դուրս են գանչվում հանդէս, և կրկնումեն իւրեանց ամօթալից կեանքը ստատիկելի խրատներ տալով ապագայ օրերին: Ընդօր ու անկարող, մի դադաւոր հայելու տեսնելի պէս, շրջումեն մեր աչքի առաջև նորա դարու ահընկէց կեր-

պարանքներըը, և մի հոգեպարար առեղծուածեամբ անիծուածներ մեք նոցա յիշատակը: Երբ որ վերջանուածք ամենայն բարոյականուածեան դասատուութիւն, երբ որ կրօնը չէ գտանուած հաւատաւ աւելի, երբ որ չկայ օրէնք այլևս, այնուհետև դեռ ևս զարհուրանք է բերելու մեր վերայ Մ է դ է ան, երբ որ նա անդուդներից ցած է դողդոջում և ահա կատարվել էր մանկասպանուածիւնը: Փրկաբէա զարհուրանքներ պիտի դղրդեն մարդկուածեան սիրտը, և ծածուկ աներն մարդ ուրախանալու է իւր բարի խըղճմտանքի վերայ, երբ որ Լաւլի Մակբէթը, մի սոսկալի դիշերաշրջիկ կին, լուանում իւր ձեռքերը և գոռծ է դնում Ամբիսյի բոլոր անուշահոտուածիւնքը, սպանուածեան արիւնի հոտը վարատելու համար: Ինչպէս որ անտարակոյս, աւելի ստոյգ է ներգործում մի սիանատես յանդիմանացուցուածիւն, քան թէ մեռեալ տառը և սառն պատմուածիւնը, նոյնպէս անտարակոյս ներգործում է թէատրոնական բեմը աւելի խոր և աւելի տևողապէս քան թէ բարոյականուածիւնը և օրէնքը:

Բայց այս տեղ նա ձեռնտու է միայն աշխարհական արդարուածեանը—նորա առաջև բաց է մի ևս առաւել ընդարձակ դաշտ: Հաղարաւոր արատներ, որոնց համբերում նա անպատիժ կացուցանելով, պատժվում են թէատրոնական բեմի առաջև. հաղարաւոր առաքինուածիւնք, որոնց մասին լուռ է աշխարհի արդարուածիւնը, գովաստանուածիւն են ստանում թէատրոնական բեմի բերանից, այս տեղ հանդէս է բերում նա իմաստուածիւնը և կրօնը. այս մեքուլ աղբիւրից հանում նա իւր խրատները և օրինաները, և դիւտաւորում խիստ արատականուածիւնը մի քաղցր դաւիչ դիտաւով: Ո՛նչ փառաւոր պատգուածիւններով, առաքինուածիւններով, ախտերով լցուցանում մեր հոգին, ո՛նչ աստուածեղէն գաղափարներ կացուցանում մեր աչքի առաջև նմանողուածեան համար: Երբ որ մարդասէր Օդոստոս դատաստան Աիննային, որ կարծում ահա թէ կարդում իւր մահու դատակնիքը նորա շրթունքի վերայ, այնպիսի մեծուածեամբ, որպիսի էր նորա պաշտած աստուածներին մեծուածիւնը. երբ որ մարդասէր Օդոստոս ձեռքը մատուցանում Աիննային ասելով. «Ծո՛ղ բարեկամ լինինք մեք, Աի՛ննա.»—ո՛ր մարդը բանականուածեան մէջ այն լուսեղին կամեսալու չէր քաղցրուածեամբ ներել իւր մահու չափ աներն թշնա-

մուն, այն հոյակապ հռոմէացի մարդուն նմանելու համար։ — Ահեղ Գլանց Ջնջիչքեանը ձանապարհ դուրս գալով, որ պատժէ մի բռնաւոր իշխան և պատերազմէ օտարի իշխանքի համար, յանկարծ կեաս է նայում և տեսանում իւր ամբոխի հպարտացքի ծուխը վեր բարձրանալով, ուր անօգնական կեաս էին մնում իւր կին ու զաւակը, բայց նա — յառաջ է տանում իւր ձանապարհը, որ հաստատիմ կինայ իւր տուած խօսքին — այս տեղ ի՛նչ մեծութիւն է տանում մարդս, և ի՛նչպէս փոքրանում ու արհամարհելի է դառնում այն կասկածելի, անյաղթելի ձակատագիրը։

Նոյնպիսի տգէղ կերպարանքով, ինչպէս առաքինութիւնը գեղեցիկ ու սիրելի էր, պատկերանում ահեն արատները իւրեանց հայելու մէջ։ Երբ որ անօգնական, պարզամիտ Լեսալը գինեւոլով փոթորկի մէջ կոծում իւր աղջկայ տան դուռը, բայց չէ գտանում ընդունելութիւն. երբ որ նա իւր ջերմակ մազերը տալիս է հողմին, և զայրացած տարերքին պատմում թէ ի՛նչպէս անգութ էր գտանվել նորա կին Լեդանը, երբ որ նորա կատաղի ցաւը դուրս է թափվում այն ահաւոր խօսքերովը. «Ես ամենայն բան տուեցի ձեզ. — այնուհետև ի՛նչպէս գալշելի է երևում մեզ ապերախտութիւնը. և ի՛նչպէս սուրբ հանգիստութեամբ ուխտ էինք դնում մեք, պատկառանք ու որդիական սէր ցուցանել մեր ծնողին։

Բայց թէատրոնական բեմի գործակատարութեան ասպարէզը աւելի ընդարձակ է գործանից։ Եւ այն տեղ, ուր կրօնը և օրէնքը արժան չեն համարում իւրեանց կոչմանը հանդէս բերել մարդկային զգացողութիւնքը, նա գործունեայ է դեռ ևս մեր կրթութեան համար։ Հատարակութեան երջանկութիւնը այնքան ևս յաձախ խառնակվում է յիմարութեամբ, որքան յանցանքներով և արատներով։ Մի փորձ, որ այնքան հին է, ինչքան աշխարհը, ուսուցանում է մեզ թէ մարդկային իրողութիւնների հիւսուածի մէջ, շատ անգամ ամենամեծ ծանրութիւնքը կախված են շատ փոքր և ամենանուրբ թելերի վերայ, և մեք յետ գնալով և գտանելով գործերի աղբիւրքը, տասն անգամ պիտոյ է ժպտէինք, մինչև թէ միանգամ կը զարհուրէինք։ Մեր ցուցակը չպատրաստելի օրէ օր աւելի փոքրանում է,

բայց մեր ցուցակը յիմարների օրէ օր բազմանում ու երկարանում է։ Նրանք մի սեռի բոլոր բարոյական մեղապարտութիւնը յառաջանում են մի և նոյն աղբիւրից, նրանք այն բոլոր անձնաւոր տարաբայման արատներն, որ մի ժամանակ խայտառակել էին դրան, ոչնչով բան չեն, նրանք ոչ, լոկ փոփոխած ձևեր, մի միայն աւելի վերին աստիճանք մի յատկութեան, որ վերջապէս մեզ ամենևին անքան միաբերան ծիծաղելով թոյլ էինք տալիս և սիրում էինք, ապա ինչու պիտոյ է բնութիւնը մի այլ սեռի մասին չլինելը դնացած մի և նոյն ձանձրալիներով։ Մեզ յայտնի է միայն մի հատ գաղտնի հնար, պահպանելու մարդկութիւնը վատթարութեան երեսից, և դա է — պաշտպանել մարդու սիրտը թուլութիւններից։

Այս ներդործութեան մի մեծ մասը կարող ենք յուսալ թէատրոնական բեմից. նա է, որ այն բազմաթիւ յիմարների առաջև բռնում է հայելին, և նոցա հաղարատարատիկ տեսակները ամօթահարտ է կացուցանում փրկուէտ կատականքով։ Ինչ որ նա վերևում ներդործութիւն սիրտ շարժելով ու ահ բերելով, յառաջացնում այս տեղ (դուցէ աւելի շուտ և անվնաս) խաղով ու երգիծաբանութեամբ։ Նրանք կամենք մեք կշռել կատակերգական և ողբերգական խաղարկութիւնքը, միտ դնելով թէ ո՛րը դոցանից յառաջացնում է աւելի ներդործութիւն, այնուհետև փորձը տալու էր նախապատուութիւնը դուցէ կատակերգականին։ Կատականք ու արհամարհանք վերաբերութեան մարդուս հպարտութիւնը աւելի ցաւեցուցիչ կերպով, քան թէ դարշութիւնը կարող էր տանջել նորա խիղճը։ Հարկու մարդու երեսից փախչում ենք ու կծկվում մեր երկչոտութիւնը, բայց սոյն իսկ երկչոտութիւնը մատնում է մեզ երգիծաբանութեան խայծոյին։ Օրէնքը և խիղճը շատ անգամ պահպանում են մեզ յանցանքի ու արատների երեսից. բայց ծիծաղելի բաները կարօտ են մի յատուկ նուրբ զգայարանի, որ ոչնչով տեղ այնքան յաճախ գործ չենք դնում մեք, երբ ոչ, թէատրոնական բեմի վերայ։ Դուցէ թէ մեք տալու էինք մի բարեկամի իշխանութիւն յանդիմանել մեր վարքը և սիրտը, բայց կը դժուարանայինք մեք ներել նորան, երբ նա ծիծաղէր միանգամ ևս։ Մեր անպատշաճ գործերը տանում են մի վերակացու և դատաւոր, բայց մեր անկարդութիւնքը հաղիւ թէ մի ակա-

նաեւս վերայի։ Թէատրոնական բեմը միայն կարող է կատակերով ծիծաղել մեր պակասութիւնների վերայ, որովհետեւ խնայում է մեր զայրացկոտ սրտին եւ չկամի դիտել, թէ ով էր պատասխանը մեր հիմարը։ Առանց կարմրելու ամօթից, տեսանում ենք մեր դիմակը, որ վայր էր ընկնում նորա հագելու միջից, եւ մեր սրտում շնորհակալ ենք այդ մեղմ ազդարարութեան համար։

Այդ թէատրոնական բեմի մեծ գործակատարութեան սպարէզը դեռ եւս վերջացած չէ։ Թէատրոնական բեմը, աւելի քան թէ որ եւ իցէ հրապարակական կարգադրութիւն սէրու-թեան մէջ, է գործական խնամատարութեան դպրոց, մի ուղեցոյց քաղաքացի կեանքի մէջ, մի անհրաժարելի փականք, որ բացում է մարդկային հոգու աւելի ծածուկ մուտքերը։ Գիտուք թէ անձնասիրութիւնը եւ խղճմտանքի խստացուցանելը շատ անգամ ոչնչացնում են նորա աւելի լաւ ազդեցութիւնը, գիտուք թէ դեռ եւս հազարաւոր արատներ անամօթ երեսով կանգնած են նորա հագելու առաջեւ, թէ հազարաւոր դեղերիկ զգացողութիւնք ոչինչ տպաւորութիւն չեն գործում նայողի սառն սրտի վերայ — եւս ինքս այնպէս եմ կարծում, որ Մոլիերի «Տարտագոն» անուն թէատրոնական գլուխգործը, չէ ուղղել ոչ մի անիրաւ տոկոսառու, թէ անձնասէր Ռևիլլէի օրինակը, թէատրոնական բեմի վերայ դեռ եւս չէ դադրացուցել նորա հղբայրակիցների շահերը, այն գայլերի թղթախաղութեան ախտից. այո, թէ նոյն իսկ Շիլլերի գրած Կարլոս Մօրի թշուառ պատմութիւնը աւազակների մասին, շատ աւելի ապահովելու չէ դաշտի ճանապարհները, քան թէ յառաջ — կամ թէ Գոդոլի Բևվիզօրը, որ պատկերացնում Ոուսսայ ազգի առաջեւ, նորա կաշառակեր եւ խաբեբայ պաշտօնակալների ընթացքը, մի մտաշահ եւս բարւոքացուցել չէ դադրա բարոյական ոգիսութիւնը (բարք ու վարքը) — բայց թէեւ այս մեծ ազդեցութիւնը թէատրոնական բեմի սահմանափակելինք մէջ, թէեւ մեք կամենայինք լինել այնքան անիրաւ, որ եւ վերացնելինք նորան, այնու ամենայնիւ ինչքան շատ ու շատ բան մնալու էր մեզ նորա ազդեցութենից։ Ահեկ նա այն արատների դէմ մարը ոչ բնաջինջ է առնում եւ ոչ թէ փոքրացնում է, բայց միթէ նա չէ ծանօթացուցել մեզ դոցա հետ։ — Այս արատաւորների, այս հիմարների հետ ստիպուած ենք մեք ապրել միասին. մեզ

պիտոյ է կամ երեսը շրջել նոցանից կամ թէ հանդիպել նոցա. մեզ պիտոյ է կամ քանդել ու կործանել նորանց կամ թէ յաղթվել նոցանից. բայց այսուհետև կարող չէն նոքա անպատրաստի գտանել մեզ. մեք յառաջուց պինդուրված ենք ընդդէմ նոցա դարանագործութիւններին: Թէատրոնական բեմը մատնել է մեզ այն գաղտնիքը, թէ ինչպէս պիտոյ էր յայտնի կացուցանել և անվնաս պահել նորանց: Նա խլել է կեղծաւորի երեսից նորա արուեստական (շինուվ) դիմակը և յայտնագործել է այն որոգայթները, որ դրել էին մեզ խորամանկութիւնը և դաւաճանութիւնը: Խաբեբայութիւնը և սուտը դուրս է քարշել իւր ծուռ ու թեք լաբիրինթոսներից, և ցոյց է տուել նոցա սոսկալի երեսը ցերեկին: Գուցէ թէ Սառան իւր մահու անկողնի մէջ չէ զարհուրեցնելու մի հեշտասէր երիտասարդ, գուցէ թէ բոլոր պատկերացոյցքը պատժված մոլորեցուցիչների չէին դեռ ևս պաղեցնում նորա բոցավառ ցանկութիւնը, դիցուք թէ և խորամանկ խաղարկու կինը աւելնայն կերպով աշխատուէր ցոյց չտալ հանդէսի մէջ այդ ներգործութիւնը — բայց երանի՜ մարդկութեանը, որ միամիտ անմեղութիւնը գիտէ այժմ նորա որոգայթները, որ թէատրոնական բեմը ուսուցել է նորան չհաւատալ երիտասարդ մարդու երդումներին և դողալ նորա սիրողական մեծարանքից:

Ո՛չ թէ միայն մարդկերի և մարդկային բնաւորութեան վերայ, այլև ձեռագործի վերայ զարձուցանում մեր ուշադրութիւնը թէատրոնական բեմը, և ուսուցանում մեզ այն մեծ արուեստը, համբերելու ձեռագործին: Մեր կեանքի հիւսուածքի մէջ հաւասարապէս մեծաքիչ պաշտօն են կատարում պոռոհաբը և բեռաբռնիչը. սորան կառավարութիւնք մեք, նորան պիտոյ է կուրծքն ստորագրենք մեր անձը: Խաւարման օգուտ կայ, եթէ անհանգիստ պատահարներ չէին դառնալու մեզ աւելնալին անպատրաստ, եթէ մեր հոգու քաջութիւնը, մեր խոհեմութիւնը վարժված էին նմանապիսի բաների մէջ, և մեր սիրտը ամրացած էր տանելու գալոց հարուածին: Թէատրոնական բեմը յանդիման է կացուցանում մեզ մի բազմօրինակ տեսարան մարդկային ցաւերի. նա արուեստաբար նկարա է ձգում մեզ օտար նեղութիւնների մէջ, և մի բոպէական ցաւը վարձատրում քաղցր արտասուքով և ազդում մեր մէջ մի փրկաւէտ

առաւելութիւն քաջահոգութեան և փորձառութեան։ Նորա հետ միասին հեռուումենք բարձի թռղի պատճ Ըրիադնէին, շրջելով ձայնարձակ Նաքսոսի մէջ. նորա հետ միասին ցած ենք իջանում Ուզոլինոյի սովամահութեան աշտարակը, նորա հետ միասին վեր ենք ելանում դէպ ի սոսկալի բարձրաւանդակը գլխատման, և նորա հետ միասին ականջ ենք դնում մահու հանդիսաւոր ժամու զարկողութեանը։ Այս տեղ, ինչ որ մեր հոգին ղղումէր աղօտ դուշակութեամբք, տեսանումենք բարձրաձայն և անհակառակելի հաստատուած նոյն իսկ բնութեան հարատաւ բացահօսութեամբը։ Տովէրի կամարակապի տակ հրաժարվումէ խաբուած սիրականից իւր թագուհու շնորհը։— Այժմ, երբ որ ահ ու դողի մէջ պաշարուած Ֆլրանց Ա՛օրը պիտոյ է մեռանի, փարատվումէ նորանից նորա դատաճան, սովորական (մոլար) իմաստութիւնը։ Յաւիտենականութիւնը յետ է ուղարկում մի մեռած գնացած մարդ, որ յայտնէ այնպիսի գաղտնիք, որ չէ կարող դիտել ոչ մի կենդանի մարդ, և ապահով չարագործը կորուսանումէ իւր վերջին սոսկալի պատուգրանը, որովհետև գերեզմաններըը էս լեզուագիտութեամբ դուրս են քարոզում ծածուկ բաներ։

Այլ բաւական չէր, որ թէատրոնական բեմը ծանօթացնում մեզ մարդկութեան գլխի անցքերի հետ. այլև ուսուցանումէ նա մեզ լինել աւելի արդար դէպ ի անբաղդը, և դառնալ նորան շրջանկատ կերպով։ Այն ժամանակ միայն, երբ որ չափած ու կշռած էինք նորա տառապանքի խորութիւնը, կարող ենք ասել մեր դատաւճիռը նորա վերայ։ Ոչինչ յանցանք այնքան ամօթալից չէ, ինչպէս դողի յանցանքը,—բայց մի թէ մեք ամենեքեանքս չենք խառնում մի ցաւակցական արտասուք մեր դատաւճռի մէջ, երբ որ խորտուռս էինք լինում այն զարհուրելի սոսկալքի մէջ, ուր Էդուարդ Բուբերդը կատարումէ դործը։—Ընձեռնապանութիւնը առհասարակ գարշելի է որպէս մի եղեռնագործութիւն, բայց եթէ Ա՛արխանան զիշեր ցերեկ լսելով իւր կատաղի հօր սպառնագին խօսքերը, սիրու ախտիցը ալեկոծված, և մոռնալով այն սոսկալի մենաստանի պատերի վերայ, որ սպասումէին նորան, խռովի թռչնի բաժակը, ով մեզանից կամէր լինել առաջինը, որ այդ արտասուէր, մի անաստուած մոլորութեան ղէմ պարձած սպրկայ վերայ չարժէր

իւր պատուհասի գաւազանը։ — Ստորագասիրութիւն և նեղսրտութիւն սկսանումեն օրէ օր թագաւորել մեր ժամանակումը. նոցա ձեռադպրինները թափանցել են մինչև դատարանները, սը և աւելի խոր — այսինքն մեր իշխանների սրտի մէջ։ Ի՛նչքան բաժին այս աստուածային գործից հասանում մեր թէատրոնական բեմերին։ Ա՛ի թէ դոքա չէին, որ ծանօթացնում էին մարդս մարդու հետ և մերկացնում էին այն ծածուկ ու թագուն անիւնների շարժողութիւնքը, որոնց հետևում նա գործելու միջոցին։

Ուշադրութեան արժանի մի տեսակ մարդիկ պատճառ ունին աւելի շնորհակալ լինելու թէատրոնական բեմից, քան թէ բոլոր միւսները։ Այդ տեղ միայն լսումեն աշխարհի մեծամեծքը, ինչ որ երբէք լսում չեն, կամ թէ շատ հազիւ լսումեն, այսինքն ճշմարտութիւն, որ կամ երբէք տեսանում չեն, կամ թէ շատ սակաւ տեսանումեն, այսինքն մարդս, ինչպէս որ դա իսկութեամբ է։

Ահա թէ ի՛նչքան մեծ և բազմամանուկ է մի ընտիր թէատրոնական բեմի պարտիւնաւորութիւն, բարոյական կրթութեան մասին (*). ոչինչ պակաս օգտաբեր է նա իմացականութիւնը յառաջադէմ առնելու։ Այն այս տեղ, այս վերին հանդիսարանի մէջ կարող է մեծահանճար մարդը, կրակոտ հայրենասէրը ամենևին գործ գնել և պիտանի կացուցանել թէատրոնական բեմի խորհուրդը։

Ահա մի հայեացքով միջամուխ է լինում մարդկային ազգի մէջ, համեմատում ազգեր ազգերի հետ, դարեր դարերի հետ

(*) Մեր խօսքը այս տեղ այն անառակ թէատրոնների վերայ չէ, ուր պատանի աղջկունք, բալետեան կաքաւաղք կարճ զգեստով և տրիկոտեան մարմնագոյն ստոքոհագուստով, այնպես թեքթեքվում ու ձգձգվում են, որ փոքր եր մնում իւրեանց ամօթոյքը ցուցանէին բազմութեանը. և սա ճարտարութեան անունով զարմանուժէր, խնդուժէր և ծափ էր զարկում այդ անպարկեշտ տեսարանի վերայ։ Ի՛նչ ասեմ այժմուս ֆրանսիական թէատրոնի մասին. այս տեղ ժողովքդի աչքի առաջև հանդէս են բերում նորահարսի ու նորափեսայի խաղալը միմեանց հետ, և փոքր եր մնում որ նորընծայ ամուսնիքը բազմութեան առաջև, հանէին իւրեանց վերայի հանդերձը, անկողին մտանելու համար. որպէս թէ թէատրոնին չի՛ չ առնելի բան չէր մեացել, եթէ ոչ, անպատուել ամուսնութեան գաղտնիքը։ Խայց մեք այս առարկայի վերայ մի այլ տեղ կը խօսենք աւելի ընդարձակաբար, ցոյց տալով այժ մեան ֆրանսիացոց հասարակութեան մարմնի բարոյական նեխութիւնը։

և գտանում է, որ ժողովրդի առաւել մեծ մասը կապած ու կաշկանդած է կանուխ արմատացած և մոլար կարծիքների շղթաներով, որ միշտ աշխատում էին փնասել նորա երջանկութեանը, որ ճշմարտութեան մաքուր ճառագայթները լուսաւորութեան միայն սակաւաթիւ ոոոնչն մարդիկ, որ իւրեանց փոքրիկ ստացուածը գուցէ թէ ձեռք էին բերած մի ամբողջ կեանք դործ դնելով դորա վերայ: Ինչով կարող է իմաստուն օրէնստուն հաղորդել իւր ազգը այդ ճշմարտութեանը:

Թէատրոնական հանդէսը է այն հասարակաց գետաձորը, որի մէջ ազգի մտածող և առաւել պատուական մասնիկը ցած է թափվում իմաստութեան լոյսը, և այն տեղից քաղցր շառաւիղներով տարածվում է բոլոր տէրութեան մէջ: Ընտրի ուղիղ ըմբռնողութիւնք, աւելի մաքուր հիմնական կանոններ, աւելի սուրբ դգացողութիւնք այս տեղից թափվում են ժողովրդի երակների մէջ. բարբարոսութեան, խաւար մնապաշտութեան մառախուղը, գիշերը փարատվում է յաղթող լուսի երեսից: Ընդքան պատուական արդիւնաբերութիւններից, որ ունի մի ընտիր թէատրոնական բեմ, կամենում եմ այս տեղ դլխաւորապէս յառաջ բերել երկուսը միայն: Նախ առհասարակ թատրոնը է, միայն քանի մի տանելակ տարրներից սկսեալ, կրօնների և հերձուածների եղբայրական ներողամտութիւնը միմեանց հետ:— Վեր ևս, յառաջ քան թէ Նաթան հրէան և տաճկի Սալահէդդինը ամաչեցուցած էին մեզ, այլև քարոզած էին մեզ այն աստուածեղէն ուսումը, թէ մեր երկիւղած աստուածպաշտութիւնը ոչնչ յարակցութիւն չունի մեր անձնական կարծիքների հետ Աստուծոյ մասին — յառաջ քան թէ կայսր Յովսէփ երկրորդը յաղթահարեց կրօնասիրական առելութեան սոսկալի վիշապը, թէատրոնական բեմը անկումէր մեր սրտի մէջ մարդասիրութիւն և հեղահոդութիւն, գարշելի պատկերները աբեղաների հեթանոսական կատաղութեան ուսուցանողներին մեզ փախչել կրօնական առելութենից — այս ահարկու հայելու մէջ սրբեց քրիստոնէութիւնը իւր երեսի կեղտերը: Նոյնպիսի բաղդատոր յաջողութեամբ կարելի էր թէատրոնական բեմից յաղթահարել դաստիարակութեան վրիպակները (սխալանքը). այս բանը յուսալի է, եթէ այդ մեծահշիւ խօսելիքը հանդէս բերվէին հրապարակի առաջև: Ո՛չ մի դործ այնքան մեծախոս-

հուրդ չէ տէրութեան համար, ինչպէս դաստիարակութեան խնդիրը. այնու ամենայնիւ ոչ մի դործ, մանաւանդ մեր Հայերի մէջ այնքան անտես արած չէ, ինչպէս սա. թէատրոնական բեմը միայն կարող էր մեզ սրտաշարժ և դղրդեցուցիչ օրինաւորելով յանդիման կացուցանել այն անբաղդ վիճակը բարձի թողն արած դաստիարակութեան. այս տեղ կարող էին մեր Հայերը ուսանիլ, հրաժարվիլ իւրեանց կամակոր, ինքնահաճոյ կանոններից. այս տեղ կարող են մեր մայրերը ուսանիլ խելացի կերպով սիրել իւրեանց զաւակները: Ծուռ հասկացողութիւնքը մոլորեցնում են դաստիարակողի սիրտը. և աւելի վատ, եթէ դրքա պարծենալով իւրեանց ոճով կրթութեան, կարդով ու դիտութեամբ աւերում էին այն մանուկ շառաւիղը իւրեանց ջերմեռանդեակների մէջ. բայց շառաւիղը Հայերի մէջ ինքեան ազէտ և անպատիարակ, ոյով և իցէ ձանձրալարհով մի մանաւուր դպրոց բանալով, մտածում էին ազդ լուսաւորել և մանուկներից մարդիկ պատրաստել դպրոց օրերի համար: Բայց ի՜նչ պիտոյ էր ասել Հայոց դաստիարակութեան մասին, եթէ դեռ ևս չունին դրքա մի ազգային սերմնարկութեան անդաստան:

Ընչին նուազ — միայն թէ տէրութեան դլխաւորքը և հոգաբարձուքը հասկանային այս բանը — կարելի էր թէատրոնական բեմից խրատել և ուղղել ազդի կարծիքը կառավարութեան ու կառավարողի մասին: Օրէնստուական իշխանութիւնը այս տեղ օտար պատկերներով կը խօսէր հպատակի հետ, ի՛արդարացնէր իւր անձը նորա դանգատների ընդդէմ, յառաջ քան թէ սրքա ձայն էին ստացել, և այդպէս փարատելու էր նոցա երկմտասիրութիւնը, առանց երևելու թէ այդպիսի դիտաւորութիւն ունէր. բայց ի հարկէ մի ազդ կամ մի տէրութիւն, որ սիրում իւր դործերը թագուցանել, ոյովհետև դրքա չարութեան դործեր էին, կարող չէ թոյլ տալ թէատրոնական բեմին այդպէս նեղդործել: Ծողունք այս մտածութիւնը և յաւելացնենք այս տեղ, թէ նոյն իսկ վատահասկութիւնը և գիւտադործական հոգին կարող էին թէատրոնական բեմից կրակի կայծեր ընդունել, եթէ բանաստեղծքը աշխատութեան արժանի բան համարէին և տէրութիւնը կամենար խոնարհեցնել իւր ուշադրութիւնը լսելու նոցա ձայնին:

Յամենեւին անկարելի է այս տեղ լուսաբանել այն մեծ ազդեցութիւնը, որ մի լաւ, հաստատուն թէատրոնի հրապարակ կարող էր ունենալ մի ազգի հոգու վերայ։ Մի ժողովրդի ազգային հոգի ասելով, հասկանում ենք նորա կարծիքների եւ հակումների նմանութիւնը եւ համաձայնութիւնը, այնպիսի առարկաների վերայ, որոնց համար մի այլ ազգ այլապէս է մտածում եւ զգում։ Թէատրոնական բեմին միայն կարելի է բազմարդիւն կերպով յառաջացուցանել դորան, որովհետեւ նա ձանապարհ է կատարում մարդկային գիտութեան բոլոր սահմանների միջով, կեանքի բոլոր դրութիւնքը լիովին յայտնի է կացուցանում եւ իւր ճրագի լոյսը ցած է շողեցնում դէպ ի բոլոր անկիւնքը, եւ ունի մի հարթ ու հաւասար ձանապարհ դէպ ի միտքն ու սիրտը։ Եթէ մի ազգի թէատրոնական գրուածներ մէջ թագաւորէր մի զլխաւոր յատկութիւն, եթէ մի ազգի բանաստեղծներ կամենային միաբանվել միմեանց հետ, եւ մի ամուր պաշն կապել այս նորհրդով — եթէ մի խիստ ընտրողութիւն առաջնորդէր նոցա աշխատութիւններին, նոցա գրիչը նուիրէր իւր անձը ժողովրդական նիւթերի — մի բառով, եթէ մի ազգ արժանացել էր այն պարծանքին, որ է ունենալ մի ազգային թէատրոնական բեմ, այնուհետեւ կարող էր նա ասվել ստուգապէս ազգ։ Ինչ բան այնպէս ամուր կապում միմեանց Յունաց ազգի մարդիկը. ինչ բան այնպէս անընդհմանալի քարշում, տանում նորանց դէպ ի իւրեանց թէատրոնական բեմը. ոչինչ միւս բան եթէ ոչ, հայրենական, հարազատ բովանդակութիւնը թէատրոնական գրուածների, յունական հոգին, այն մեծ յաղթողական օգուտը եւ փառքը տէրութեան, այն գաղափարքը աւելի ընտիր մարդկութեան մասին, որ նոցա մէջ փայլում էին։

Պիտոյ էր այս տեղ մի խնդիր առաջարկել եւ վճռել դորան. այսինքն կարող էին մեր սիրելի Հայերը իւրեանց այժմեան դրութեան մէջ ունենալ մի ազգային թէատրոնական բեմ։ Հայերը չունին ոչինչ ընկերական կեանք այժմս. կանայք ամենեւին արտաքսած են տղամարդերի հասարակութենից. շատ շատ, մի քանի պատահ մայրիկներ կարելի էր տեսանել ընկերական ժողովի մէջ, եւ մի քանի չոր ու ցամաք բառ խօսել նոցա հետ եւ մխիթարվել նոցա բարեսրտութեամբը միայն, որովհետեւ

մի այլ գեղեցկութիւն և դրաւիչ բան չէ կարելի գտանել նոցա մէջ, պատճառ որ ոչինչ դաստիարակութիւն ու կրթութիւն չեն ստացել դոքա, և կրթեալ՝ այդ տղամարդը, այդպիսի պառաւներուն հետ չգիտէր ինչից խօսք սկսանէր և ի՛նչ նիւթով յառաջ տանէր խօսքը: Ընկերութեան մէջ երիտասարդ աղջիկների հետ մի խելացի խօսակցութիւն բանալ, մի փոքր մխիթարվել նոցա սրտի և հոգու ազնիւ ու սիրաշարժան յատկութիւններով. այդ մի չլսած ու չտեսած բան է: Եւ ի՛նչպէս կարող է մի հայ երիտասարդ, մի մանուկ աղջկայ հետ մի քանի բառ խօսել հասարակութեան մէջ: Այս բոլորը ի հարկէ յառաջանում այն բանից, որ առնացի և կանացի սեռքը չեն պատրաստված միմեանց համար, բայց պէտք է ասել, որ ընկերական կրթութիւնը անկարելի բան է առանց կանանց մանակցութեանը տղամարդի հասարակութեան մէջ: Աւրօրացող բոլոր ու վարքի ազնուացուցիչքը եղել են միշտ կանանց ընկերութիւնք, և առանց սոցա միասին ոչ նոքա նոյնպէս կոպիտ ու սոսկ, ինչպէս ասիական բարբարոսքը: Եւ ի՛նչ ազգի մէջ կանայք չունին ազատութիւն, և ընկերական կեանքը զուրկ է իւր համեղացուցիչ ազդից, և ոչինչ բարոյական յատակցութիւնք կարող չեն յառաջանալ տղամարդի ու կնամարդի մէջ, այն տեղ ի հարկէ բաւական նեղանում թէատրոնական բեմի ասպարէզը: Ասացինք վերևում, թէ՝ այդ ազգը չունի ընկերական կեանք, ըստ որում անկարելի է դա առանց ընկերական կրթութեան, և ընդհանուր լուսաւորութեան: Այդ ազգը համարեա՛ թէ բոլորովին վաճառական է, ունի միայն նիւթաւոր առևտրական կապակցութիւն օտարի կամ իւր ընկերի հետ. մի այլ հաղորդակցութիւն, իմացական առևտուրք չգիտեն՝ այք. որովհետև բոլոր խօսելիքը այդ ազգի մէջ լոկ արծաթի ու շահասացութեան վերայ է, և ամեն մարդ ունի իւր առանձին ու ջոկ օգուտը, ուրեմն և ամեն մի՝ այ առանձնացած ու օտարացած իւր մտքով ու սրտով, նստած է մի անկիւնում, անկարօտ մի այլ հաղորդակցութեան իւր ընկերի հետ, որ հնարաւոր էր միայն լուսաւորութեամբ և ընդհանուր գաղափարներով ազգի և մարդկութեան մասին: Այ մարդը չէ զգում իւր մէջ հարկաւորութիւն մի բան մնանաւորելու, տալու ընկերին, որովհետև չունի այդ մնանաւորելի, տալի բանը: Ուրեմն և ոչինչ

պատճառ չունի նա որոնելու կամ մօտենալու իւր ընկերին։ Հարսանիք, կնունք և թաղումն են այն միայնակ հանդիսները, ուր մի հայ մօտենում էր միւսին և կարող էր պատահմամբ խօսք ու զրոյց բանալ մի ընկերական խնդրի վերայ, կարծիք յայտնել այս նիւթի և այն մարդու վերայ որ ներկայ չէր, բայց խօսակցութեան նիւթ էր դառնում մի քանի ժամուայ տևողական, ժողովի մէջ։ Ազգասիրական գործերի և ձեռնարկութիւնների խորհրդակցութիւնք և ընկերաբար մտածութիւնք անլսելի բան են հայերի մէջ։ Այն արուեստակից (հաճքալ կամ Անաճ առած) միաբանութիւնքը, որոնց շատ սիրում են մեր թիֆլիսեցի հայերը մեծ զօրութիւն ու ազդեցութիւն ընծայել, ամենևին արուեստքին բան են, և ոչինչ խորհուրդ չունին, եթէ ոչ մի արուեստքին կարդ ու կանոն պահելու այդ արուեստակիցների մէջ, և հսկելու նոցա նիւթական օգտի վերայ։ Աւելի լաւ հասուստութիւնը մեր ասածներին տալիս է այն բանը, որ ոչ մի տեղ այդ արուեստակիցների հոգաբարձութեամբ չէ յառաջացել մինչև այժմ ոչինչ ընկերական կարգադրութիւն, ոչ մի ուսումնարան, ոչ մի ժողովրդական գրանոց, ոչ մի ընթերցանութեան կամ մի այլ լմնցական գործողութեան ժողով։ Սակայն այժմեան հայերի բարք ու վարքը ընդհանրապէս, դոյա պատրաստութիւնը և հայեացքը աշխարհական բանների վերայ, դոյա թերութիւնքը և կատարելութիւնքը միասին միայն հանդէս հանելու թէատրոնական բեմի վերայ։ Եւ այս կողմից ահա, մի հայկական թէատրոնաբեմ շատ ու շատ հարկաւոր է մեզ հայերիս որպէս ազգու ներգործող խրատ, որպէս պատիժ և քաջալերութիւն, որպէս հայելի պատկեր մեր հայկական կեանքին, որպէս մի մեծ դաստիարակիչ դպրոց մեծ ու փոքրի, կնամարդի ու տղամարդի համար։ Այդոց թէատրոնական բեմը, ազգային լինելու համար, պիտոյ է ազգային պատմութենից այնպիսի ժամանակներ վեր առնու և հանդէս բերէ ժողովրդի առաջև, որ կարող էին դաստիարակել ժողովուրդը դէպ ի ազգասիրութիւն, դէպ ի մի առողջամիտ հայասիրութիւն. և մի հայկական թէատրոնաբեմ կարօտ է անպատճառ թէատրոնական բանաստեղծների, որ կարողանային օրինաւոր միակերպ պատմական նիւթը և յարմարաւոր կացուցանել նորան ժողովրդի ունկնդրութեանը։ Այդոց այդոց թէատրոնական բեմը, կամենալով ընդհանուր դաղափարք տալ

Հային և կրթել նորան այնպէս, որ նա հասկանալ իւր անձը և մարդկութիւնը, որի մի ճիւղը և բաժինը բարկացնում է և ինքը իրրև մարդկութեան որդի, այդ տեղ պիտոյ էր նորան զանազան թէատրոնական գրուածներ եւրոպեական ազգերի մէջ ընտրովի հաշուել առանձնապէս և յարմարել Հայոց լսողի համար: Շիլլերը և Գէօթէն, այո՛ և Շէքսպիրը կարող էին իւրեանց զանազան դրամատիկական գործերով արդիւնաբեր լինել Հայոց թէատրոնական բանաստեղծին, միայն թէ լինէին Հայոց մէջ այն շնորհալի մարդիկը, որ կարողանային առնել այդ բանը, կամ թէ ազգը այս մասին քաջալերութիւն մատուցանէր բանաստեղծին և զարթեցնէր քնած քանքարը: Պայց մեք, որ մեր գրուածների մէջ միշտ պահանջած ենք ազգից մի օրինաւոր բարեկարգ դպրոց, կարող չենք այս տեղ առն մնալ մի հայկական թէատրոնաբեմի մասին, ըստ որում մեր կարծիքը այս է, որ եթէ մի ազգային ուսումնական պիտոյ է կարգով ու ոճով աւանդէր հայկական մանուկին այժմեան ժամանակի ուսումնական դիտելիքը, որ հարկաւոր էին նոցա ամեն մինին անխտիր, ապա թէատրոնաբեմը լինելու էր մի իմացական ու բարոյական դպրոց բոլոր ազգի համար, մեծի ու փոքրի, կնամարդի ու տղամարդի համար, և իրրև մի աղնիւ զբօսանք, ամենայն ախպանքից ազատ, ներդործելու էր դէպուղիղ ամենայն զգացող սրտի վերայ, և որ տեղ կարող էր Հայը իւր սրտի և հոգու համար գտանել այնքան առատ դաստիարակիչ նիւթեր, ինչքան թէատրոնաբեմի վերայ, որ միջամուխ լինելով մարդկային կեանքի բոլոր տհմանների մէջ, ունէր ասելու և տալու անչափ շատ խրատներ մեր ամեն մինին. Թո՛ղ այն բոլոր օգուտները, որ յուսալի են մի ազգային թէատրոնական բեմից մեր Հայերի համար, ոչ մի կարզագրութիւն հասարակաց ուրախութեան և զբօսանքի համար, չունի այն մեծաշուք և բազմամասնեայ խորհուրդը, որ պրած է մի պատշաճաւոր թէատրոնաբեմի մէջ:

Մարդկային բնութիւնը կարող չէ տանել միշտ և անընդհատ պաշտօնական գործերի աստառապանքին. պէտք մարմնաւոր վայելչութիւնքը մեռանումեն, երբ որ դու լցուցանումես նորանց: Մարդս ծանրաբեռնած լինելով շնչական վայելքներից, վաստակած տևողական աշխատութենից, պէտք իւր միշտ ձգտողութենից դէպ ի գործականութիւն չարչարուած, փափա-

դումէ աւելի ընտիր և պատուական ուրախութիւններէ, կամ թէ սանձը կտրած յարձակվումէ վայրենի զբօսանքներէ վերայ, որ շուտով մաշումեն նորա կենսական զօրութիւնը և աւերումեն հասարակութեան խաղաղութիւնը: Քաքքոսեան (գինարբութեան) ուրախութիւններ, կոլծանական թղթախաղութիւն, հազարաւոր այլ տեսակ խելագարութիւնք որ դուրս է ցնկնումէ դատարկապորտութիւնը, անվախճելի են, եթէ օրէնստուն չըգիտէ կառավարել այս հակամիտութիւնը ժողովրդի: Գոլծանական մարդը, որ տէրութեան զանազան պաշտօններէ մէջ մաշումէ իւր կեանքը, վաճառականը որ բոլոր օրը իւր խանութի մէջ կաղ ու կշտոր ձեռքին կամ չափումէ կամ թէ կշռումէ իւր ապրանքը, ոչինչ բանի վերայ չմտածելով, բայց միայն իւր աշխարհական օգտի ու շահի վերայ, կամ թէ վաճառականներէ ժողովարանի մէջ ամբողջ ամիսներ ոտնելով ապրանքի խընդրոդք ու գնողք, և վաճառականը, կրկնումեմ, կարօտ է մի աղնիւ զբօսանքի, եթէ չէր պիտոյ, որ ցամաքէը ու քարանար նորա սիրտը. և հասարակ ժողովրդը պիտոյ է անասնանայ իւր աշխատութիւններէ բեռի տակ, առանց լինելու մի հրապարակական տեղ, ուր կարող էր նա իւր նմանների ընկերութեան մէջ մտանակից լինել մի և նոյն վայելքի և զգալ իւր մարդկութիւնը: Թէատրոնական բեմը մի հրապարակական տեղ է, ուր կապակից է ուրախութիւնը ուսման հետ, հանդիսատը աշխատութեան հետ, զբօսանքը կրթութեան հետ, ուր ոչ մի զօրութիւն հոդու լսված չէ ձեռակերով միւսին, ուր ոչ մի ուրախութիւն ճաշակվում չէ, զրկելով ընդհանուրը: Երբ որ ցաւը մաշումէ մեր սիրտը, երբ որ մի տրտում տրամադրութիւն հոգու թունաւորումէ մեր միայնութեան ժամերը, երբ որ աշխարհը և դրացիները զղուելի են մեզ, երբ հազարաւոր բեռներ ճնշումեն մեր հոգին և մեր կորոզութիւնքը պաշտօնի աշխատութիւններէ մէջ մօտ էին սպառվելու, այնուհետև ընդունումէ մեզ թէատրոնական բեմը. այս ազատահնար աշխարհի մէջ քաղցր երազատեսութեամբ մոռանումենք իրական աշխարհը, որպէս և զգաստանումենք գալձեալ, մեր զգացողութիւնը զարթնումէ, փրկաւէտ կիրքեր դղրդումեն մեր նիրհող բնութիւնը և մղումեն արիւնը աւելի կենդանի շարժողութեամբ: Ծաղուտականը օտարի ցաւը արտասուելով, թեթևացնումէ իւր յատուկ ցաւը: —

Խաղաղասէրը ստանում է համեստութիւն. և նա, որ ապահով էլ կարծում է իւր անձը, ընկնում է հոդսերի մէջ: Ձափից դուրս փախչասկրտ մարդը այնպասրտվելով ստանում է այլասկանութիւն, և տմարդին այս տեղ սկսանում է առաջին անգամը դրալ: Եւ այնուհետև, ի՛նչ յաղթութեան հանդէս քո համար, ով բնութիւն — դու որ այնքան յաձախ ոտնակոխ ես արված և այնքան յաձախ միւսանգամ բարձրացրել ես քո դլուխը. երբ որ մարդիկ ամեն տեսակ ընկերութիւնից և աշխարհից և պաշտօնի՛ վիձակից, բաց ձգելով արուեստակութեան և նորաձեւութեան բոլոր կապանքները, դուրս քաշվելով իւրեանց անձը բազդի հալածանքների միջից և մի ամենաղուարդիչ համակրութեամբ եղբայրացած, միւսանգամ բաղկացնում են մի հատ սեռ, մոռանալով իւրեանց անձը և աշխարհը, և մօտենալով իւրեանց երևոյթին տոհմականութեանը: Ամեն մի առանձնական վայելումի բոլորի հոգեղեայլութիւնը, որ կրկնապատիկ և զեղեցկացած բացատձակվում նորա վերայ հարիւրաւոր աչքերից, և նորա հոդին այժմ տեղիք է տալիս մի հատ գգացողութեան միայն — սյսինքն, թէ մարդ է նա:

Ս. Նալբեանց:

ՄԻ ՉԱՐՄԱՆԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ։

ԿԱՐՈԼՈՍ ՏԱՍՆԵՒՄԻԵՐՈՐԴԻ ՏԵՍԻԼԸ։

Կարոլոս տասնեւմիերորդը, երեւելի Կարոլոս տասերկուերորդի հայրը, Հ՚վեդացոց իմաստուն թագաւորներից մինն էր։ Ա սահմանապրեց շվեդական ազգի իրաւունքը և պարտականութիւնքը, և կարգեց շատ օգտաւէտ օրէնքներ, որոնց հիման վերայ պիտոյ է կառավարվէր իւր տէրութիւնը։ Բայց ի սորանից մի լուսատուեալ, քաջ, աստուածապաշտ, աշնուամիտ մարդ էր նա, և երեսակայութեամբ ոչ այնքան դիւրաբորբոք։ Նա ղեկվեցաւ իւր ամուսնուց, որի անունն էր Ուլրիկա Էլէօնորա. թէպէտև կենդանութեան միջոցին Կարոլոսը նորա հետ խիստ էր վարված, բայց շատ կսկծանքով ցաւումէր նորա մահու վերայ։ Ընդհետև ընկաւ նա աւելի տրտմութեան և յուսահատութեան մէջ, և աշխատումէր վարատել իւր դառն վիշտը անգադար պարապելով տէրութեան գործերին։ Մի անգամ, երբ որ շնչումէր գարնանային անուշ հողմը դէպ ի երեկոյ, նստած էր նա դիշերատղեստով և հողաթափ հագած, վառարանի առաջև, Սթոքհօլմի պալատի սենեկումը։ Նորա մօտ էին և սենեկապետ Պրահէ կոմսը, թագաւորի սիրական մտերիմը որ լուսպէս արժանացել էր նորա ալքայական ողորմութեանը, և Խառմգարթեն բժիշկը, որ խելացի մարդ էր և շատ դժուարահաւատ։ Նա կամենումէր, որ մարդիկ ոչ մի բանի չհաւատան բայ ի բժշկականութենից։ Այն դիշերը, թագաւորը սովորականից դրսս երկար նստեց վառարանի մօտ, և դլուխը խոնարհեցրած նայումէր աճումների վերայ որ ահա շիջանումէին։ Պրահէ կոմսը քանի քանի անգամ Կարոլոսի միտքը ձգեց թէ ժամանակ է հանգստանալու, բայց նա ձեռքը շարժելով ստիպեց նորան ուշադիր լինել։ Խառգաւորը կամաց ձայնով ասաց նորան. «Մի՛ հեռանար, ես դեռ չիմիմ ննջել»։ Պատասխանեցին սկսեցին միմեանց հետ

չէնջել զանազան բաներ, բայց խօսակցութիւնը յառաջ չէինաց։ Պրակէ կոմսը, կարծելով թէ Պարոլոսի վշտի պատճառը ամուսնու յիշատակն է, նայեց նորա պատկերի վերայ, որ կախած էր սենեկումը, և ասաց։ — Ո՛րպիսի նմանութիւն։ Այս պատկերիս վերայ տեսանելի է և մեծութիւնը և հեղութիւնը նորա հոգւոյ։ «Ո՛ւռա է», ասաց թագաւորը բարկացած։ «պատկերահանը կեղծաւորութիւն է արել, թագուհին չունէր այդպիսի գեղեցկութիւն»։ Ա՛յրջը որպէս թէ ամօթ կրելով իւր բարկութենից, վեր կացաւ և սկսեց ձեմել սենեկի մէջ, որ իւր սրտի շըփոթմունքը չէյայտնվին։ Յանկարծ դադարեց նա փողոցի վերայ եղած պատուհանի առաջև։ Գիշերը շատ մութն էր։ Այժմեան թագաւորական պալատը, այն ժամանակ գեռ ևս բոլորովին շինուած չէր, և Պարոլոս տասնևմիերորդը, որ սկսեց շինել նորան, քանակութիւն հին պալատումը։ Թագաւորի սենեակը իսկ և իսկ մեծ դահլճի առաջևն էր, որի մէջ հաւաքվում էին ազգունական անձինքը, տէրութեան մասին եղած առաջարկութիւնը լսելու։ Այս ժամանակիս թուեցաւ, թէ դահլճի պատուհանները պայծառ լուսաւորված են։ Պարոլոսը այս տեսիլը նկատած, շատ զարմացաւ և իսկոյն կարծեց, թէ այն տեղ շրջումէր պալատական ծառաներից մինը ճրագով. բայց ծառան ի՞նչպէս մնաւ դահլճի, որ արդէն վաղուց փակած էր։ Դարձեալ, միտ դնելով լուսի գերազանց պայծառութեանը, կարելի չէր դուշակել, թէ նա յառաջացած լինի մի ճրագի լուսաւորութենից։ Գուցէ թէ մի հրձիգ էր դա. բայց ծուխ չէր երևում, պատուհանները խափուված չէին տեղերից. ամենայն ինչ մի խոր լռութեան մէջ ընկղմած, և այնպէս էր թվում, որպէս թէ դահլճը մի մեծ հանդիսի համար լուսաւորված է։ Պարոլոսը մի քանի վայրկեան անկեց իւր հայեցուածքը լուսաւորված պատուհաններին վերայ, առանց մի բառ արտասանելու։ Պրակէ կոմսը պարզեց ձեռքը զանգակին, որ ծառային դանչէ և իմանայ նորանից լուսաւորութեան պատճառը. բայց թագաւորը դադարեցրեց նորան, ասելով. «Պահիր ևս ինքս դահլճ երթալ»։ Այս խօսքերը բերանից հանելով, երեսի գոյնը թուաւ, և դէմքի վերայ նկարվեցաւ ապրատի, երկիւղածութեան հետ խառն. այնու ամենայնիւ նա հաստատ քայլերով դուրս եկաւ սենեկից։ Նորա քամերից գնացին սենեկապետը և բժիշկը, ձեռքերումը մի մի վառած ճրագ

քունած։ Պալատի տեսուչը, որի մօտ պահվում էր փականքը, արդէն հանգստացած էր իւր քնի մէջ։ Խաւմդալթինը զարթեցրեց նորան, և հրամայեց Կարոլոսի անունով բանալ արքունական խորհրդարանի դահլճի դռները։ Տեսուչը ապշած, հագնվեցաւ շուտով և բերեց մատուց փականքը Թագաւորին։ Կարոլոսը նախ և յառաջ բացել տուեց տեսչին գալերէյը, որ նախասենեակն էր և մտաւ այն տեղ, բայց մեծապէս զարմացաւ, երբ որ նկատեց սենեկի բոլոր պատերը սև նիւթերով պատած։ «Ո՞վ հրամայեց պատել այդպէս այս դահլճի պատերը,» հարցրեց նա սաստիկ բարկութենով։ — Ձգիտեմ, Ձերդ մեծութիւն, — պատասխանեց ահի մէջ ընկած տեսուչը. — վերջին անգամ, երբ որ հրամայեցի սրբել գալերէյը, դահլճի պատերը ծածկած էին կարնոս տախտակամածով։ Թագաւորը շուտ շուտ քայլերով անցաւ համարեա թէ դահլճի մեծ մասը. կոմսը և տեսուչը գնացին նորա յետքից։ Խաւմդալթինը յետ մնաց. նա և վախենում էր միայնակ մնալ, այլև երկիւղ էր կրում ուրիշների հետևից երթալ։ — Յառաջ մի՛ գնացէք, Թագաւոր, գանգեց տեսուչը — Ստուած վկայ, այդ տեղ բնակութիւն չալ ոգիներ։ Ա՛յս ժամանակիս . . . Թագուհու վախճանվելուց սկսած մինչև այսօր . . . . ասում են, թէ նա այս գալերէյի մէջ մեռն է գալիս։

Ողջմի՛ր մեզ Տէր։ «Դադարեցէ՛ք, Թագաւոր», ասաց կոմսը. «մի՞թէ լսելի չէ ձեզ այս դահլճի մէջ եղած զարհուրելի ձայները։ Ո՞վ գիտէ, դրսիսի վտանգների մէջ ձգելու է՛ք ձեր անձը. ամենազթած Թագաւոր,» շշնջեց Խաւմդալթինը, որի ձեռքի ձրագը շիջաւ հողմից. «հրաման տուէք գոնէ բերել այս տեղ ձեր թիկնապահներից քանի մարդ։»

— Կերթս մնանենք, — ասաց Կարոլոսը բարձր ձայնով, ոտք հաստատելով մեծ դահլճի դրան առաջև. ապա դառնալով դէպի տեսուչը, ասաց. — բա՛ց արա շուտով այս դուռը։

Թագաւորը չհամբերելով նորա ծանր շարժուածքին, զարկեց ոտքով դրանը, այնպէս սաստիկ, որ հնչեցրեց գալերէյի տանիքը, կարծես թէ թնդանօթի ձայնով։ Տեսուչը դողդողալով երկիւղից, և չկարողացաւ փականքի ծակը դտանել։ — Ծո՛ւր գնենուր, մի այլ մօտահաս վտանգից աւելի, սարսափելիս դուս, ասաց Կարոլոսը ցնցելով ուսերը։ — Գտնեա դուք, կոմս, բա-

ձեռք այդ դուռը։ «Ո՛ճ թագաւոր» ասաց կոմսը, յետ քաշուելով դռնից. «Հրաման տուեցէք ինձ յարձակվիլ Դանեմարքացոց և Վերմանացոց թնդանօթների վերայ, անյապաղ կը հնազանդվիմ ձեզ, բայց այս տեղ նկրտօրճումն դժուսային զօրութիւններ։»

Թագաւորը քաշուեց, առաւ բանալին տեսչի ձեռքից. «Տեսանուամեմ,» ասաց նա մի տեսակ սրհամարհութեամբ, «որ կարզը հասել է ինձ. պատճառ, ոչ ոք յանձն չառաւ բանալու դուռը.» և մինչև պալատականները կը բռնէին նորա ձեռքը, արդէն նա բաց արեց հասս կաղնեայ դուռը, և ներս մտաւ մեծ դահլճի մէջ, խօսելով այսպէս. «Թո՛ղ Աստուած օգնէ ինձ,» Նորա ուղեկիցները վառվելով հետաքրքրութեամբ, որ վարատեց նոցա սրտի երկիւղը, կամ գուցէ թէ ամօթ կրելով միայնակ Թողուլ Թագաւորը, գնացին նորա քառակից։

Մեծ դահլճը լուսաւորված էր շատ պայծառապէս. նորա պատերի երկայնութեամբ շարուած երեսուն Գուստաֆ Ադոլֆի առած կողոպուտները և Վեղհայի թշնամիների զրօշակները. նոցա մէջ կային նաև շվեդական հեծելազօրքի զրօշակները, որոնք սև քօղերով ծածկուած էին։ Ամառների վերայ բազմած էին ազնուականք, հոգևորականք, քաղաքացիք և գիւղացիք, ամենայն ոք իւր պատշաճաւոր տեղը բռնած։ Նոցա վերայի հատուստները ուրից մինչև գլուխ սև էին. նոցա երեսքը փայլուկին լուսից, բայց Կարոլոսը և նորա ուղեկիցքը չկարողացան որոշել այդ ժողովի մէջ մի ծանօթ դէմք։

Կարճ դահի վերայ, ուսոի Թագաւորը ձառ էր կարդում ժողովին, գրած կար մի արիւնաշաղախ դիակ Թագաւորական հագուստով. նորա ազ կողմում կանգնած էր մի մանուկ, գլուխը Թագաւորդ. ծախ կողմում — մի ուրուական, շքեղ վերարկու ձգած ուսերին, ինչպէս սովորութիւն ունէին Վեղհայի նախկին առաջնորդները մինչև Գուստաֆ Ադոլֆի ժամանակը։ Գահի առաջև նստած էին մի քանի ծանրաբարոյ և խոժոռադէմ մարդիկ, երկար ու սև վերարկուով. նորա, ինչպէս դէմքերից ևս կարելի էր նկատել, դատաւորք էին։ Նոցա առաջև կար դրասեղան, որի վերայ գրած էին շատ մատեաններ և մագաղաթեայ քարտէսներ։ Գահի ու գրասեղանի մէջ տեղը գրած էր ձեղ-

քաճ կռնչ փայտի, որ ծածկած էր սև նիւթով, նորա մօտ դրած և մի տապար (կացին):

Յովհաննէս, թէ ոչ միևնոյն բազմութենից չէր տեսանում Պարոյրսին և նորա երեք ուղեկիցներին: Նրանք որ նստած էին մոտաց դահլճի մէջ, լսեցին նոքա խառնիխուռն շշնջիւն, բայց դորանից մի բառ ևս չկարողացան հասկանալ: Յանկարծ բոլոր դատաւորներից մեծը, ըստ երևութին նախագահը, վեր կացաւ տեղից և երեք անգամ զարկեց ձեռքով բացած գրքին, որ կար նորա առաջև: Նոյն րոպէին լռութիւն տիրեց: Կացուցան նորա հանդիպակաց դռնները, և ներս մտաւ Պարոյրսը և այլ մի քանի մանկահասակ մարդիկ, շքեղապէս հագնուած: Նոքա մտան երկար, վեր ուղղելով գլուխները և հպարտաբար նայելով չորս կողմը. նոցա ձեռքերը կապած էին քամակի վերայ. չուանի ծայրերը բռնած էր մի մարդ, անձռնուի հասարակով և սոդոմագեստով: Յառաջադնաց կալանաւորը, որ ինչպէս երևումէր, աստիճանով ամենից մեծը պիտոյ է լինէր, դադարեց դահլճի միջոցումը մահառիթ փայտի առաջև, և դարձուց հայեցուածքը նորա վերայ հպարտ ու արհամարհական կերպով: Ընդ րոպէին շարժվեցաւ դիակը և նորա վերևից արիւն վազեցաւ, պայծառ կարմիր ու կապուտ գոնով: Մանկահասակ պատանին բնկաւ ծնկի վերայ, և տարածեց գլուխը մահառիթ փայտի կոճղի վերայ: Տապարը շողշողեց օդի մէջ և շառաչիւն հանելով ցած բնկաւ: Վտակի նման վազեցաւ արիւնը մինչև դահը, և խառնվեցաւ դիակի արիւնի հետ. իսկ կտրած գլուխը գլորվեցաւ մինչև Պարոյրսի ոտքը և արիւնով ներկեց նորանց:

Մինչև այս րոպէս լուռ էր նա, աստիճ զարհուրած, բայց այս սոսկալի հանդէսը տեսանելով յաստաջ գնաց նա և գտնուելով դէպ ի այն տղամարդը, որ կանգնած էր վերարկու ձգած հրամանատարի մօտ, հարցրեց համարձակ. «Դեթէ Աստուծուց ես, ասա՛. բայց եթէ Աստուծուց չես, մեղ խաղա՛ղ թող:»

Պարոյրսը պատասխան տուեց նորան յուշ, բայց բարձր ձայնով. «Յադաւորդ Պարոյրս, այդ արիւնը պիտոյ է թափվէր ոչ թէ քո թագաւորութեան օրերին, այլ (այս խօսքերը ասաց ոչ այնքան պարզ) հինգ թագաւորութենից յետոյ: Վա՛յ, հազար վայ Վա՛տպի արիւնին:»

Ա՛յս միջոցիս բազմախօսեն ամբոխի մարդիկը սկսեցին անեւլեւմտանալ, և երեւումէին միայն նոցա ուրուապատկերքը· կամաց կամաց նոքա ևս անհետացան, և լոյսը որ պայծառացնումէր դահլիճը, չհրաւ· ճրագները, որ Կարոլոսի և նորա ուղեկիցների ձեռքումն էին, լուսաւորումէին հին պատառները: Մի քանի ժամանակ լսվումէր մի թեթեւ ձայն, երբեմն տերևների սօսափիւնի նման, երբեմն ևս քնարի կտրած թելերի ձայնին: Ա՛յս ամենը կատարվեցաւ տասն րոպէի մէջ· սև պատառները, կտրած գլուխները, արիւնի հոսանքները որ ներկեցին դահլճի յատակը, սոքա ամենը անեւլեւմտացան ուրիշների հետ միասին, միայն Կարոլոսի հողեթափի վերայ մնաց մի կարմիր բիծ, որ կարող էր նորա միտքը ձգել այս գիշերային անցքը, եթէ խոր ևս չտպաւորվէր նորա սրտի մէջ: Կարոլոսը դառնալով դէպ ի իւր սենեակը, հրամայեց գրել բոլորը, ինչ որ տեսաւ, և թղթի տակ ստորագրել տուեց իւր ուղեկիցներին, և ինքը կնքեց նորան իւր յատուկ կնքով: Ոչքան ևս աշխատեցին թաքուցանել այդ թուղթը, այնու ամենայնիւ կարճ միջոցում հրատարակվեցաւ ժողովրդի մէջ, մինչև նոյն իսկ Կարոլոսի կենդանութեան օրերումը:

Հետ մարդիկ տեսան այն իսկ թուղթը· ուրիշների մօտ կան վկայութեամբ հաստատված օրինակներ: Ա՛յժմ յիշեցէք Գուստաֆ երրորդի մահը, և դատաստանը Ընքարտուէմի, նորա դպրանագործ սպանողի վերայ: Գիակը պատկերացնումէր Գուստաֆ երրորդի անձը· սպանված մարդը էր Ընքարտուէմը, մանումն էր Գուստաֆ չորրորդ, վերջին թագաւորը (շվեդական արիւնից), իսկ ծերունին Օ՛ուդերմանլանդիայի դուքս, թագաւորութեան կառավարիչը:

Թուղթերը, որ հաստատումեն այս զարմանալի անցքը, գտանվումեն այժմուս Պետերբուրգի մէջ: Արդեօք հանդիպելու էի՞ր այն վերոյիշած թագաւորների ժամանակներից մնացած մարդերից մինին պատահել: Ուրաքանչիւր շվեդացի կը հաստատէ ձեր առաջև այս աւանդութեան ճշմարտութիւնը:

Գ· Ց· Պախալեան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԿՈՄՍ ԻՄՄԱՆՈՒԷԼԻ ՕՐԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ։

Նոր տարի — Բեգզադէի նամակը — Տրովատորի բովանդակութիւնը — Բեգզադէի աղջաբանութիւնը — Հայկական Թէատրոն Մոսկվայի մէջ — Սուրբ Մեսրոպի գերեզմանի այցելուի նամակը — Գամառ - Քաթիպայի պահանջողութեան պատասխանը։

Ընցաւ տարին .... անցաւ, և մեք քո հետ, պատուելի ընթերցող, մի տարով ևս ծերացանք ..... Նոր տարու առաւօտը հաղիւ լուսացած, և ահա նոր տարի շնորհաւորողքը դլուխս կոտրելով չափումն փողոցները .... Ես տկար կազմուածքի տէր մարդ լինելով, չեմ կարող մասնակից լինել այդ անխորհուրդ այցելութիւններին, վասնորոյ, տանը նստած, առաւել լաւ եմ համարում մի փոքր մնածել քո հետ, պատուելի ընթերցող, — մնածել նոր տարու վերայ։ Պիտի ասես, ի՛նչ մնածելու բան կայ։ Նոր տարին, նոր տարի է, դա մի այնպիսի օր է, որ ուրախացնում ամենների սիրտը։ Այդպէս չէ։ այդ արտաքին ուրախութեան տակ, արդեօք ո՛րքան տրտմութիւնք և վշտեր կան թաքնված։

Նոր տարին ինքն ըստ ինքեան ուրախութիւն չէ և չէ՛ կարող մեզ ուրախութիւն պատճառել, եթէ չկային մեր մէջ ուրախացուցիչ նիւթեր — մեր բարի գործերը։ Առհասարակ տօները բերումն իւրեանց հետ մի պայմանաւոր ուրախութիւն. այդ օրերում շատ վշտակիր մարդիկ հարկադրվումեն պատշաճից, ուրախութեան քօղ ձգել իւրեանց դառն կամ թմրու երեսի վերայ։ այդ օրերում ուրախ է ցոյց տալիս իւրեան մեծատունը, որի լեղին պատռվումը ներսումը բարկութենից, թէ ինչու՞ համար ձեռքից փախուցել է այս կամ այն օգտաբեր գործը։ այդ օրերում ուրախանում և աղքատը, իւր վերջին դահեկանը դնելով սեղանի վերայ իւր ընտանիքի և զաւակների առաջև, առանց մնածելու, որ գալոց օրի համար չունէր հացի գին անգամ։ Բայց մի ուրախութիւն, որի պատիսութեան և պատճառի մասին չէինք կարող հաշիւ ու համար տալ մեզ, որ և ֆոսֆորի նման մի րոպէ, մի ակնթարթ վառվելով, միւս րոպէում թողնելու էր այրվածքը իւր ան-

պիտան Հոտով — տխրութիւն և վիշտ, այդպիսի ուրախութիւնը երեխայական է և անխել։ Մենք երբէք իրաւունք չունինք ուրախանալու առանց օրինաւոր պատճառների, և այդ պատճառքը էին մեր գործերը։ Մինչև գործած չէինք այնպիսի գործեր, որոնց վերայ արժան էր ուրախանալ, մի սուտ և երեխայական ուրախութիւն, որով պիտի ուրախանայինք, մեզ շատ վնասակար կարող էր լինել, որովհետև մեր ձգտողութիւնը թուլանում ուրախութեան ժամանակ. պատճառ, ուրախութիւնը հետևում լրութենից, իսկ լրութիւնը մահ է զօրութեան և ձգտողութեան համար։ Դորա հակառակ, մեր գործունէութիւնը, ձգտողութիւնը, յաժը և զօրութիւնը այնքան շատանում, այնքան սաստկանում, որքան շատանումեն և սաստկանումեն կարիքը և հարկաւորութիւնքը։ Այս ասածներից երևում ահա, որ նոր տարում ևս, ինչպէս միւս այլ հանդիսաւոր օրերում, իրաւունք ունի ուրախանալու այն մարդը, որ ունէր ստուգապէս ուրախացուցիչ գործեր։ Ուրեմն, սիրելի ընթերցող, մեք քո հետ ասենք միմեանց եղբայրաբար, թէ ի՛նչպէս էին մեր գործերը անցեալ տարում. արդեօք այնպէս, որ հանգիստ խղճմտանքով և պայծառ ճակատով կարող էինք ձեռքերս սրտերիս վերայ դրած վկայել, թէ ինչ որ մեր խելքը կտրումէր, թէ լաւի՛ է, կատարել ենք ինչքան մեր կարողութիւնը կը տանէր, մի բարի գործի մասնակից լինելու, եղել ենք, թէ սորա հակառակ, մեր սրտի և հոգու դատաւորը, այս հանդիսաւոր րոպէումս, մի քանի դատապարտող խօսքեր ունէր մեզ ասելու. Արդեօք անցեալ տարում ճանաչե՞լ ենք մեզ, թէ ո՛վքե ենք, ուրեմն և արժան էր ապրել և մարդկութեան համար, հրաժարվելով եսական անձնասիրութենից։

Ո՞րանց այս բաները քննելու, նոր տարին նոյնպիսի օր է, ինչպէս մեծ պահքի երկուշաբաթին. օրի կանաչը և կարմիրը ա՛չ ոք չէ տեսել մինչև այժմ։ Եթէ իմ մասին հարցանէք, ես կ՚ասեմ ձեզ, որ իմ կեանքը, սկսած այն օրից, երբ յիշումեմ ինձ, մինչև ներկայ րոպէս, գտանվումէ միօրինակ տխրութեան մէջ։ Ինձ ո՛չ մի բան չէ կարող ուրախութիւն պատճառել բաց ի նորանից, որ եղած էր կամ լինումէր մեր տարաբաղդ ազգի օգտի համար. իմ անձնականը և ստացականը այն օրիցն եմ ես ուրացել, երբ աչքս բանալով, բարոյապէս նայել եմ մարդկութեան վերայ։ Այս պատճառով, որպէս իմ մասնաւոր, ինձ միայն վերաբերելի վիշտը չէ կարող աւերել այն ուրախութիւնը, որ ուրախացել էի մի ազգային ուրախառիթ գործի վերայ, նոյնպէս և անձնական ուրախութիւնը չէ կարող փարատել այն ազգային տխրութեան խաւարատեսիլ թանձր ամպերը, որ շատ անգամ նստելով ծանրանումեն սրտիս վերայ։

Ո՛հ, ահա երեսուն նոր տարիք անցուցել եմ ես. նոցանից մինչև քսանը նոյնպես ուրախացուցել են ինձ ինչպես այժմ շատ մարդիկ. բայց այս վերջին տասն նոր տարիքը, ի՛նչ բանների վկայ են եղել իմ հետ միասին, ի՛նչ ողբալի և արտասուելի գործերի ականատես, որ գործվել էին մեր խնայելի ազգի մէջ։ Ո՛րքան մարդիկ, մեզ ծանօթ ու անծանօթ աւարտել են իւրեանց երկրաւոր կեանքը, քանի՛ բարեկամք սուգ և արտասուք կտակել են մեզ։ Քանի՛ քանի անգամ, ցաւելու համար պատահել է մեզ տեսանել այնպիսի մարդիկ, որ անարգանք էին մարդկութեան, որ ցանկանում էին հասանել Հերոստրատեան պարծանքի և Յիշատակի, որ մտածում էին խայտառակութեան սանդուղների վերայով բարձրանալ մինչև անմահ փառքի սահմանը։ Տխուր տեսարաններ. այս տեղ կեղծաւորը, թափելով իւր մարգահաճութեան թմրեցուցիչ թոյնը, մտածում երես գտանել, անուն ժառանգել. այն տեղ, գողը և աւազակը սորան նորան ճաշերով և ընթրիքներով իւր մօտ քարշելով կազմում մի ընկերութիւն իւր հետ, որպէս զի դուրս չմնայ մարդկային ընկերութենից, որպէս զի այդ միայնութիւնը չդառնայ նորան յանցանքի ցուցակ ամեն մի աչք ունեցող մարդու համար։ Այլ տեղ, մարդիկ, վաղուց ահա հոգիքը գրաւ գրած սատանայի մօտ, մեռանելու ժամանակին իւրեանց անունը կտակում են աստղերին. զո՜ւր աշխատանք։ Միւս տեղ, խելակորոյս և խաւարապաշտ մարդիկ փախչում են ճշմարտութենից, այնպիսի կամակոր և անճնաբնադատ զօրութեամբ, որպէս կը փախչէր մի աւազակ իւր մուրճն և խոնաւ բանտից. այլ տեղ, լուսաւորութեան և մարդկային ազատ մտածութեան թշնամիք, դարբնի գործարանք են բացում անտանելի ծանր շղթաներ պատրաստելու և, եթէ կարելի է, բոլորովին խեղդելու մարդկային բանականութեան օրինաւոր ազատ հոսանքը։ Տեղ տեղ, բայց շատ փոքր, երևում են այլ մարդիկ, որ հոգիացած Աստուծոյ շնչով և արձակած իւրեանց ձիւնի պէս սպիտակ թևերը, թռչում են դէպ ի անմահութեան տաճարը..... Թռչում են վերևից, բարձրից, ոտքի տակ տեսանելով այն բոլորը, որոնք իւրեանց նիւթական ծանրութեան պատճառով, արդէն Նիւտոնի օրէնքով կապված էին երկրագնդի կենտրոնի հետ.....

Այսպիսի բաներ պատահում են տարու սկզբից մինչև նորա վերջը։ Շատ անգամ լսվում են օդի մէջ, հարստահարված մարդերի ողբերը և հառաչանքը, նոյն միջոցին և օդը հնչեցնում հարստահարող բռնակալների ուրախական բացագանչութիւնքը։ Յաւիտենակա՜ն աւձթի ժառանգ նոքա, որ ճնշում են անզօրի աչքերից մի քանի արտասուքի կաթիլներ։

Ըսես թէ այս նոր տարում ես առաւել ուրախ եմ, քան թէ անցած նոր տարիներում. պատճառ, նախընթաց տարին անխորհուրդ անցած չլինելով մեր սիրական ազգի համար, նորը բարի բարի յոյսեր խոստանում մեզ: Անցեալ տարում դուրս ցայտեց առաջին անգամ Հայերի համար Հիւսիսային փայլողութիւնը իւր պայծառ ճառագայթքը, անցեալ տարում լայնարձակ ասպարէզ ստացաւ ժողովրդական կենդանի խօսքը, որ է ազգի բարոյական կեանքը և հոգին: Անցեալ տարում երևեցաւ մեր ազգի մէջ մի բանականութեան դատաստան. փառք և պարծանք նորա պաշտօնեաներին. այդ տարում խլըտվեցան մի քանի միտքեր, որոնք մեծ յոյսեր տալիս են Հայերի յառաջադիմութեան մասին:

Այն թանձր և խաւարատեսիլ ամպերը, որ դարերով ահա հաւաքվելով և լեռնանալով պատել էին Հայկական բարոյականութեան հորիզոնը, այսօր, Հիւսիսափայլի ճառագայթների տակ, նկատումենք փարատված. անցան գիշերային մրրիկները, և փիլիսոփայական ծանրաչափը (բարօմետրը) գուշակումէ մի գեղեցիկ առաւօտ: Այս բոլոր բանները վառումեն սրտիս մէջ մի փոքրիկ լապտեր ուրախութեան, որ անշիջանելի կը մնայ և լոյս կը տայ ինձ մինչև անգամ և այն խաւար օթևանի մէջ, ուր նախախնամութեան տնտեսութեամբ պիտոյ է մեռանք սպասելով հրեշտակապետի որոտընդոստ փողահարութեանը:

Պատուելի ընթերցող, ես քո մօտ չեկայ նոր տարին շնորհաւորելու, դորա փոխանակ մտածելով այս բաների վերայ և ձգելով իշատակարանիս մէջ, ահա քեզ ես պատճառ եմ տալիս մտածելու, որ առաւել օգտակար է քեզ, քան թէ իմ երկբկոպէկեան այցելատումնակը որ, անտարակոյս քեզ տանը չգտանելով, թողնելու էի քո նախասենեկում: Այս կարճ յառաջաբանութեամբ սկսանումեմ ահա իմ Ցիշատակարանի տարեկան շրջանառութիւնը, որ հիւանդութեանս պատճառով քանի ամիս արդէն մնացած էր բարձի թողլ:

Առաջին մարդու անունը, որին պիտի պատահէք Ցիշատակարանիս մէջ, Բեզդադէն է: Բեզդադէ չդարձաւ, գլխներիս փորձանք դարձաւ, կարող էք ասել. ինչ պիտոյ է առնել, այսպիսի Բեզդադէնների պարտական ենք ցոյց տալ ամենայն մարդկային կարեկցութիւն, առանց զզուելու և յետ քարշվելու: Անցեալները գրումէ ինձ մի այսպիսի նամակ.

« Պարոն Կոմս Էմմանուէլ,

« Հ նորհաւորեմ քո անբազդութիւնը, որի վերայ ուրախացել « եմ խիստ շատ. Աստուած կեանք տայ դորա պատճառին: Փառք

«Աստուածդ, ալատվեցայ քո ձեռքից, ալատվեցայ քո Ցիշատակարա-
«նից. մնաս բարով յաւիտեան. Աստուած քեզ դատաւոր։

«Բեգլադէ։»

Ոչինչ բան ի հարկէ չէք կարող հասկանալ սորանից, պատուելի ընթերցող, որովհետև ես ևս չհասկացայ. պատճառ, ոչ մի անբաղդութիւն չէր պատահել, որ ինձ վէշտ պատճառելով կարողանար ուրախացնել այդ մոլեգնոյին նախագինէը, (այս է Բեգլադէի ճիշդ սահմանը)։ Բայց մի փոքր համբերութիւն. կը հասկանաք կարդալով Ցիշատակարանիս հետևեալ տողերը, որովհետև ես ևս հասկացայ։

Մի քանի օր սորանից յառաջ, գալիս է իմ մօտ ծանօթներիցս մինը, որին դուք չէք ճանաչում, — վաստորոյ ձեր համար մի և նոյն է, եթէ ես այդ իմ ծանօթը անուանեմ Գուլի - Շամամա, — և այսպէս գալով իմ մօտ պատմում ինձ Գուլի - Շամաման, թէ Պ. Բեգլադէն, անչափ ուրախացել է լսելով, իբր թէ Հօրեղբայրս պատուիրել է ինձ ներս չբերել Ցիշատակարանիս մէջ Պ. Բեգլադէն, կամ նորա գործերը։ Ա՛յդ իրողութիւնը ահա, Պ. Բեգլադէն համարել է ինձ մի մեծ վատաբաղդութիւն, իսկ իւր համար մի ծայրացեալ երջանկութիւն։

Ակնյայտ պիտի իմանալ, որ Հօրեղբայրս ինձ ոչինչ չէ ասել, որովհետև երբէք չեմ ներգործել նորա կամքի ընդդէմ. բայց Պ. Բեգլադէն, իմանալով որ ես տկար մարդերի կողմից բամբասանքի տակ եմ ձգել իմ անձը, եզրակացուցել է թէ հա՛, այս է որ կայ, կամ էմինանուէլի Հօրեղբայրը կը կապէ նորա բերանը։ — Հրամերես, միայն քո ցանկութիւնն էր պակաս այդ բանի համար։

Ապասի՛ր, Պ. Բեգլադէ, ես քո դրանը կը չորեմ մի օր, և ի՛նչպէս նախ և յառաջ գորգս (խալիչա) կը փռեմ և լուսադեղ (персидская ромашка) կը ցանեմ նորա չորս կողմը, որ միջատները չհամարձակվին կենդանի մնալ գորգերի վերայ, թո՛ղ թէ անհանգիստ առնել ինձ իւրեանց եղջերային գարանակալ խայթոցներով.....

Բայց Գուլի - Շամաման չէր եկած իմ մօտ քսութեան համար, չէր եկած, որ պատմէ Պ. Բեգլադէի յիմարաբանութիւնքը, նա մի լաւրի տղայ է և բարի սրտով. նա եկել էր հարցանել ինձանից, թէ ի՞նչ բան է Տրուալտոր ողբերգութիւնը, որի մասին կարդացել էր մի լրագրում, թէ անդադար ձևացնումեն թէատրոնական բեմի վերայ։ Շեղ յայտնի կը լինի Պ. Շահբեգի ինձ գրած նամակից, որ ես շատ սիրումեմ այդ ողբերգութիւնը, վասնորոյ մեծ ուրախութեամբ պատասխանեցի Գուլի - Շամամային, թէ այդ ողբերգութիւնը Պ. Վերդի երաժշտի լոլըր երաժշտական գործերից պատուականն է։

— Բայց միտքը ի՛նչ է, — հարցանում Գուլի-Շամամեն։

« Մի կոմս », պատասխանում եմ, « խարուկի վերայ այրում էր մի ժամանակ մի ցիգան կին, որպես կախարդ և գող։ այս կինը ունենում էր մի դուստր Ազուչենա անունով։ Մայրը կրակի մէջ այրվելու ժամանակ, մահուան դռնում գանչում է և կտակում Ազուչենային, վրէժխնդիր լինել իւր մօր մահի համար։ ողորմելի կնոջ վերջին խօսքերը լինում են Էբէ՛, Էբէ՛։ ուտող ու մաշող կրակը կապում է նորա լեզուն .....

Դուստրը կամենալով կատարել իւր մօր կտակը, գնում է մի օր կոմսի տուն և գողանում օրորոցից նորա որդին, որ տանի այրէ կրակում և դորանով հանէ մօր վրէժը։ Բայց այդ միջոցին Ազուչենայի գրկում լինում է և իւր որդին, և այսպէս, երկու երեխայքը գրկի մէջ գնում է մօտենում խարուկին։ կամենում է ահա ձգել կոմսի զաւակը կրակի մէջ, բայց նայելով անմեղ երեխայի վերայ, խղճահարվում։ գութը յաղթահարում վրիժական հոգին։ Յանկարծ պատկերանում նորա աչքի առաջև նորա մայրը, որ խորովվելով կրակի վերայ, բոցերով ամենևին շրջապատված մեռանում ահա, և կեանքի վերջին շընչումը, այն սոսկալի մահու տառապանքի միջոցին, ողորմելի ձայնով բողոքում դէպ ի իւր դուստրը, յանձնում նորան իւր մահու վրիժառութիւնը ..... Ազուչենայի ականջին դարձեալ լսվում են մօր վերջին խօսքերը Էբէ՛, Էբէ՛։ Խեղճ Ազուչենան համարեա թէ խելակորոյս շտապում այրել կրակի մէջ կոմսի որդին ..... մանուկը մի րոպէում չքանում է բոցերի մէջ։ Բայց ի՛նչ յուսահատութիւն, ի՛նչ ողբալի բան, երբ Ազուչենան զգաստանալով տեսանում է իւր մօտ դրած կոմսի զաւակը ողջ և առողջ։ Ազուչենան խելագարութեան մէջ այրեց իւր սեպհական որդին։ Ինչ պիտոյ է առնէր, թշուառ Ազուչենան անուցանում է կոմսի որդին իւր զաւակի պէս, անուանելով նորան Մանրիկօ, և ո՛չ ոքի չէ յայտնում իւր գաղտնիքը։

Երիտասարդ տղայ դառնալով Մանրիկօն, սիրահարվում է մի Լէոնորա անունով օրիորդի վերայ, որի վերայ սիրահարված էր և կոմսի միւս որդին։ Երկու հակառակորդքը միանգամ հանդիպում են միմեանց Լէոնորայի ներկայութեամբ, կոմսի որդին ահ է տալիս թէ կը սպանէ Մանրիկօին, այն պատճառով, որ համարձակվել էր սիրահարվիլ մի օրիորդի վերայ, որի հետ ինքը, երիտասարդ կոմսը միտք ունէր ամուսնանալու։ Այս խօսքերը տեղիք են տալիս մենամարտութեան։ քաջ և յաջողաշարժ Մանրիկօն բարձրացնում է սուրը, որ սպանէ իւր հակառակորդը, բայց մի ձայն վերևից գանչում է նորան։ « Խնայի՛ր, խնայի՛ր։ »

Ա՛յդ րոպէից կոմսի որդին և Մանրիկոն դառնումեն միմեանց թշնամի։ Կոմսի որդին հրատարակումէ մի սուտ հաւքաւ, որպէս թէ մեռած էր Մանրիկոն, որ Լէոնորան հարկադրվի ամուսնանալ իւր հետ։ Բայց օրիորդը ընտրումէ կուսանաց վանք գնալ. այս բանը Մանրիկոյին յայտնումէ մի նամակով նորա բարեկամներից մինը. նամակը ստանումէ նա այն ժամանակ, երբ մայրը առաջին անգամ իւր կեանքումը պատմումէր Մանրիկոյին իւր և մօր գլխի անցքը։ Մանրիկոն գնումէ դէպ ի վանքը և տեսանումէ, որ երիտասարդ կոմսը խօսումէ Լէոնորայի հետ. այս տեղ Մանրիկոն իւր բարեկամների օգնութեամբ ցանուցիր է առնում կոմսի զինուորքը և ձեռք է բերում Լէոնորան։ Կոմսը հաւաքելով իւր բանակը, մտածումէ պաշարել բոլորովին Մանրիկոյի բնակութիւնը և, խլելով Լէոնորան, սպանել Մանրիկոն։

Ա՛յս միջոցին Ազուչենան ընկնումէ կոմսի զինուորների ձեռք և հարց ու փորձի ենթարկվելով, որպէս կասկածաւոր ցիգան կին, կապվումէ շղթաներով. կոմսը շատ ուրախանումէ իմանալով, որ Ազուչենան իւր հակառակորդի մայրն է։ Երբ Ազուչենային շղթաներով կապած տանումեն Մանրիկոյի տան առաջևից դէպ ի բանտ, որդին տեսանումէ նորան և վազումէ փրկել. բայց և ինքը ընկնումէ թշնամու ձեռք և բանտ է գրվում մօր հետ միասին։ Կոմսը վճռումէ որդին գլխատել, իսկ մայրը այրել կրակի մէջ։

Լէոնորան իմանալով այս մեծակայ մահու վտանգը, գնումէ բանտի մօտ և ողբումէ իւր սիրականի տարաբաղդութիւնը։ Մանրիկոն բանտի աշտարակից յայտնումէ նորան, թէ ոչինչ միւս փափագ չունէր, բայց միայն իւր սիրականին մի հրաժարական ողջոյն տալ։ Ցանկարծ բանտի մօտ գալիս է կոմսը. Լէոնորան խնդրումէ ողորմութիւն, կոմսը հրաժարվումէ փրկել որպէս Մանրիկոն, նոյնպէս և նորա մայրը։ Բայց երբ որ շատ աղաչումէ Լէոնորան, կոմսը ասումէ, թէ միայն սիրու գնով կարող էր Լէոնորան ստանալ նոցա փրկութիւնը։ Լէոնորան երկբայումէ..... բայց մտածելով, թէ իւր պատճառով պիտի մեռանին անբաղդ բանտարկածքը, յօժարումէ։

Իսկոյն գնումէ նա բանտ և յայտնումէ Մանրիկոյին նոցա աղատութիւնը. Մանրիկոն իմանալով ազատութեան պայմանը, մերժումէ որպէս այդ առաջարկութիւնը, նոյնպէս և Լէոնորան, լաւ համարելով մեռանել, քան թէ տեսանել իւր սիրականը երիտասարդ կոմսի գրկում։ Լէոնորան աղաչումէ չ'ատել իւրեան։ Ա՛յս բոլորը լսումէ կոմսը բանտի միւս սենեկից, և, ներս մտանելով այն սենեակը, ուր էին մայր ու որդի բանտարկվածքը, հրամայումէ դահճին գլխատել Մանրիկոն։

Աղուչենան, ջլախտական ամբոխմունքից յետոյ թուլացած լինելով, քնած է այդ միջոցին. Մանրիկոն տանումն գլխատելու..... Զարթնումէ Աղուչենան և չտեսանելով իւր որդին, աղաղակումէ... Նորան ասումեն, թէ տարան Մանրիկոն գլխատելու. Նա գանչումէ կոմսին, դադարեցնել պատիժը, բայց կոմսը յայտնումէ, թէ ամենայն բան վերջացած էր արդէն:

Յետոյհետև ձայն է տալիս Աղուչենան, «իմացի՛ր, կոմս, որ դա քո եղբայրն էր..... իմ մեր վրէժը դուրս է եկած արդէն.....»

Մինչդեռ ես պատմումէի այս բաները, Գուլի-Շամաման աչքերը տնկած նայումէր երեսիս, ժամանակ առ ժամանակ բացագանչելով: Երբ աւարտեցի ես իմ պատմութիւնը, ասաց.— Զարմանք բան, ի՛նչպէս կարողացել է Աղուչենան օտարի զաւակը, մայրական գթով և հնամով մեուցանել իւր որդու պէս. բայց ի՛նչ..... պատահումն այդպիսի բաներ.....

«Ի՛նչպէս թէ պատահումն. դա շատ հազուագիւտ կանացի սիրտ է, որ կարողացել է այդպիսի քնքշութեամբ խնամարկել իւր թշնամու որդին», ասումեմ ես:

— Իսկ ես ասումեմ, որ կան այդպիսի օրինակներ, և չէ պիտոյ հեռի տեղերումն որոնել. մեր մէջ ես կայ մի դորա նման բան:

«Ի՛նչպէս:»

— Դուս գիտես պ. Բեգզադէի աղգաբանութիւնը:

«Ո՛ր տեղից պիտի իմանամ:»

— Լսի՛ր ուրեմն. Բեգզադէի մեր յաղթեան ժամանակ, նորա հայրը ութ ամսական յղի թողնումէ իւր կինը և գնումէ օտար աշխարհ, խիստ պատուէրներ տալով իւր կնոջը զգուշանալ իւր առողջութեանը, որ անփորձ ծնանի մանուկը: Որովհետև աշխարհի երեսին ամենայն բան լինումէ մեր ցանկութեան հակառակ, և ինչ բան աւելի պահպանես, այն բանը աւելի վտանգների տակ է ընկնումէ, այս օրէնքի հիման վերայ ես տիկին Բեգզադէն մի որդի ծնանելով, երկու օրից յետոյ խեղդումէ նորան, անզգուշութեամբ քնելով նորա վերայ մահճի մէջ: Ողբ, լաց, աղաղակ, բայց այդ բոլորը չէին կարող յարութիւն տալ մեռած մանուկին: Մարդ ուղարկելով մանկաբարձի քաղաքից, հրաւիրումէ իւր մօտ և յայտնելով հասած թշուառութիւնը, աղաչումէ նորան մի հնար գտանել, որով կարողանայ ազատվել իւր տղամարդի յանդիմանութիւններից: Մանկաբարձը խոստանումէ գտանել այս բանի ճարը, և փաթաթելով մի կտաւի մէջ մեռած մանուկը դէպուղիղ գնումէ մի աղքատ թուրք կնոջ տունը, որ նոյն օրին ազատվել էր ծննդական ցաւից, երբ ծնել էր և տիկին Բեգզադէն: Մանկա-

բարձը տալիս է նորան մեռած մանուկը և բաւական շատ արծաթ, և առնելով նորա կենդանի զաւակը տանում տալիս է տիկին Բեգզադէին, մեծ վարձ ստանալով այս հնարագիտութեան համար: Ոչ ոք չէ իմանում այս գաղտնիքը և տիկին Բեգզադէն դարմանում Թուրքի զաւակը, որպէս իւր որդին, անուն տալով նորան Բեգզադէ: —

Լսելով այս պատմութիւնը, ասում Գուլի-Շամամային. «Ի՛նչ լաւ պատահեց քո իմ մօտ գալը: Բեգզադէի ինձ նամակ գրելը, իսկ իմ նորա ազգականութիւնը իմանալը.....»

Ինչ և իցէ, ուրիշ շատ խօսակցութիւններից յետոյ, որ առ այժմ անպատշաճ եմ համարում ներս բերել Ցիշատակարանիս մէջ, գնաց Գուլի-Շամաման:

Այժմ արձանագրեմ մի քանի նամակներ, որ ստացել եմ զանազան տեղերից և զանազան պարոններից:

Պարոն կոմս Իմմանուէլ,

«Արտի մեծ ուրախութեամբ յայտնում ձեզ Մոսկվայի նորութիւններից ամենապատուականը: Համալսարանի Հայ ուսանողքը, առաջին անգամ Մոսկվայի մէջ առնին Թէատրոնական բեմի վերայ կատարեցին մի եղերերգական և մի կատակերգական խաղարկութիւնք: Այս բանը պատահեցաւ Յունվարի 27-ին Հայկազն Միքայէլ Ցարութիւնեան Ստեփանեանց մեծարգոյ պարոնի տանը: Մոսկվայի և նկատոր Հայերից մօտ իբր երկու հարիւր մարդ, այր և կին, ներկայ էին այդ հանդէսին, որոնցից ոմանք եկած էին մեքենաբար, լոկ հետաքրքրութեան համար, ոմանք յառաջուց նախապաշարված..... և ոմանք մի ֆանատիկոսական անհոգհուրդ ազգասիրութեամբ, դեռ ևս մտածելով թէ մեծ շնորհ էր, մեծ բարերարութիւն էր ազգի համար, որ այդ պարոնը կամեցել էր ներկայ գտանվիլ այդ հանդիսին..... Այն տեղ էր և ձեր բարեկամ Պ. Բեգզադէն, որ քիմը բերանը թթուացուցած, նստել էր ուրիշ շատերի կարգում: Շինած էր դահլճի ճակատում մի փոքրիկ, բայց նայելով հանգամանքներին, հնարներին և այլն և այլն, բաւական յարմարաւոր բեմ: Ուրախ կամ տխուր հոգի երաժիշտքը, թէատրոնական գործողութենից յառաջ, հնչեցուցին մեր ականջին «Պօտպուրի» կամ կամ ֆեներլյա» ողբերգութեան գեղեցիկ ներածութիւնը, որ Օլեռ երևելի երաժշտի գործն է. և ճշմարիտն ասեմ, երանի թէ այդ ներածութենից յետոյ, դուրս գնացած լինէի դահլճից, որովհետև վերջին բաները, ոչ եթէ շարունակեցին այն

աղնիւ տպաւորութիւնների կարգը իմ հոգու վերայ, այլ բոլորովին տակ ու վերև բերեցին իմ հոգին.....

Պատմական, չորս հատուածով եղերերգութիւնը Աբէսոպէ անուանված, ձևացնում էր Սենը (Պարիզը), որ գնացած Կոստանդնուպոլիս Յունաց Թէոդոս կայսրի մօտ խնդրում էր ողորմիլ Հայաստանին և թագաւոր դնել Արշակի որդի Պապը։ Թէոդոսը թագ է կապում Պապին և իւր զօրքով Հանդերձ ուղարկում Հայաստան, պատերազմ է լինում Պարսիկների հետ. յաղթվումն սոքա և Պապը և Հայաստանը Հանգստանալով, յետ են դառնում Յունաց զօրքը։ Պապը նմանելով իւր հօրը, սկսում անպիտանութիւնք գործել. Սուրբ Ներսէսը յանդիմանում նորան։ Պապը բարկացած, բայց սուտ բարեկամ կեղծաւորվելով, ճաշի հրաւիրում իւր մօտ Սուրբը և գեղում նորան։ Այս էր եղերերգութեան բովանդակութիւնը։ Անհասարակ շատ թոյլ բան և ղուրկ ամենայն բանաստեղծական ճարտարութիւնից, ասես թէ գորա հեղինակը հարկադրանքով գրել է այդ գործը։ Նա ամենայն տեղ, ամենայն րոպէ ղանաղան ազգասիրական խօսքերով աշխատում վարագուրել դրամատիկական գործողութեան պակասութիւնը և չքաւորութիւնը։ Այս ևս պիտի ասել, որ եղերերգական խաղարկութիւնը կատարվեցաւ ոչ այնպէս, ինչպէս գրած էր հեղինակը, այլ Թէատրոնական յայտարարութեան մէջ ասվում, թէ մշակվել է այդ բանը Պ. Փուղինեանցի ձեռքով. այս պատճառով չենք կարող որոշակի դատել, թէ ուր պատկանումն այդ անկատարութիւնքը, հեղինակի՞ն, եթէ մշակողին։ Թէատրոնական բանախօսութեան լեզուն չէր այնքան աղնիւ և մշակված, ինչպէս պիտոյ է և արժան է լինէր, որ ունենար դաստիարակիչ ազդեցութիւն ժողովրդի վերայ։

Ո՛չ մի կին չերևեցաւ բեմի վերայ. այս ասելով չեմ մեղադրում եղերերգութեան հեղինակը կամ մշակողը, այլ կամիմ մատով ցոյց տալ ազգի կեանքի վերայ, մանաւանդ թէ ասիական աշխարհի մէջ, ուր կին մարդը ղուրկ լինելով ամենայն իրաւունքից ընկերական կեանցաղավարութեան մէջ, ի հարկէ կարող չէր և թէատրոնի մէջ հանդէս գալ իբրև գործ ու պաշտօն կատարող անձն։ Անարդարութիւն կը լինէր պահանջել այս տեղ Հայերից այն բանը, որի համար Ասիայի մէջ բուսանելու հողը ևս չէ եղած, այսինքն մարդկային ազատ գործակատութեան հանդէսը։ Երկար ու ձիգ քննութեան արժանի խնդիր է այս, բայց թողնելով այլ ժամանակի, յառաջ տանեմ խօսակցութեանս թելը։

Նթէ քաջ վարժ լինէին ներգործող պարոնները, գուցէ իւրեանց խաղարկութեամբ մի փոքր կենդանացնէին այդ եղերերգութիւնը.

բայց ինչ օգուտ, նոքա ունին իւրեանց պատճառները, — առաջին անգամն է, անփորձ են.... Բայց համեմատաբար և ներող աչքով նայելով, մանաւանդ ուշադրութիւն դարձուցանելով հաւաքված բազմութեան մեծ մասի հասկացողութեան չափի ու աստիճանի վերայ, կարելի է ասել, որ վատ չէր։

Ներերգութեան մէջ, Հայոց ղօրքը, Պարսից պատերազմից յետ գալնալով, երգեց գիւանական Թէոդորոս Եայեան Խատամեանցի «Խնդա այսօր Հայաստան» երգը, որ մի ժամանակ երգված էր Նոր-Նախիջևանում, մինչդեռ քաղաքական վարժատան մէջ Պ. Խատամեանցը և Պ. Տիգրանեանցը քանի անգամ պատճառ տուեցին Հայերին, մի բան տեսանելու կամ լսելու թէատրոնական բեմից մայրենի լեզուով. Բայց Մոսկվայում այդ երգը չ'երգվեցաւ այնպէս, ինչպէս նորա եղանակն էր, այլ Պ. Վերստովսկիու «Ахъ подруженки, какъ грустно!» երգի եղանակով։ Մի բան ևս չէ պիտոյ թողուլ առանց ուշադրութեան. Պ. Չիքվայիձէ վրացի ուսանողը մանկիկ լինելով թէատրոնական գործողութեանը Հայերէն երգելու ժամանակ, իւր վերայ գարձուց մեր մասնաւոր ուշադրութիւնը։

Կատակերգութիւնը «Վայ իմ կորած Յիսուն ոսկի» անունով, մի քանի նկարագիրք մեր Թիֆլիզեցի ժողովրդի կեանքից, Պ. Ալագաթեանցի գործը, բաւական կենդանութիւն տուեց Հայկական լինաւորութեններին։ Շնորհակալութիւն դորա հեղինակին։ Թէև մի նպատակ կամ մի վճռողական կէտ չունէր այդ գործը, ուստի և մեք աւելի յարմար ենք տեսանում նկարագիր անուանել նորան — картины, քան թէ водевиль։ Այդ բանի մէջ ներգործողքը շատ գեղեցիկ ներգործեցին, մանաւանդ ինքը հեղինակը, ասես թէ ծնած կարապետ լինէր.... Միւսերը ևս խիստ լաւ, բայց Պետերբուրգեցի աստիճանաւորի պաշտօնը չափից դուրս անպիտանացուց Պ. Խատիսեանցը, որ եթէ ներգործէր չափի ու սահմանի մէջ, մի փոքր աւելի գեղեցիկ տպաւորութիւն կը թողուր մեր վերայ։

Ընհասարակ շնորհակալութիւն այդ ուսանողներին, նոցա գովանի ցանկութեան համար և թէատրոնական բեմից դաստիարակել աղգը։ Երանի՛ կը լինէր, որ Թիֆլիզի Հայքը օրինաւոր թէատրոնի մէջ ցանկանային տեսանել իւրեանց մայրենի լեզուով խաղարկութիւններ, մանաւանդ ոչ մի տեղ այնպէս յարմար չէ Հայկական թէատրոնի համար, որպէս Թիֆլիզը։

«Թէատրոնին նեղկայ գտանվողներից մինը։»

Ես շատ ուրախացայ կարդալով այս նամակը. փոյթ չէ, որ առաջին անգամ մի փոքր անկարթ է գնացել գործը, ուրիշ անգամ

գուցէ լաւ լինի, և պարոն ուսանողքը աւելի կրթեն և վարժեն իւրեանց անձը այդ հանդիսի մէջ։

Նոյնպէս, սիրելի Հայք, յառաջ, դէպ ի յառաջ. և մի հատ ուսուցը կորած չէ սարի ահագին կազմուածքի մէջ, ամենայն կայծ կարող է բորբոքել մի կրակ, եթէ ձեռնտու լինին հանգամանքների յարմարութիւնքը։ Շատ գեղեցիկ կը լինէր, որ մեր ազգակիցքը Մոսկվայի պէս տեղում ցանկանային տարին մի քանի անգամ քանի մի րան տեսանել և լսել թէատրոնական բեմից, այդ կը լինէր նոցա համար մի նոր ղարկ, մի նոր շարժառիթ յառաջադիմութեան։

Մի այլ նամակից, որ ստացել եմ Օշականից, գրած Դեկտեմբ. 27-ից «Սուրբ Մեսրոպի գերեզմանին այցելու» ստորագրութեամբ, դնում եմ այս տեղ մի քանի պարբերութիւնք։

«Պարոն Կոմս Էմմանուէլ,

.....Ով որ ազգի համար չէ ծներ, ազգի և եկեղեցու անգամ «չէ. ազգին անգամ եղողը ազգի կենդանութեան համար պիտի գոր«ծէ, ինչպէս մարմնոյ անդամք. միայն աշխարհականք չեն ազգի անդամք, այլև հոգևորականք. ուստի և նոքա ևս ազգին համար գոր«ծելու պարտական։ Բայց այսպէս չէ. ազգի ուսումնական զգացմանը «նը համար նոքա չեն գործում. ազգային մարմնոյ բարոյական կեն«դանութիւնը պահելու նոքա գործակից չեն լինում. Սաղմոսի գուբ«ղաները այս մարմնոյն կենդանութիւն չեն տալ. կմ ուրեմն ազգին «մէկ հասարակաց տուն, որ ազգի զգացմանը գործակից եղող հոգևո«րականք այն տեղ ապաստանին բաց ի վանքերէն, որպէս զի Հիւսի«սափայլի մեղադրանաց տակ չլ ընկնին և ընդհանուր հոգևորականու«թեան մէջ չբաժանուին. եթէ կայ, վանքերը միայն են, ուր թէև «անգործակից ազգային մարմնոյ կենդանութեանը, բայց ըստ որում «այն տեղ կը դանեն մնուկդ, վասն այսորիկ և գուբղանների մէջ պիտի «մեռանին։ Թէ որ այս փաստով չէ արդարանան, ինչպէս որ չէ պիտի «արդարանան, այն ժամանակը պիտի ասենք, որ վիճակները եղած հո«գևորականք, գործակից են ազգային լուսաւորութեանը (*), իսկ վան-

---

(*) Թէ ինչ վիճակներում գտնված հոգևորականներ ազգային լուսաւորութեանը գործակից են, այդ մեզ յայտնի չէ. կը ցանկանայինք լսել, թէև շատ սըխալուր դիմադրութիւնք այդ խօսքին վաղուց արդէն շտեմարանված կան հին տարիների Ցիշատակարաններիս մէջ։

Ծան. Կ. Էմմանուէլէ։

«քերինը հաղիւ հաղ առ ձեռն արդեամբ ղերենք կը կառավարեն և «հոգևորականութեան շարունակութիւնը կը պահեն, և եկեղեցւոյ «կառավարութեան ղեկը ձեռքերնին ունին։

«Ո՛ր իշխանը քանի մի վաստակասէր հոգևորական իր հարստու- «թեան թևի տակն առաւ պահեց, որ նա այն ժամանակ, իր անձնական «հոգսից աղատ լինելով ազգային բարոյական զգացմանը և մտաւորա- «կան զիտութեան յառաջ դնալուն գործակից չեղաւ։ Մեր ազգը «այսպէս է, տաղ չգիտէ, պահանջել սորված է.. չի ցաներ, հնձելը «արդարութեամբ կը պահանջէ. ուրիշ տեղ ասածս այս տեղ էլ «կրկնեմ, որ տեղ մեր ազգի մէջ Մեսրովբ մի դարս եկաւ, որ գտած «լինէր իւր համար մի վ.ռամշապուհ. մեր հարուստ իշխաններէն ո՛չ «մինը վ.ռամշապուհ դառնալ չի ուզեր, բայց կուզեն որ ամեն հոգևո- «րականք էլ Մեսրովբ դառնան։ Չէ՛ եղբայր. առանց վ.ռամշապուհ- «ներ ունենալու Մեսրովբներ չի ունենար մեր ազգը. թէ որ իրանք «առանց վ.ռամշապուհ դառնալու կուզեն, որ մենք Մեսրովբ դառ- «նանք, քարէքար ընկնենք ազգը լուսաւորելու, վերջապէս փարպե- «ցու և խորենացու նման մուրացկանութեան պարկը յուսերնիս ձգած «Հայաստանէն պիտի փախչենք.—այս խօսքերը չեմ ասեր հոգևո- «րականները պաշտպանելու, այլ կուզեմ, որ Ձեր ճիշտակարանի «մէջ գրվին։

«Ւնս կը ցանկանայի որ ամեն հոգևորականք, որոնք որ աբեղայա- «կան բառին տակ կը պախարակվին, պատասխան տային ամեն իրենց «վերայ եղած գրաւոր բամբասանքներին, ո՛չ որպէս վիճաբանասէր «կամ խռովայոյզ ոգւով, այլ իրենց փաստերը յառաջ բերէին ար- «դարապէս, եթէ ունէին, թէև սոքա էլ շատ քիչ են, կամ թէ եր- «բէք չկան։ Բայց լռութիւն կը պահեն և լռութիւն պահելով իրը թէ «կարհամարհեն իրենց վերայ եղած խօսքերը. բայց շատ կը սխալին «և ապագային այս լռութիւնը իրենց շատ թանգ կը նստի։

«Ւնձելի լաւ էր պատասխան տալ և բամբասանքի առիթները ի- «րենց վերայից վերցնել, քան թէ լռութիւն պահելով ազգի մեծի և «փափուկ սիրտը առհասարակ իրենցից կտրել, որ ապագայի մէջը կը «նշմարուի։ Վասն զի հիմա մեր ժողովուրդն էլ իննևտասներորդ դա- «րու մէջ կերթայ, բայց մեր հոգևորականայ գատողութիւնը դեռ ևս «ութնևտասներորդ դարու ազգային յառաջադիմութեան վարդապե- «տութիւնը կընդունի, որով ազգը հոգևորականներէն երկու դար յա- «ռաջ անցած կերթան. այսքան երկարութեան մէջ արշաւել, ազգի «յետևէն հասնիլ չի՛ կարելի, թէ որ հոգևորականք իրենց անգոր-

« Ծուխիւնը և դատողութիւնը չի փոխեն· — ինչպէս որ քաջափորձ « եմ, Տաճկաստանի մեր Հոգևորականներն էլ այս դրութեան մէջն են։

« Ընդ այ բարեկամ, այս դրածներս կամ այսպիսի բաներ, անպա- « կաս արէք Ձեր Ցիշատակարանից, մինչև որ աղգերնուս աչքը բացվի· « և ես պիտի ուղարկեմ Ձեզ Հետ ղՀետէ աղգային Հանգամանաց շատ « նիւթեր·····»

Այսքը Մեսրոպի գերեզմանի այցելուի նամակը ձգելով Ցիշատակարանիս մէջ, կատարումեմ իմ պարտականութիւնը։ Ինչպէս երևումէ, այդ անունի տակ վարագուրվումէ մեղ անծանօթ մի Հոգևոր անձն· ով կամի Թող լինի նա, ես կատարեցի ահա նորա սրտի ցանկութիւնը, ըստ որում նորա խօսքերից երևումէ, որ մի բարեՀոգի, աղգասէր, այլև ճշմարտապես աղգի վերայ սիրտ ցաւեցնող մարդ է։ Աստուած տայ, որ շատանան այդպիսի Հոգևոր անձինք և թէև ու թիկունք դառնան մեղ, որպէս և մեք նոցա։

Ղարձեալ մի այլ նամակ ստացայ Պ. Գամառ-քաթիպայից (Ս. Պետերբուրգից) որ մեղադրումէ ինձ, թէ ինչու՞ Համար նորա ուղարկած մի ոտանաւորը չէ ընկել Հիւսիսափայլի մէջ, և թէ ինչու՞ մի գրաւոր տեղեկութիւն չեմ տուել նորան չտպվելու պատճառի մասին։ Պիտի իմանալ, որ ես Հիւսիսափայլի Հրատարակողը չեմ, և ոչ նորա գլխաւոր աշխատակիցը· ես պատասխանատու եմ այն բաների մասին, որ պիտի ընկնէին Ցիշատակարանիս մէջ։ Իսկ Ցիշատակարան ձգել ամենայն բան, նոյնպէս չեմ կարող, ըստ որում, ինչպէս վաղուց յայտնել եմ ձեզ, պատուելի ընթերցողք, մի Հօրեղբայր ունիմ, որ միշտ քննումէ իմ բոլոր առանձնական գրուածքս անգամ։

Իմ անունով ուղարկված, բայց անմիջապէս Հիւսիսափայլի մէջ տպվելու գրուածները ես ուղարկումեմ Պ. Հրատարակողին, ինչպէս Պ. Գամառ-քաթիպայի և մի քանի նոր ոտանաւորքը, որ վերոյիշեալ նամակով ուղարկել էր ինձ· աւելի ոչինչ չեմ կարող առնել, իմ ձեռքումի ոչինչ չկայ։ Իսկ ինչ որ վերաբերվումէ Ցիշատակարանիս, այո՛, այդ այլ բան է, այդ տեղ ես իմ Ցիշատակարանի անմիջական տէրն եմ· միայն խնդրումեմ ամեն մի մարդուց, որ խնայեն իմ Ցիշատակարանը և բան ուղարկելու ժամանակ, աշխատեն այնպիսի բան ուղարկել, որ և իւրեանց, և ինձ և պատուելի ընթերցողներին ժամանակի զուր կորուստ չլինի։

ՄԱՀԱԿՈՒՅՑԿ

ԱԲՐԱՀԱՄ ՊՕՂՈՍԵԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԻ։

Մի տխուր բան է Հիւսիսափայլի համար բօթաբեր լինել իւր պատուելի հասարակութեանը այս կամ այն Հայ մարդու կեանքի վախճանի մասին. բայց և այնպէս, պարտականութիւն է համարում օրագիրը, որպէս ազգային գործարան, ազգի ուրախութիւնը և տրտմութիւնը երևեցնել իւր էջերի վերայ։

Կ՚ուրերում հասաւ օրագրի տեղեկութեանը, որ Նոր-Նախիջևանեցի Աբրահամ Պօղոսեան Պօղոսեանց փաստաբանը, կարճաժամանակեայ, բայց սուր հիւանդութեամբ, աւարտել է իւր երկրաւոր կեանքի ասպարէզը։ Հանգուցեալը քաջ ուսած լինելով Ռուսաց լեզուն, Նոր-Նախիջևանի քաղաքական դպրոցի մէջ, մնաւ ծառայութեան համար Նախիջևանի Հայոց Մագիստրատը, ուր ամենայն ժրաջանութեամբ պարապելով գործական իրաւաբանութեան, առանց մի ուսուցչի առաջնորդութեան հասաւ մինչև այն աստիճան օրէնագիտութեան, որքան հնարաւոր էր մի շատ աշխատասէր, բայց հիմնաւոր կրթութիւն չըստացած մարդու։

Խաւական տխուր անցուցել է այդ մարդը իւր կեանքը։ Անգադար տարուբերվելով տհաճութենների մէջ, վերջապէս հարկադրվեցաւ թողուլ Մագիստրատի ծառայութիւնը, այնուհետև պարապելով մանաւոր մարդերի դատաստանական գործերով։ Մի այսպիսի գործի համար գնացած լինելով Տագանրօգ, ստանում մի սուր հիւանդութիւն և նախընթաց տարու Հոկտեմբերի 14-ին առաւօտեան 5½ ժամին աւարտում իւր բաղմաշխատ կեանքը։

Հանգի՛ստ Նորա հոգուն յաւիտենական. իսկ Նորա յիշատակը երկար ժամանակ անմոռանալի կը մնայ Նախիջևանի մէջ, որովհետև նա շատ անգամ իւր բարի բարի խորհուրդներով օգտակար է գտանված շատերին։

Յանկանում ենք, որ բարեմիտ մարդիկ, յիշելով այդ Նորա ծառայութիւնքը, հանաւանդ Նոքա ..... Նոքա ..... որոնց համար հանգուցեալը եղած է մի մխիթարիչեայ սիւն ..... խնամք ունենային Նորա որբացած զերդաստանի վերայ, ըստ որում կարծում ենք, որ գըտանվի աղքատութեան մէջ։ Ասածներիս ապացոյց կարող է լինել

այն, որ հանգուցելու հիւանդութիւնը և թաղումը ապաստան էր մնացած Նոր-Նախիջևանեցի բարեպաշտ մարդերի հոգաբարձութեանը, որպիսի էին Մերկեան Ղուկասեան Պապովեանցը և Մինաս Գէորգեան Շապօշնիկեանցը, որոնք Տաղանրօգում նորա հետ գտանվելով և շարժվելով քրիստոնէական կարեկցութեամբ, իմաց էին տուել Նախիջևան հանգուցելու գերդաստանին, և քահանայ ընդրելով հատուցել էին իւրեանց հոգեկից բարեկամութեան պարտիքը։

Ը. Նալբանդեանց։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Գնագիտական ճառեր, այսինքն ընութեան օրէնքների և դոյա դարձագրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր գանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, հասարակաթօս Աստեղաբաշխութեան, ջի հայի, Հանքաբանութեան և Փիզիօլօգիայի վերայ· այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի լոյսերի, նոցա մնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Նարոյական, դեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և ղգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւնից· այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի· Հացէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ, Декабря 10-го, 1858 года.
Цензоръ В. Бекетовъ.